

ՊԱՏՐԻԿ Ա. ՍԵԼԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ք
Ս
Ա
Ն
Տ
Ա
Ր
Ի
Ն



9(47.925)
4-35

Հրատարակութիւն
ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԻԻ ԵՈՐԲ — 1940

9(47.925)
u-35

ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

5 OCT 2011

ԹԻԻ 4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

ԳՐԵՑ՝

ՊԱՏՐԻԿ Ա. ՍԵԼԵԱՆ



Հրատարակութիւն

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԻԻ ԵՈՐԲ — 1940

30 07.2013 2013

15222

ՓՈՒԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

ՆՇԱՆԱԻՈՐ ԹԻՆԵՐ

Ձեռնարկելով այս գրքոյկի պատրաստութեան, իմ նպատակն է եղած Ամերիկահայութեան գոնէ մասամբ ներկայացնել այն հոյակապ նախնականները, զորս Հայաստան կատարեց կեանքի բոլոր մարգերու մէջ՝ հորհրդային իշխանութեան 20 տարիներուն:

հորհրդային Հայաստանի 20 տարւա մեծաւանկ նախնականները հարիւր էջնոց գրքոյկի մը մէջ սեղմեցնելու յաւակնոտութիւնը չունիմ բնաւ: Այս գրքոյկը կարող է հարեւանցի գաղափար մը միայն տալ Հայաստանի պանծալի վերածննդեան ՔՍԱՆԱՄԵԱԿԻ մասին:

Պէտք է խոստովանիլ, սակայն, որ նոյնիսկ 112 էջնոց այս գրքոյկը պատրաստելը, հանդիպեցաւ խոշոր դժարութիւններու: Գրքոյկը պատրաստելու համար պէտք է եղածին չափ ազբիւրներ չկային: Օգտագործեցի Հայաստանի կոմունիստ կուսակցութեան Քարտուղար Գ. Յարութիւնեանի, Հայկական հորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Նախագահ Մացակ Պապեանի գեկոյցները, «ՍՈՎԵՏՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ»ը հորհրդային Միութեան Ձեռագիրքը, ինչպէս նաեւ բազմաթիւ յօդւածներ եւ լուրեր, որոնք երեւցած են Հայաստանի կառավարութեան պաշտօնական օրգան «հորհրդային Հայաստան» մեծ օրաթերթի, «Մոսկվա Նիւզ»ի եւ Մոսկվա հրատարակած շարք մը պարբերաթերթերու մէջ:

հորհրդային անւանի գրող իլինը կըսէ, թէ թւերը պատկերներ են: Երբ կըսենք 240 արդիւնաբերական ձեռնարկութիւն, 300,000 աշակերտ, 50,000,000 թերթի բաժանորդագրութիւն, 37,000,000 գիրք՝ ընթերցողի աչքի առջեւ կուրագծուին հոգեթով պատկերները մեծաւանկ իրականութեան:

Այս գրքոյկով աշխատած եմ տալ մեծ մասամբ թւեր, կարելի է եղածին չափ վերջին թւերը հորհրդային Հայաստանի մասին:

Յիրաւի ատոնք **ՆՇԱՆԱԻՈՐ ԹԻՆԵՐ ԵՆ:**

Բայց այնքան կենսունակ է հորհրդային իրականութիւնը, այնքան սրարշաւ է հորհրդային առաջխաղացքը, որ այն թւերը, որոնք այսօր **ՆՇԱՆԱԻՈՐ ԵՆ**, վաղու մեծ նախնականներու բաղդատմամբ կը հառնան շատ աննշան: հորհրդային թւերը տարւէ տարի կանին աստեղագիտական համեմատութեամբ:

Գօտեպնդւած այդ հաւատքով, գաղութահայութիւնն այսօր անխառն հրնւանքով կը դիմաւորէ Հայաստանի հորհրդայնացման, Հայ ժողովրդի պանծալի ազգային վերածննդեան 20-րդ յօբելեանական տարեդարձը:

ՊԱՏՐԻԿ Ա. ՍԵԼԵԱՆ



9/1245-84



ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԹԻ ԱՐՁԱՆԸ Գործ՝ Օ. ԲԵՋԱՆԵԱՆԻ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԵԱՆ

ՊԱՆԺԱԼԻ ԱՐԵՒԱԾԱԳԸ

Բազմաչարչար եւ հալածական Հայ ժողովուրդը, որ դարերու ընթացքին անհաւասար պայքար է մղեր — ձեռք բերելու համար ԱԶԱՏ ԱՊՐԵԼՈՒ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ՀԵՏԱՊՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ, ձեռք բերելու համար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՀԱՂԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԻՄՅՐՈՒԹԻՒՆ, երկու տասնեակ տարի առաջ վերջնականապէս թօթափեց օտար տիրակալներու եւ հայրենական կեղեքիչներու լուծը:

Այդ մեր ժողովրդի ազգային վերածննդեան պանծալի արեւածագն էր:

Այդ մեր ժողովրդի պատմութեան նոր դարազլի սկիզբն էր:

* * *

Հայ ժողովուրդը, օտար բռնակալներու եւ հայրենական կեղեքիչներու դէմ իր դարաւոր պայքարի ողբսականը պատմած է «Սասունցի Դաւիթ» հրաշալի դիւցազնավէպի մէջ:

ՅԱՍՄԱՆ ՕՐԸ

Ճիշտ է, որ Դիւցազնավէպը չի վերջանար Հայ ժողովրդի յաղթանակով: Որովհետեւ, Սասնա Ծռերու Պալատի Խալիֆներու դէմ մղած պայքարով չի վերջանար Հայ ժողովրդի ազատամարտը:

Ճիշտ է նաեւ, սակայն, որ հազարամեա մեր դիւցազնավէպը կը վերջանա հանուր մարդկութեան վերջնական ազատագրութեան խոստումով:

Հայ ժողովուրդը կը յառաջադրէր իր ուժերը հաւաքել եւ տապալել անարդ թշնամին՝ ՅԱՍՄԱՆ ՕՐԻՆ:

Հայ ժողովուրդը կը հաւատար, որ Յասման Օրին, բռնակալներու կողմէ արդէլափակած Սասմա Մհերը դուրս պիտի դար էր քարայրէն, եւ քաշած Թուր Կայծակին՝ պիտի առաջնորդէր ապրտամբ ժողովուրդը դէպի վճռական յաղթութիւն:

Ինչպէս անչէջ էր Հայ ժողովուրդի սրտի մէջ ազատութեան հուրը, այնպէս ալ անմեռ էր Սասմա Մհերը:

Հայ ժողովուրդը Մհերի պատգամը հաղորդեք էր սերունդէ սերունդ որպէս կտակ եւ Յասման Օրու կրակը անչէջ պահած էր սերունդներու կրծքի տակ:

— Մշակ աղբեր, այդ մեծ օրը չէ շատ հեռու:
Տե՛ս, վառում է բոցակարմիր օրը ցաւման.
Խորտակում են հորսն ու մշակն իրենց շղթան.
Երգ է գնգում կուի ելնող հագարների,
Բագմաչարչար եւ անբաժին ամբոխների:
Հագնեմ գրահէ շապիկն իմ վառ,
Մէջքիս կապեմ պողպատ կամար,
Հագնեմ գրահէ մոյկը ոտին,
Գլխիս դնեմ քաղալս կոտին,
Ամուր կապեմ քամբ սադափին,
Ելնեմ, հեծնեմ հրեղէն ձին
Ձեռքիս առնեմ Թուր-Կայծակին
Ահեղ կուի ելնեմ կրկին.
Որ միաբան վարեմք մեր գոռ մարտը վերջին
Յաղթանակի եւ ցնծութեան երգի միջին.
Որ փլատակ անեմք հին կարգն ու հին աշխարհի
ժողովրդի նոր, երջանիկ կեանքի համար:
Եւ մեր քանդած հին աշխարհի, գրկանքի տեղ
Շինեմք պայծառ մեր նոր աշխարհի հրաշագեղ.
Ուր մշակի դաշտերը ծով լինեն բերքի,

Յորեմն՝ ընկոյզ, գարին՝ մասուր, կորեկն՝ ոսկի:
(Կ. ՄԻՏԱԼ)

* * *

Նոյեմբեր 29-ը եղաւ Հայ ժողովրդի Յասման Օրը:
Ընդամենը երկու տասնեակ տարի առաջ, Նոյեմբեր 29,
1920-ին, Հայ ժողովրդի հրաշափառ այդ տեսիլքը իրականացաւ:

ՆՈՅԵՄԲԵՐ 29

Անմոռանալի այդ օրը, ապտամբ
ժողովուրդը ծունկի բերաւ իր
կեղեքիչներն ու տեռորիստները

եւ Հայաստանը յայտարարեց Խորհրդային:

Դարերու ընթացքին շատ զուլումներ է տեսեր Հայ ժողովուրդը:
Բայց, ինչպէս ապառաժը ալեկոծ ովկիանոսի ափին՝ մնացեր է անսասան:

**ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՆԵՏՔԵՐՈՎ**

Դարերու ընթացքին Հայաստանն ասպատակած են Հոռոմն ու Բիւզանդիոնը, Արաբիան ու Մոնղոլիան, Իրանն ու Թուրանը: Չկան բռնակալներ, որոնք իրենց սուրը կոխած չըլլան Մերձաւոր Արեւելքի չքնաղ դասեր, Հայաստանի կողին:

Հայ ժողովուրդը դերի վարելու իրենց բարբարոսական ճիգի մէջ, վատանուն այդ տիրակալները իրենց ամբողջ կատաղութիւնը թափեք են մեր արեւափառ երկրի վրա, հիմնայատակ կործանեք են դայն, բնաջնջեք են դիւղերու, աւաններու եւ քաղաքներու ամբողջ բնակիչները՝ հպատակեցնելու համար իրենց բռնաւորի կամքին աննւաճ մեր ժողովուրդը: Թշնամին երբեմն յաջողեք է նւաճել անմատոյց դադաթները մեր լեռներուն, բայց չէ կրցած նւաճել Հայ ժողովրդի ըմբոստ ու ազատատենչ ոգին, որ մնացեր է աննւաճ՝ Արարատի ալեփառ կատարներու պէս:

Պատմութիւնը Հայ ժողովրդի նկատմամբ եղած է առանձնապէս դաժան: Բայց, հակառակ այդ դաժանութեան, տաղանդաւոր Հայ ժողովուրդը քանի անգամ յաջողած է ստեղծել պետութիւն, կամ անկախ բոյներ նւաճած, կործանւած Հայաստանի մէջ, կատարել ապշեցուցիչ մեծագործութիւններ եւ, անգամ ամենաճշմարտամային շրջաններուն, ստեղծել մշակոյթի օճախներ եւ մեծարժէք մշակոյթ:

Պատմութիւնը Հայ ժողովրդէն պահանջած է անթիւ զոհեր: Եւ Հայաստանի հայրենասէր ուստերքն ու դասերքը անվարան տրւած են իրենց կեանքը, որպէսզի Հայ ժողովուրդը տիրանա իր անկախութեան:

* * *

Իր պատմութեան վերջին շրջանին, Հայ ժողովուրդն ապրեք է, Յարական երկ գլխեան արծւի, Սուլթանական եաթաղանի եւ դաշնակ մատուցերի սուերի տակ, ենթակա անվերջանալի կոտորածներու, անասելի հալածանքներու, անխիղճ կեղեքումի եւ ալանի ու թալանի:

ՄԱՌԻՋԵՐԻ ՍՏԻԵՐԻ ՏԱԿ

Դաշնակ պարագլուխները Հայ ժողովրդի պատազբական պայքարը ծառայեցուցին Դաշնակներու, առաջին հերթին Յարիզմի աշխարհակալական նպատակներուն: Անոնք իրենց անվերջանալի արկածախնդրութիւններով կործանման եզրին հասցուցին մեր երկիրը:

Դաշնակ պարազուլուինները, որոնք կը դեկավարէին Յարիզմի հովանաւորութիւնը վայելող վաշխառու Հայ առեւտրականութեան շահերով, վճռական բողոքներ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան օրերուն, երբ հնչած էր Յարի եւ Սուլթանի լուծը միանգամայն թօթափելու ժամը, դաւաճանեցին Հայ ժողովրդի ազատագրութեան: Անոնք Անգլիական գրաւման բանակներու օչնութեամբ, ճգմեցին նորաստեղծ ժողովրդական կառավարական օրգանները տեղերու վրա, եւ Հայաստանը բերին մատուցելի սուերի տակ:

Հայ ժողովրդին շատ սուղ արժեք այդ դաւաճանութիւնը: Դաշնակ պարազուլուինները Պաքուի հերոսամարտի ատեն կողմնորոշեցան Աղբրեջանի Մուսավաթիստներու հետ, որպէսզի վերջինս ոչնչացնէր Ստեփան Շահումեանի, Ֆիդէթովի, Չափարիձէի, Ազիզբեկովի եւ Անաստաս Միկոյեանի գլխաւորութեամբ ստեղծուած Պաքուի Խորհուրդը:

Պաքուի հերոսամարտի տեւողութեան, դաշնակ պարազուլուինները արդիւնեցին դաշնակցական զինեալ ուժերուն կրակել Մուսավաթիստ ջարդարարներու վրա: Եւ երբ հերոսամարտը վերջացաւ Պաքուի Խորհուրդի յաղթանակով, անոնք պարտուած Մուսավաթիստները պահեցին իրենց տուներու մէջ, որոնք յետագային միջ-ցեղային ջարդ կազմակերպեցին, որուն զոհ գացին հազարաւոր Հայեր:

Անոնք, միացած Մենշեվիկներուն եւ Սոցիալիստ Յեղափոխականներուն, պատրաստեցին Պաքուի Խորհուրդի անկումը, հրաւիրեցին Անգլիական գրաւման բանակը Անգրկովկաս եւ իրենց ստորին դերը կատարեցին Անգլիացիներու ձեռքով Ստեփան Շահումեանի եւ իր 25 ընկերներու վայրագ սպանութեան մէջ:

Անոնք մասնակցեցան սպանութեան այն մարդու, Ստեփան Շահումեանի, որուն վիճակած էր կազմակերպել Ռուսական Բանակի մնացորդը, ետ մղել Թրքական արշաւող բանակը Անգրկովկասի սահմաններէն եւ Արեւմտեան Հայաստանի կարեւոր մասերէն եւ հնարաւոր դարձնել, որ Հայ գաղթականները վերադառնան իրենց հայրենի երկիրը՝ հաստատելու համար Հայաստանի առաջին ժողովրդական կառավարութիւնը:

Հայաստանի մէկ մասը մնաց Թրքական երկիւղալի տիրապետութեան տակ եւ Հայ գաղթականները հնարաւորութիւն չունեցան վերադառնալու իրենց հայրենական հողերը:

Անոնք հարիւր հազարաւորներով փճացան դաշնակներու սովահարութեան վարչաձեւի տակ:

Աւելին: Դաշնակները, անսալով Անգլիայի ցուցմունքներուն, աղետալի եւ անխմաստ պատերազմ սկսան Թուրքիայի դէմ, եւ երբ Հյաջողեցան յաղթանակներ ապահովել, այդ հանդամանքը ալ աւելի խայ-

տառակեց դաշնակ վարչաձեւը յաշտ ժողովրդական զանգաւածներու: Անոնք երկիւղ կրելով յեղափոխական վճռական շարժումներէն, Կարսը, Արտահանը եւ Ալեքսանդրապոլը (այժմ Լենինական), տւին Թուրքիային, վաստկելու համար անոր բարեկամութիւնը եւ իրենց երիցս անիծեալ տիրապետութիւնը պարտադրելու Հայաստանի ժողովրդին, Թրքական սելիներով:

Դաշնակ վարչաձեւը, որ տակաւին 1920-ի Մայիսին Հայաստանի մէջ ժողովրդական ապստամբութիւնը խեղդած էր արեան մէջ, դորձադրելով անասելի նախճիրներ, 1921-ի Փետրվարին չվարանեցաւ Քեաղիմ Գարապէտիին սրտաուռ հոջ ուղղել Թրքական յօրաբանակը բերելու Երեւան՝ ճգմելու իրենց համար ատելի Հայ ժողովուրդը:

Այդ ամենը չօգնեցին դաշնակ պարազուլուիններուն:
Այդ ամենը խայտառակեցին դաշնակ պարազուլուինները:
Այդ ամենը դաշնակցութիւն կուսակցութիւնը կղզիացուցին ժողովրդական զանգաւածներէն, դատապարտեցին անվերջանալի քարանձիխայի եւ դանդաղ, հոգեմաշ քայքայման:

* * *

Ոչ Անգլիական իմփերիալիզմի խոստումները, ոչ ալ Վիլսոնի Հայաստանի սահմանները գծելու պատրաստակամութիւնը յաջողեցան հայ ժողովուրդը ետ կեցնել Հայաստանը Խորհրդային

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲՈՆԵՑ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ

հռչակելու իր որոշումէն:
«Փոքր ժողովուրդները, յիբալի, զրկւած բանւորներ եւ ագահ ու անխիղճ իմփերիալիստական հօգր պետութիւնների քանապարհների վրա»:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Հայ ժողովուրդը վճռեց դուրս դալ նաճողական պետութեանց արհաւիրացի ճանապարհէն եւ բռնեց Խորհրդային լուսաւոր ուղին, ազատ, երջանիկ, խաղաղ, մշակութային եւ լիառատ կեանքի ուղին. եւ Հայաստան, արցունքի հովիտը, լեցւեցաւ ցնծութեան աղաղակներով, դարձաւ Խորհրդային կենսախինդ ծաղկոցը Մերձաւոր Արեւելքի նախադուան վրա:

«Ճանջուած եւ բաղձաշարշար Հայաստանը, որ Դաշնակիցներու եւ դաշնակներու ողորմածութեամբ դատապարտուած էր սովի, քայքայման եւ գաղթի, բոլոր բարեկամներու կողմէ խաբւած Հայաստանը ներկայիս իր փրկութիւնը գտաւ այն բանով, որ իրեն յայտարարեց Խորհրդային երկիրը:

«Ոչ Անգլիայի, որպէս «Հայկական շահերու դարաւոր պաշտպանի», կեղծ հաւաստիացումները, ոչ Վիլսոնի տխուհուհակ 14

կէտերը, ոչ ալ Ազգերու Լիկայի լայնահաղորդ խոստումները Հայաստանի վառապարման «մանգատի» մասին չկրցան եւ չէին կրնար վերկէ Հայաստանը կոտորածէն եւ Ֆիզիքական ոչնչացումէն:

«Միայն Խորհրդային Իշխանութեան դադարաւորն է, որ խաղաղութիւն բերաւ Հայաստանին եւ տաւ ազգային վերածննդի հնարաւորութիւն:

«Թող գիտնան բոլորը, որոնց որ հարկաւոր է գիտնալ, որ այսպէս կոչուած Հայկական «հարցը», որու վրա ապարդիւն գլուխ են ջարդեր իմփերիալիստական գիւանագիտութեան ծեր գայլերը, ի վիճակի եղաւ միայն լուծել Խորհրդային Իշխանութիւնը»:

ՍԹԱԼԻՆ

Էնգելսն ըսած էր.—

«Իմ անկեղծ կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրումը Տանիկներէն եւ Ռուսերէն հնարաւոր կըլլա այն պահուն, երբ խորտակի Ռուսական Յարիզմը»:

* * *

Դաշնակ արկածախնդիր պարագլուխները այդ չհասկցան:

Անոնք մերժեցին ձեռք մեկնել Ռուսաստանի մէջ ցարիզմի տապալման համար պայքարող ուժերուն:

ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՒՏԵԱԼ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Անոնք, պատերազմէն առաջ, կոնակէն դաշունահարեցին այդ ուժերը:

Անոնք, պատերազմի տեւողութեան, ծառայեցին Յարիզմի նըւաճողական ծրագիրներուն Մերձաւոր Արեւելքի մէջ:

Անոնք, պատերազմէն յետո, Սպիտակ Բանակայիններուն միացան՝ Յարիզմը վերահաստատելու համար Ռուսաստանի մէջ, համաձայնելով Հայաստանը վերստին ենթարկել Յարական ինքնակալութեան լուծին:

Անոնք Խորհրդային «աւելով դէն շարուելէ» յետո, արտասահմանի մէջ, միացած Ռուս Սպիտակ Բանակայիններուն, Վրաստանի Մենչևիկիներուն եւ Ազրբեջանի Մուսավաթիստներուն, լրտեսական ծառայութեան մտած նըւաճողական պետութիւններուն, — Անգլիային, Ֆրանսային, Նացի Գերմանիային, — շարունակեցին դաւել նորաստեղծ մեր պետութեան դէմ եւ Յարիզմի կենաց բաժակներ պարպեցին Փարիզի եւ Նիւ Եորքի պանդոկներու մէջ:

«Որո՞ւ համար այժմ պարզ չէ, որ դաշնակը մեր տնէն աւելով դէն շարուած Սպիտակ Բանակայնութեան եւ առար հետ միասին արտասահմանեան պուրժուագիայի խեղճուկ գործակալն է: Այդ նացիոնալիստներու, ինչպէս նաեւ այլ ազ-

գերու պուրժուական նացիոնալիստներու գլխաւոր սխալն էր, որ անոնք չհասկցան, թէ ո՞րն է իրօք ազգային վերածննդի ու աշխատաւորներու կեանքի իրական բարեխաւման միշտ նախապարհը:

«Անոնք, ինչպէս նաեւ մեր երկրի իսկական յեղափոխականները միշտ էին, երբ կըսէին, թէ Յարական Ռուսիան բանտ է: Յարիզմը մնշման, բռնութեան եւ ստրկութեան կը դատապարտէր բոլոր ազգութիւններու եւ առանձնապէս ոչ-Ռուս ազգութիւններու աշխատաւորները: Հրով ու սրով նաւելով այսպէս կոչուած «ազգային ծայրամասերը», Յարիզմը կը ճրգտէր ստրկացած ժողովուրդները պահել սարսափի տակ, նոր նոր բռնութիւններու մշտական սպառնալիքի տակ, արհեստականօրէն ազգամիջեան թշնամանք հրահրելով յօգուտ իր տիրապետութեան ամրացման:

«Սակայն, դաշնակները, ինչպէս նաեւ միւս ազգերու պուրժուական նացիոնալիստները չհասկցան գլխաւորը: Անոնք չը հասկցան այն, որ Ռուսիայի մէջ արդէն անցեալ դարու վերջերը առաջ եկաւ բանուր դասակարգը, որ կոչուած էր վերջ տալու ոչ միայն Յարիզմին, այլ եւ կալուածատէրերու եւ դրամատէրերու ամեն մէկ իշխանութեան, եւ որ իր ազատագրութեան խնդիրը կը տեսներ ոչ թէ ուրիշ ժողովուրդները մընշելու, այլ բոլոր ազգերու աշխատաւորներու բարեկամութեան, անոնց ընդհանուր յեղափոխական պայքարի մէջ ոչ միայն Յարիզմի դէմ, այլ եւ դրամագլխի իշխանութեան դէմ՝ ինչ կերպարանքով ալ ան ներկայանա:

«Անոնք չհասկցան այն, որ հին Ռուսիայի ընդերքի մէջ ծնած էր նոր՝ յեղափոխական Ռուսիան, որ չնայած եւ հակառակ Ռուսական Յարիզմին, իր թեւերը կը պարզէր յեղափոխական Ռուս բանուր դասակարգը, որ իր շարքերը կը կոչէր՝ առանց ազգութիւններու խտրութեան բոլոր աշխատաւորներու լիակատար ազատագրութեան համար մղուող պայքարի դրօշի տակ:

«Որպէս ի ծնէ կոյրեր, անոնք չէին նկատեր նոյնիսկ այն, որ արդէն անցեալ դարու մէջ Ռուս բանուր դասակարգի գրլուխը կանգնեցաւ մնշուած ժողովուրդներու եւ բոլոր աշխատաւորներու մեծ առաջնորդը, յեղափոխական բանուրներու մեծ առաջնորդը — ԼԵՆԻՆԸ:

«ԼԵՆԻՆԻ ուժն այն է, որ ան կրցաւ Պոլշեվիզմի դրօշի տակ համախմբել մեր ամբողջ երկրի լաւագոյն յեղափոխա-

կան ուժերը: Եւ միայն ատոր հետեւանձով Խորհրդային Մի-
ութեան աշխատաւորները յաղթականօրէն Սոցիալիզմ կը կա-
ռուցանեն Լենինի գործի մեծ շարունակողի գլխաւորութեամբ,
ընկեր ՍԹԱԼԻՆԻ գլխաւորութեամբ»: (ՄՈԼՈԹՈՎ)

* * *

Բայց եթէ դաշնակ պարագլուխները երէկ չէին հասկնար Հա-
յաստանի ազատագրութեան ճանապարհը, ապա այսօր դիտակցօ-
րէն կը դաւաճանեն ազատագրու-
ած Հայաստանի ազգային ան-
կախութեան եւ վերածննդեան

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

դէմ:

Բայց եթէ մինչեւ քսան տարի առաջ, դաշնակ պարագլուխ-
ները իրենց արկածախնդրութիւններով Հայ ժողովուրդը հասցու-
ցած էին ամբողջական կործանման ելլին, ապա քսան տարիէ ի վեր,
այն օրէն, երբ Հայաստանը, ի հեճուկս իրենց, թեւակոխեց իր պան-
ծալի ազգային վերածննդեան ճիշտ ճանապարհը, անոնք (դաշնակ
պարագլուխները) իրենց յօժարակամ սպասարկութիւնը կուտան Հա-
յաստանի ամեն կարգի թշնամիներու ճիւղային էնթրիկներուն:
Եւ անոնք, դաղութներու մէջ իրենց ունեցած հակա-Սորհրդային
գործունէութեամբ, դարձած են Հայ ժողովրդի տեղորոշման, մատնիչներն ու դաւաճանները:

* * *

«Մեր տունէն աւելով դէն շարունակ» դաշնակ պարագլուխները,
վերջին քսան տարւա ընթացքին, բոյն դրած դաղութներու մէջ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՌԱՆԿԻՆԸ

իրենց միակ յոյսը դրած են եղեր հակա-Սորհրդային պատերազմի
մը եւ այդ պատերազմի մէջ Սորհրդային Միութեան պարտու-
թեան վրա:

Իրենց այդ ճիւղային յոյսերը իրականացնելու համար, դաշ-
նակ մնացուկները Հայաստանի մէջ, միացած Թրոցքիականներուն
եւ Պոլսարինականներուն, կազմակերպած էին վնասարարութիւն,
խափանարարութիւն, խոտորչութիւն, մարդասպանութիւն, լրտե-
սութիւն: Պոլսարինականները, Թրոցքիականները, դաշնակ մնա-
ցորդներու մնացուկները եւ ամեն կարգի հակայեղափոխական-
ները, Ազատի Խանջեանի ընդհանուր հովանաւորութեամբ, կը հե-
տապնդէին Հայաստանի անջատումը Սորհրդային Մեծ Միութե-
նէն՝ զայն անօգնական մէկ զոհը դարձնելու համար Նացի-Ֆաշիստ
յարձակողներուն: Հայ ժողովրդի այդ դարչելի դաւաճանները
հակա-Սորհրդային պատերազմի մը պարագային, պատրաստ էին
կատարելու այն դերը, ինչ դեր որ խաղացին Տանիմարքայի, Նոր-

վեկիայի, Հորանտայի, Պելճիքայի եւ Ֆրանսայի Հինգերորդ Զօ-
րասիւնայինները:

Բայց, շնորհիւ Սորհրդային իշխանութեան զգաստութեան՝
հայ ժողովրդի ծոցի մէջ ծւարած այդ իժերը բռնեցան, փոշիաց-
ւեցան եւ հողմացրիւ եղան:

Որպէս Հիթլերի գազտիէներ Հայաստան վերադառնալու դաշ-
նակ պարագլուխներու արիւնոտ երազը օղը ցնդեցաւ:

Եւրոպական պատերազմը, սակայն, այդ յոյսերը վերստին հը-
րահրեց չտեսնած չափով:

Ֆրանսայի անկումէն յետո մանաւանդ բոլորի համար ալ պարզ
դարձաւ, որ դաշնակ պարագլուխները Դաշնակիցներուն հաւատար-
մութիւն կը յայտնէին առ երես, իսկ կը շարունակէին բոլոր եր-
կիրներու մէջ իրենց Հինգերորդ Զօրասիւնայինի ամենանւաստ ըս-
պասարկութիւնը Հիթլերին այն հաշուով, որ պատերազմող կողմե-
րէն ո՛ր մէկն ալ չահի՛ իրենք տէր մը ունենան վերջապէս սպա-
սարկելու:

«Դաշնակիցները Գերմանիան կործանելէն յետո, իրենց զէնքերը
պիտի դարձնեն իրենց համար ատելի Սորհրդային Միութեան վրա»,
կը յայտարարէին անոնք Ֆրանսայի պարտութենէն առաջ եւ ճիւղ-
ային քրքիչ կը բարձրացնէին:

«Մի եւ նոյն է, Նացիները Անգլիան վերջացնելէն յետո, զէն-
քերը պիտի դարձնեն իրենց համար ատելի Սորհրդային Միութեան
վրա» կը յայտարարեն անոնք Ֆրանսայի խայտառակ անձնատու-
թենէն յետո, որու անկման մէջ, անկասկած, իրենց նւաստ մէկ
բաժինը ունեցան Հինգերորդ Զօրասիւնային Լուի Մարենի դաշնակ
սպասարկուները:

Դաշնակ պարագլուխները, դաղութահայ յետադիմութեան միւս
ներկայացուցիչներու հետ, Փարիզի մէջ կազմեցին Ֆրանքո - Հայ-
կական Կոմիտէն, ինչպէս նաեւ Հայկական Եռանկիւն մը, որ դա-
ղութահայ յետադիմութեան երեք խմբակցութիւնները կը ներկա-
յացնէր:

Հայկական Եռանկիւնը, կամ Խատիսեան - Չոպանեան - Բաշալ-
եան առանցքը, ինչպէս Արշակ Չոպանեանը կըսէ, կը հետապնդէր
կազմելու Ազգային Կեդրոնական Մարմին մը «ազգասիրական (իմա-
ցիր ազգային դաւաճան) գլխաւոր կազմակերպութիւններու համա-
խոհութեամբ», նպատակ ունենալով «անհատներու կամ խմբակ-
ցութեանց կողմէ անխոհեմ եւ յախուռն ձեռնարկներու (Մ. Արա-
րատեանի բացատրութեամբ հակա-Թրքական ձեռնարկներու) ա-
ռաջը առնել եւ հաշտութեան Սորհրդաժողովին մօտ կատարել դի-
մումներ, որոնք ծառայութիւն մատուցանեն Հայ ժողովրդի շահե-
րուն»:

Դաշնակ պարագլուխները ալ աւելի ոգեւորեցան, երբ կնքեցաւ Անդրո-Փրանս-Թուրք զինակցութիւնը:

ՊԱՏՐԱՍ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԱՆԳԱՐԱՅԻՆ

Անոնք նոյն իսկ սկսան իրենց մամուլի էջերու վրա քննարկել, թէ ինչո՞ւ իրենց համար կենսական է Թուրքիայի բարեկամութիւնը վաստկել, եւ թէ ի՞նչպիսի խոշոր դին պատրաստ են վճարելու Անդարայի կառավարութեան՝ այդ բարեկամութեան փոխարէն:

Դաշնակ «Յառաջ»ը հարց կուտաւ.—

«Փաստ է, որ Թուրքիա գինակիցն է Անգլիոյ եւ Ֆրանսայի: Այդ գինակցութիւնը, կրնա ի վերջոյ յանգիլ արշաւանքի մը դէպի Կովկաս, Հայաստանի մէջէն...: Այդ պարագային վերաբնութեանն է որ պիտի կանխէ սպառնացող վտանգը, թէ Դաշնակիցներուն տնօրինութիւնը»...:

Այս հարցին կը պատասխանէ Ս. Արարատեանը, դաշնակ վարչաձեւի ժամանակ Ելեւմտական Նախարարը.—

« — Թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը — ահա մեր պատասխանը: — Որովհետեւ, ո՛չ ոքի համար այլեւս գաղտնիք է, որ այսօր այդ երկուսն էլ կազմում են մի անբաժան ամբողջութիւն եւ թելադրում՝ փոխադարձ շահերի որոշ գիտակցութիւն ու գործակցութիւն...»:

Աւելի պարզ դարձնելու համար իր հրատարակչին առաջարկութիւնը Անդարայի կառավարութեան, դաշնակ նախկին Ելեւմտական Նախարարը կաւեւցնէ հետեւեալը.—

«Երէկ չհասկացեցինք քաղաքական իմաստութեան ու փորձառութեան պակասով: Ի՞նչ ունենք ասելիք այսօր:

«Ըստ իս այն, որ «Հայ ժողովրդի շահը պահանջում է գրաւել իրեն արժանի տեղը Կովկասեան ազգերի շարքում՝ փոխադարձ գիջումներով ու գոհողութիւններով:

«Մենք ճշտել ենք նաեւ մեր գիջումների ընդհանուր սահմանն ու ուղղութիւնը: Հարկ եղած դէպքում, կարող ենք ու պարտաւոր ենք, նոյնիսկ վերաբնութեան ենթարկել ու սրբազրել մեր ազգային քաղաքականութեան որոշ կողմերը...»:

Այս խօսքերու պարզ իմաստն այն է, որ Թուրքիայի բարեկամութիւնը շահելու եւ հակա-Խորհրդային պատերազմի ժամանակ անոր լրտեսական ծառայութիւն մատուցանելու պատւին արժանա-

նալու համար, դաշնակ պարագլուխները յանձնառու կըլլան ոչ միայն Ալեքսանդրապոլի խայտառակ եւ նւաստացուցիչ դաշնակիւրը ի զօրու ճանչնալու, այլ Հայաստանի մնացած մասն ալ դարձնելու Թուրքական ծայրագաւառ մը:

Ինչ որ Ս. Արարատեանը ճիշտ չի ներկայացներ, այդ այն է, որ սա վերաքննութիւնն չէ, այլ վերահաստատումն է այն քաղաքականութեան, զոր Դաշնակ պարագլուխները որդեգրեցին Կարսն ու Արտասանը Թուրքերուն յանձնած ժամանակ, եւ ալ աւելի դարգացուցին Քեազիմ Գարապեքիրի բանակը Երեւան հրաւիրած ատեն:

* * *

Դաշնակ պարագլուխները, որոնք դաժանօրէն կը շահագործեն դաշնակցական շարքայիններու հայրենասիրութիւնն ու զոհողութեան պատրաստակամութիւնը իրենց աղագաւ նպատակներուն համար, կը փորձեն այս պատերազմի մէջ քաշել դաղութահայրութիւնը եւ մասնակից դարձնել զայն իրենց դաւաճանութեան՝ մեր սրբազան հայրենիքի դէմ:

ԳԱՂՈՒԹԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Դաշնակներու այդ պէ՛զալի մեքենայութիւնները հանդիպեցան ոչ միայն ժողովրդական լայն զանուածներու, այլ նաեւ դաշնակցական շարքայիններու բուն ընդդիմութեան եւ փշրեցան ամեն սեղ:

Այս բոլորէն յետո, այժմ արդէն կարելի է շատ իրաւացիօրէն հարց տալ.—

«Որո՞ւ համար այժմ պարզ չէ, որ ան, ով դեռ ինքզինքը դաշնակ կանւանէ, չի կրնար ուրէ՛ այլ դեռ խաղալ, բացի հորհրդային Հայաստանի քշնամիի դերէն, հորհրդային Հայաստանի, որ ոտք է դրեր պանծալի ազգային վերծննդի ուղին»:

ՄՈՂՈԹՈՎ

Աւելին:

Որո՞ւ համար այժմ արդէն պարզ չէ, որ դաշնակ պարագլուխները, որոնք դաւաճանեցին եւ կը շարունակեն դաւաճանել հայ ժողովրդին, չեն կրնար հաւատարիմ ըլլալ ուրիշ պետութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, որու վրա Ամերիկահայրութիւնը կը գուրդուրա որպէս իր որդեգրած հարազատ հայրենիքը եւ որու ազատութիւնը մեծապէս կը մտահոգէ հոս բնակող ամեն մէկ ազնիւ Հայը:

Եւ ի վերջո՞ Դաշնակ պարագլուխները եւ Հայկական Եռանկիւնը չդաւաճանեցի՞ն Յրանսային: Անոնք մտած Յրանքո-Հայկական Կոմիտէի մէջ, ամենանւաստ սպասարկութիւն կը մատուցանէին Լուի Մարենին եւ Անրի Լեմերիին, որոնք փաստաւած Հինգերորդ Զօրասիւնայիններ դուրս եկան:

Կը մնա յուսալ, որ Դաշնակցական շարքայինները երես կը դարձնեն դաշնակ արկածախնդիր եւ դաւաճան պարագլուխներէն, եւ իրենց եռանդազին մասնակցութիւնը կը բերեն իրականացնելու համար Ամերիկահայ համայնքի միութիւնը՝ այնպէս, ինչպէս հայ ժողովրդի միութիւնը իրականացած է Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միութեան մէջ:

Ամերիկայի մէջ հայ համայնքի միութիւնը պէտք է իրականանա հետեւեալ սեղմ նախագծի շուրջ.—

1.— Ամերիկահայոց մէջ գարգացնել Ամերիկեան քաղաքացիութեան գիտակցութիւնը. պաշտպանել անոնց քաղաքացիական իրաւունքները. ջանալ բարոյսել անոնց տնտեսական եւ ընկերային վիճակը, համաձայն այս երկրի ընձեռած կարելիութիւններուն եւ դիւրութեանց. անոնց ծանօթացնել Ամերիկեան մշակոյթը եւ Ամերիկեան ժողովրդին ծանօթացնել Հայ ժողովրդի հին եւ նոր մշակոյթի լաւագոյն գանձերը:

2.— Օգնել պատերազմէն քշուառացած գաղութներուն նիւթապէս եւ բարոյապէս, ինչպէս նաեւ մշակութային մարզի մէջ:

3.— Ներկա պատերազմի մէջ պահպանել Ամերիկահայ գաղութի չէզոքութիւնը:

4.— Մշակել եւ գարգացնել եղբայրական եւ մշակութային կապ Հայաստանի ժողովրդի հետ. չքոյլատրել ոչ մէկ քշնամութիւն եւ որհրդային Հայաստանի դէմ, որ կը հանդիսանա Հայ ժողովրդի ազատ հայրենիքը, եւ որու հանդէպ Ամերիկահայութիւնը կը տածէ անսահման սէր ու գուրգուրանք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏՆ ՈՒ ԼԻՑՔԸ

Դաշնակ պարագլուխները, որոնք վերջին քսան տարուա ընթացքին, իրենց հակա-Խորհրդային դաւերու զուգընթաց, ստի եւ զըրպարտութեան արշաւ մը տարած են Խորհրդային Հայաստանի դէմ, սովոր են շարունակ ըսել, թէ Հայաստան անկախ չէ, թէ Խորհրդային իշխանութեան քաղաքականութիւնը չի համապատասխաներ մեր ժողովրդի շահերուն եւ ցանկութիւններուն:

Մինչդեռ՝

Յանձին Խորհրդային իշխանութեան Հայաստանը տիրացաւ այնպիսի անկախութեան, որուն այսօր կը նախանձին Եւրոպայի շատ մը ժողովուրդները, որոնք մինչեւ երէկ անկախ կը համարէին եւ այսօր արդէն ունակութիւն եղած են. որոնք երէկ կապրէին կէսկուշտ, կէս-անօթի, իսկ այսօր արդէն սովահար կըլլան. եւ մինչդեռ այսօր Հայաստան իր պանծալի ՔՍԱՆԱՄԵԱԿԸ կը տօնէ ցընծութեան երգերով, Եւրոպական ժողովուրդները կողքան իրենց անկախութեան կորուստը եւ մտահոգւած են իրենց սոսկական դոյութեան հարցով:

Տեսնենք, սակայն, թէ ի՞նչ է Խորհրդային անկախութիւնը:

Ա.— Ինչի՞ պիտի նմանէր ոեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկրի բնական հարստութիւնները, ջուրերը, երկաթուղիները, ելեկտրականութիւնն ու արդիւնաբերութիւնը պատկանէին օտար պետութիւններու կամ հայրենական սակաւաբիւ փողատէրերու ու հողատէրերու:

Այդպիսի երկիր մը անկախ չէր ըլլար: Այդպիսի երկիր մը կը դառնար նւաճողական երկիրներու վաստալը միայն: Այդպիսին անկախութիւն չէ բնաւ, այլ անկախութեան ողորմելի եւ այլանդակ ծաղրանկարը միայն:

Այդպէս էր Հայաստանի անկախութիւնը «դաշնակներու» շրջանին, որոնք իրենց աւագակային իշխանութիւնը փորձեցին դիմակաւորել Հայաստանի Հանրապետութիւն անունով: Իսկ Հայաստանի



1945 - 1946

Հանրապետութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ Անդլիական նւաճողականութեան եւ սակաւաթիւ հայրենական փողատէրերու կալածը միայն:

Մեսրոպ Արքեպիսկոպոսի վկայութեամբ.— մեծահարուստ Մայրիկեան եղբայրներու դանձարկղը լեցուն էր դաշնակունիներէ ըստացած առանձնաշնորհումներով:

Յանձին Սորհրդային իշխանութեան, Հայաստան տիրացաւ իրական անկախութեան: Հայաստանի բովանդակ հողը, բոլոր բնական հարստութիւնները, ջուրերը, երկաթուղիները, ելեկտրականութիւնն ու արդիւնաբերութիւնը յայտարարեցան Հայ ժողովրդի անկապտելի սեփականութիւնը: Եւ առաջին անգամ ըլլալով նոր պատգամ մը տրեցաւ Հայ ժողովրդին.— ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱԶԱՆ Է, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ԴԷՄ ՈՇԻԷ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆ ԵՂԵՌՆԱԿԱՆ ՅԱՆՑԱՆՔ Է:

Բ.— Ինչի՞ պիտի նմանէր ռեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկիրը իրաւունք էր հնարաւորութիւն չունենար իր բնական հարստութիւնները եւ առեւտրական ու արդիւնաբերական կարելիութիւնները զարգացնելու՝ յօգուտ երկրի ազգաբնակչութեան, եւ երկիրը մնար հում նիւթի շուկա՝ արդիւնաբերականապէս յառաջաւոր երկրի մը կամ երկիրներու համար:

Ինչի՞ պիտի նմանէր ռեւէ երկրի անկախութիւնը, եթէ խրաւիլակ էր անհարակ պետութիւն մը անվերջ փոխառութիւններու դիմէր՝ իր ելեւմուտքը հաւասարակշռելու համար, եւ ամբողջ երկիրը եւ ժողովուրդը դարձնէր ընչաճաղց եւ վաշխառու պետութեան մը տւանդը:

Այդպիսի չէր ըլլար անկախութիւն:

Այդպիսի երկիր մը կըլլար միայն նւաստ դաղթալայր մը՝ ենթակա նւաճողական պետութիւններու անարդ շահատակութեան:

Այդպիսի երկրի բնակչութիւնը սերնդէ սերունդ դատապարտուած կըլլար դառը դատելու եւ դատարկ նստելու, որպէսզի կարենար փոխառութիւններու արիւնոտ տոկոսները վճարել:

Այսպէս էր օրպակաս Հայաստանի Հանրապետութիւնը:

Դաշնակները կը ձգտէին Հայաստանը դարձնել քաղաքակիրթ Եւրոպայի համար հում նիւթի շուկա, եւ այդ պատիւ կը համարէին:

Այդպիսի պատիւով կրնային միայն պարծենալ Հայ ժողովրդի դաւաճաններն ու մատնիչները:

Երկուք ու կէս տարւա ընթացքին դաշնակները մեր երկիրը դըրած էին 17,400,000 տոլար պարտքի տակ: Իսկ երկրի ընդհանուր եկամուտները չէին բաւեր այդ դրամի տոկոսներն իսկ վճարելու:

Իսկ յանձին Սորհրդային իշխանութեան, Հայ ժողովուրդը տիրացաւ իր հարազատ անկախութեան: Սորհրդային իշխանութիւնը

զաղթալայր Հայաստանը վերածեց յառաջաւոր արդիւնաբերութեան եւ արդիական հաւաքատնտեսութեան բարդաւաճ երկրի, ուր այսուհետեւ մարդիկ պիտի չգիտնան, թէ կարիքն ի՞նչ է:

Հազար միլիոն եւ աւելի տոլար մտցած է Սորհրդային Հայաստան՝ իրազործելու համար մեր հայրենիքի արդիւնաբերական, գիւղատնտեսական, մշակութային վերելքը: Բայց հայ ժողովուրդը մտահոգւած չէ բնաւ տոկոս վճարելու մղձաւանջով: Այդ հազար միլիոն եւ աւելի տոլարը մեզ տւած է Սորհրդային Միութիւնը: Առաջնորդելով ԼԵՆԻՆԻ ԵՎ ՍԹԱԼԻՆԻ ազգային քաղաքականութեան մեծ սկզբունքներով, Սորհրդային Միութիւնը կարողացած է իր բաղկացուցիչ հանրապետութեանց եւ Հայաստանի համար ստեղծել ոչ միայն հաւասարութիւն օրէնքի առաջ, այլ նաեւ տնտեսական հաւասարութիւն:

ԱՅՅՄ ԱՐԴԷՆ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՂՐ ՈՒ ԿԱԹՈՎ ԿԸ ՍՆԱՆԻ ԵՒ ՀԵՐԻՍԱՆ ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓՈՎ ԿՈՒՏԷ:

Գ.— Ինչի՞ պիտի նմանէր ռեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկրի մէջ դատարակութիւնը դառնար սակաւաթիւ առանձնաշնորհեալներու սեփականութիւնը, եթէ այդ երկրի ազգաբնակչութեան 91 տոկոսը մխրճուած մնար դարաւոր տգիտութեան խաւարի մէջ, եթէ այդ երկիրը հնարաւորութիւններ չստեղծէր անկաշկանդ զարգացնելու իր ազգային մշակոյթն ու քաղաքակրթութիւնը՝ օգտագործելով իր նախահայրերու քոզած մշակութային ժառանգութիւնը եւ աշխարհի բոլոր ժողովուրդներու յառաջաւոր մշակոյթի հոյակապ նւաճումները:

Ինչի՞ պիտի նմանէր ռեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկրի կառավարութիւնը անվերջ կրնատէր մշակութային միջոցառումներն ու յատկացումները, անվերջ փակէր դպրոցներ եւ մշակութային հիմնարկներ եւ հալածամի ստեղծէր մշակութային ամեն մէկ գործունէութեան եւ յառաջդիմական ամեն մէկ շարժման դէմ:

Այդպիսին չէր ըլլար անկախութիւն:

Այդպիսի կառավարութիւն մը կըլլար միայն նւաճողական պետութեան մը եւ հայրենական փողատէրերու ու հողատէրերու հարկահաւաքն ու ոստիկանը:

Այդպէս էր դաշնակներու աւաղակապետութիւնը:

Յարերու օրով Հայաստանի մէջ 35,414 դպրոցական աշակերտներ կային:

Դաշնակցութիւն աւաղակապետութեան օրով աշակերտներու թիւը իջած էր 15,000-ի:

Մառուկերիտները բարբարոսական ազատ արշաւանք կը կազմակերպէին դարաւոր մշակոյթի մեր երկրի մէջ:

Դաշնակցութիւնը, դարձած ամեն մէկ ազնիւ մտածողութեան եւ յառաջդիմութեան անընդունակ բիրտ ոյժ՝ տրորած է ազատագրական յառաջդիմական ամեն մէկ շարժումը Հայ ժողովուրդին, որ մեծ է եղած իր ձգտումներով եւ ազատագրական հերոսական ընդվզումներով, եւ մարդկութեան տւած է գրականութեան ու արւեստի հանճարեղ ներկայացուցիչներ:

Անկախ է հորհրդային Հայաստանը:

Եւ այդ անկախութիւնը, իր լրիւ արտայայտութիւնը կը գտնէ ինչպէս անտեսական, նոյնպէս մշակութային այն վիթխարի նւաճումներուն մէջ, զորս ձեռք բերած է մեր երկիրը Խորհրդային Իշխանութեան քսան տարիներու ընթացքին:

Մեր երկրի մէջ այսօր 300,000 աշակերտներ եւ ուսանողներ կան որոնք կը սովորեն երկրի բնակչութեան մէկ չորրորդը:

Մեր երկիրն այսօր համատարած դրագիտութեան երկիր է:

Մեր երկիրը ստեղծած է Համալսարան, գիտական հաստատութիւններ, թատրոն, օփերա, երաժշտութիւն, որոնք բովանդակ աշխարհի հիացման արժանի են:

Դ. — Ինչի՞ պիտի նմանէր յեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկրի առաջ փակւած ըլլային աշխարհի հաղորդակցութեան եւ աւետարտի փանայարհները:

Այդպիսին էր ըլլար անկախութիւն:

Այդպիսի անկախութիւն ունեցող յեւէ երկիր կը վերածւէր բանտի, որու բանալին կը գտնուէր բանտապահի ձեռքը, եւ ուր ժողովուրդը խեղդամահ կըլլար վարժող հացի, օդի, ջուրի եւ լոյսի:

Այդպէս էր ՄԱՅԻՍ 28-ի Հայաստանը:

Հայաստանի Խորհրդայնացումէն քիչ յետո, Դեկտեմբեր 18, 1920-ին, Հայ մեծ բանաստեղծ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ կը գրէր. —

«ՀԻՄԻ ԱՄԵՆ ՄԱՐԴ ՀԱՆԳԻՍՏ ԿԸ ՔՆԻ ԻՐ ՏԱՆԸ ԵՒ ԿԻՄԱՆԱ, ՈՐ ԷՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՎՏԱՆԳ ԶԿԱ ԵՒ ՄԻ ԼԱՅՆ ԿՈՒՂՏՈՒՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԿԸ ՍԿՍԻԻ: ԹԷ ՉԷ ԷՆ ՎԱՆԴԱ-ԿՈՒՄ — ԴՌԱՆ ԷՒ ՄԻՇՏ ՄԻ ԿԱՐԱՊԵՔԻՐ — ՆԵՐՄՆ ԷՒ ԷԴ ՏԵՍԱԿ ԱՊԻԿԱՐՆԵՐ ՈՒ ԱՆԲԱՐԵՆԻՂՃՆԵՐ — ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ»:

Խորհրդային Հայաստանն անկախ է եւ անոր առաջ բաց են Խորհրդային Միութեան լայնածաւալ երկրամասի բոլոր ճանապարհները, նաւահանգիստները եւ նաւարկելի ջուրերը, եւ Խորհրդային Հայաստանի օդային տորմիդը անկաշկանդ ազատ թռիչք կը գործէ Խորհրդային Միութեան լայնարձակ երկիրներու տակ:

Այդ ճանապարհներով, այդ նաւահանգիստներով, այդ նաւարկելի ջուրերով եւ իր օդային տորմիդով, Խորհրդային Հայաստան

կը կապուի Խորհրդային Միութեան — եւ Խորհրդային Միութեան միջոցով՝ աշխարհին:

Ե. — Ինչի՞ պիտի նմանէր յեւէ երկրի անկախութիւնը, եթէ այդ երկիրը անվերջ ենթակա ըլլար արտաքին միջամտութիւններու, եթէ հզօր պետութիւններէն մէկն ու մէկը, համաձայն իր շահերուն եւ ցանկութեան, անդամահատէր այդ երկրի մէկ շերտը եւ կցէր իր կայսրութեան, կամ, այդ երկիրը յայտարարէր իր կայսրութեան մէկ նահանգը:

Եթէ անկախութիւնը ապահովութիւն է, ապա այդպիսի անկախութիւնը գուրկ է յեւէ ապահովութեան: Այդպիսի անկախութիւն յեւէ ժողովրդի գոյութեան ամենամեծ վտանգ է:

«Դաշնակցութեան» Հայաստանը նոյնիսկ զօրով էր այդպիսի անկախութեան: Յարական Ռուսաստանի ծայրագաւառ Հայաստանը վերածւած էր Անգլիական գաղթավայր Հայաստանի:

Դարաւոր անկախութիւն ունէր, սակայն, հերոսական Եթովպիան, որ կը հանդիսանար ախոյեանը Եւրոպական իմպերիալիստ պետութիւններու կրօնկներու տակ տրորւած խափշիկ Ափրիկէի:

Անպաշտպան էր սակայն, մարտական Եթովպիան, զոր բարբարոս Ֆաշիստները յօշոտեցին, թունաւոր կաղով խեղդամահ ըրին անոր քաջարի զաւակները, որպէսզի վերջ դնեն աշխարհի վերջին խափշիկ պետութեան, յանուն Իտալական արիւնոտ փառքին:

Անկախ էր Ալստրիան:

Եւ Ալստրիայի անկախութիւնը երաշխաւորած էին Ֆրանսան, Անգլիան եւ Իտալիան: Բայց ի՞նչ պատահեցաւ Ալստրիայի անկախութեան:

Դաշնակները կը նախանձէին «երանելի» Չեխերուն եւ Սլովաքներուն: Բայց ի՞նչ պատահեցաւ Չեխո-Սլովաքիայի անկախութեան:

Միւնիխի մէջ հաւաքւած Չեմպրըլէյնը, Մուսոլինին, Տալատին լիազօրեցին Հիթլերը անդամահատել Չեխո-Սլովաքիան:

Եւ հրեշային երեւակայութեամբ արեքցած դաշնակ պարագլուխները ճիւղային քրքիչով դիմաւորեցին Չեխո-Սլովաքիայի զազանային յօշոտումը, անոր մէջ տեսնելով Խորհրդային Հայաստանի ոչնչացման Նացի կերպերը:

Դարաւոր անկախութիւն ունեցող երկիր էր Սպանիան:

Բայց, Սպանիայի ժողովուրդը իր ուղած կառավարութիւնն ունենալու անկախութիւնը չունէր:

Եւ երբ Սպանիայի ժողովուրդը իշխանութեան գլուխը բերաւ իր ուղած կառավարութիւնը, ժողովրդական կառավարութիւնը՝

Հիբլերն ու Մուսուլիմին միջամտեցին գորով եւ գեմեով .

Անգլիան եւ Ֆրանսան կազմեցին ոչ-միջամտողական միջազգային յանձնաժողով մը, որ կարգիլէր ամեն օգնութիւնը Հանրապետական կառավարութեան եւ թոյլ կուտար, որ Նացի-Ֆաշիստ միջամտողները ամեն օգնութիւն տային Ֆրանսոյին .

Միացեալ Նահանգները օգնեց Նացի-Ֆաշիստ միջամտողներուն՝ արգիլելով Հանրապետական կառավարութեան գեմք գնել Ամերիկայէն: Մինչդեռ Իտալիան եւ Գերմանիան այս երկրէն գեմք կը գնէին Ֆրանսոյի համար:

Համաշխարհային պատերազմէն յետո Ռաշնակիցներն ստեղծեցին Լեհական բռնադրօսիկ եւ խառնիճազանչ պետութիւնը:

Անոնք, Եւրոպական պատերազմի նախընդօրին երաշխաւորեցին Լեհաստանի սահմաններու անձեռնմխելիութիւնը, եւ զայն պատերազմի մղեցին Գերմանիայի դէմ:

Անգլիան եւ Ֆրանսան պատերազմ յայտարարեցին, բայց չպատերազմեցան Հիբլերի դէմ. թողուցին, որ Նացիները բզկտեն Լեհաստանը:

Անկախ երկիրներ էին Տանիմարքան, Նորվեգիան, Հոլանտան, Լուքսեմպուրկը, Պելճիքան:

Անգլիան եւ Ֆրանսան բռնացան անոնց չէզոքութեան վրա:

Անգլիան եւ Ֆրանսան որոշած եւ ծրագրած էին այդ երկիրները վերածել պատերազմի դաշտերու:

Եւ երբ Հիթլերի մեքենայացած հորդաները օդէն, ծովէն եւ ցամաքէն խուժեցին այդ երկիրներու վրա՝

Անգլիան եւ Ֆրանսան նոյնիսկ պատրաստ չէին գանձիք պաշտպանելու:

Ֆինլանտայի «անկախութիւնը» իր ընդհանուր դժերու մէջ, բնաւ տարբեր չէր դաշնակներու «անկախութենէն»: Կար միայն մէկ տարբերութիւն: Ֆինլանտայի դաշնակները աւելի երկար մնացին իշխանութեան գլուխը եւ աւելի երկար պատուհաս դարձան Ֆինլանտական ժողովրդի գլխին:

Անգլիան եւ Ֆրանսան, Միացեալ Նահանգներու եւ Ֆաշիստ Իտալիայի ամենադժօն մասնակցութեամբ, Ֆինլանտան մղեցին պատերազմի Սորհրդային Միութեան դէմ:

Կը մնար միայն ապահովել Հիթլերի դորձակցութիւնն եւս, եւ ահա Եւրոպական պատերազմը պիտի վերածուէր հակա-Սորհրդային պատերազմի:

Ֆինլանտայի արկածախնդիր Սպիտակ Բանակայիները ստացան իրենց արժանի պատասխանը:

Մաներհայմի ամբողջիւնները, որոնք անառիկ կը համարէին, խաւարաբէ բերդերու պէս ինկան Կարմիր Բանակի կրակոցի տակ:

Անգլիան եւ Ֆրանսան մերժեցին երաշխաւորել Լաթվիայի, Լիթվանիայի եւ Էսթոնիայի անկախութիւնները ուղղակի եւ անուղղակի յարձակման դէմ:

Լաթվիայի, Լիթվանիայի եւ Էսթոնիայի կառավարութիւնները, իրենց ժողովուրդներու ճնշման տակ, Սորհրդային Միութեան Հեռկնքեցին փոխադարձ - օգնութեան դաշնադրութիւններ: Անոնք, սակայն, ըլլալով Հինգերորդ Զօրասիւնայիներ, բռնեցան դաւաճանութեան մէջ թէ իրենց սեփական ժողովուրդներու եւ թէ Սորհրդային Միութեան դէմ:

Անգլիան եւ Ֆրանսան կուգէին պատերազմի մէջ նետել Պալքեան երկիրները, յուսալով այդ միջոցով Խորհրդային Միութիւնը քաշել պատերազմի մէջ:

Պալքեան ժողովուրդները երկրէն վտարեցին իրենց դաւաճան կառավարիչներն ու բռնակալները, որոնք Հիթլերի թեւին տակ սողաստանարան դտան, եւ միացան Սորհրդային Միութեան, եւ վերջնականապէս մտան խաղաղութեան անբռնարարելի շրջադժի մէջ:

Անգլիան եւ Ֆրանսան մէկ կողմէն, Իտալիան եւ Գերմանիան միւս կողմէն պատերազմական հրեշային մեքենայութիւններ սարձեր էին Պալքանեան երկիրները եւ Մերձաւոր Արեւելքը պատերազմի մէջ քաշելու համար: Այդ վտանգն այսօր ա՛լ աւելի չեշտակիօրէն դրւած է եւ պէտք չէ դարձնալ եթէ այդ երկիրները դառնան արիւնոտ ու կործանարար մարտերու թատերաբեմեր:

Չինաստանը անկախ երկիր է:

Եւ Չինաստանի անկախութիւնն ու հողային ամբողջականութիւնը երաշխաւորած են Գ պետութիւններ, որոնց կարգին Անգլիան, Ֆրանսան, Միացեալ Նահանգները:

Այնուամենայնիւ ձափոնը իրեց Մանչուրիան Չինաստանէն եւ Գ պետութիւններէն եւ ոչ մէկը արդելք հանդիսացաւ:

Այնուամենայնիւ, ձափոնը ձեռնարկեց ամբողջ Չինաստանը բռնադրուելու եւ Գ պետութիւններէն եւ ոչ մէկը արդելք հանդիսացաւ:

Աւելին: Երեք տարիէ ի վեր Չինաստանի ժողովրդի դէմ դորձածուղ մահացու դէնքերն ու ռազմամթերքները, հրասայլերն ու սաւառնակները ձափոնը մեծ մասամբ կը դնէր Ամերիկայի Միացեալ Նահանգներէն:

Աւելին: Առանց Ամերիկեան երկաթի մանրուքի՝ կանգ պիտի առնէին ձափոնական ռազմական դորձարաններու մեծ մասը:

Աւելին: Առանց Ամերիկեան Կազմիչի եւ նաւթային արտադրութեանց՝ Ճափոնական սաւառնակները պիտի չկրնային թռիչք կատարել Չինաստանի երկրակամարներու տակ եւ Ճափոնական նաւատորմիդը անշարժութեան պիտի մատնէր Սաղազականի մէջ:

Հեռաւոր Արեւելքի երկիրները ինկած են եղեր նաւաճողական պետութիւններու լուծի տակ:

Հիմա երբ Ֆրանսան անձնատուր եղած է Նացիներուն, հիմա երբ Անգլիական Կայսրութեան լինել եւ չլինելու հարցը դրւած է օրակարգի վրա՝

Ճափոնը կուզէ իւրացնել Ֆրանսական եւ Անգլիական կայսրութեանց բողոքները:

Միացեալ Նահանգները կուզէ իր գաղութային տիրապետութեան շրջափակի մէջ բերել զանոնք:

Ճիշտ այս հանգամանքն ալ կրնա Եւրոպական պատերազմը վերածել համաշխարհային պատերազմի:

Վստահարար կարելի է ըսել, որ Արեւմտեան Կիսագնդի 20 Հանրապետութիւններուն կոսպսէ միեւնոյն դառն ճակատադիրը:

Միացեալ Նահանգները հիմակընէ կը տեղաւորուի Անգլիական Կայսրութեան Արեւմտեան Կիսագնդի վրա ունեցած բոլոր ստացւածքներու մէջ՝ իր օղային եւ ծովային ամբողջ զօրութեամբ:

Միացեալ Նահանգները Ամերիկեան 20 Հանրապետութեանց վրա կը նայի որպէս օժանդակ երկիրներու:

Մենք համարեա թէ փորձաքարի դարկինք, արտաքո Սորհրդային Միութեան, բոլոր երկիրներու անկախութիւնները եւ դրսանք գանոնք կամ ոչնչացւած եւ կամ անհաստատ:

Մենք մի անգամ ալ տեսանք, որ փոքր կամ զինուորականապէս տկար ժողովուրդներ գրկւած բանուրներ են ագահ ու անխիղճ մեծ պետութիւններու համար:

Սորհրդային Միութիւնը միայն ունէր ծրագրիւ երաշխաւորելու բոլոր ազգերու ազատ եւ անկախ ապրելու իրաւունքը:

Սորհրդային Միութիւնը միայն առաջարկեց Ազգերու Լիկայի պատժական օրէնքները դորձադրել Եթովպիայի, Սպանիայի եւ Չինաստանի դէմ պատերազմող Հոսմ - Պերլին - Թոքիո առանցքի դէմ:

Սորհրդային Միութիւնը միայն օգնեց Սպանիայի հերոսական ժողովրդին պաշտպանելու իր անկախութիւնը: Եւ այդ ժողովուրդը երեք տարի կրցաւ Մատրիտի դռներու առջեւ պահել Նացի - Ֆաշիստ յարձակողները, մինչդեռ Փարիզը երեք շաբաթ ալ չզիմացաւ:

Սորհրդային Միութիւնը միայն կօչնէ Չինաստանին: Եւ Չինաստանի հերոսական ժողովուրդը ահա երեք տարի է ի վեր յաջողապէս կը կռուի՝ Ամերիկեան զէնքերով ու սաւառնակներով սպա-

ուղիներու ճափոն ներխուժողներու դէմ եւ ուժասպառ կրնէ դանոնք:

Սորհրդային Միութիւնը միայն պատրաստ էր Չեխո - Սլովաքիային օգնելու՝ եթէ միայն այդ երկրի վարիչները քաջութիւնն ունենային պատուելու Միւնիխի վատանուն վճիռը:

Սորհրդային Միութիւնը միայն պատրաստ էր Լեհաստանի սահմանները պաշտպանելու Կարմիր Բանակի անանցանելի պատնէջով, եթէ միայն Անգլիան եւ Ֆրանսան արգելք չհանդիսանային:

Անգլիայի եւ Ֆրանսայի քրէական այդ արարքի պատճառով Լեհաստանի կէսն այսօր կը տրորուի Նացիներու ծանրածանր կըրուակի տակ, մինչդեռ Սորհրդային Միութիւնը օգնութեան եկաւ Լեհաստանի անպաշտպան եւ անօգնական միւս կէսին, եւ ազատագրեց Արեւմտեան Ուքրանիայի եւ Արեւմտեան Պելո-Ռուսիայի եղբայրական ժողովուրդները:

Սորհրդային Միութիւնը միայն կառաջարկէր երաշխաւորել Պալթեան պետութիւններու, ներառեալ Ֆինլանտայի, անկախութիւնը ուղղակի եւ անուղղակի յարձակման դէմ: Եւ այն, ինչ որ Անգլիան եւ Ֆրանսան մերժեցին Սորհրդային Միութեան հետ միասնարար ընել՝ Սորհրդային կառավարութիւնը առանձինն ըրաւ: Լիթվանիան, Լատվիան եւ էսթոնիան մտան ապահովութեան անբռնարարի զօտի մէջ, իսկ Ֆինլանտան վերջնականապէս գերծ է Նացի տիրապետութեան մը վտանգէն:

Սորհրդային Միութիւնը խաղաղ կերպով լուծեց Պեսարապիայի եւ Հիւսիսային Պուքովինայի խնդիրը Ռումանիայի հետ:

Սորհրդային Միութեան այս պատերազմէն դուրս մնալու եւ պատերազմող ոչ մէկ երկրի հետ չկողմնորոշելու հաստատ քաղաքականութիւնը ապահովեց մեծ նաւաճումներ:

Եւ ինչո՞ւ չըսել այս հանդիսաւոր պահուն, Հայաստանի Սորհրդայինացման պանծալի 20-րդ տարեդարձին, որ Եւրոպական դիւանագիտութեան գիշատիչ գայլերը «Հայկական Հարցը» կը ծառայեցնէին իրենց աւազակային արիւնոտ նպատակներուն համար, բայց երբեք չէին լուծեր դայն:

Եւ ինչո՞ւ չըսել, որ Սորհրդային իշխանութիւնը միայն լուծեց Հայկական Հարցը՝ յանձին Հայկական Սորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան:

Սորհրդային իշխանութիւնը Հայ ժողովրդին տաւ խաղաղութիւն, բերկրալի կեանք եւ անկախ ապրելու իրաւունք:


Եւ այսօր, խոռովայնոյ այս աշխարհի մէջ, գաղթաշխարհի հայութեան աչքին Սորհրդային Հայաստանը կերեւա որպէս լուսափիւռ փարոս, որ խարսխւած է Սորհրդային Սոցիալիստական Հան-

րապետութիւններու Միութեան անսասան ապառաժի վրա, լուսա-
ւորելով իր ազազա ազատ եւ բերկրալի կեանքի ճամբան:

Գաղթաշխարհի հայութիւնը հաւատացած է, որ պատերազմի
սուերը պիտի չիյնա մեր ժողովրդի լուսաւոր կեանքի վրա: Իսկ
եթէ յիմարացած թշնամին փորձէ իր դունչը խոթել Սորհրդային
մեր ծաղկոցը, այն ժամանակ Կարմիր Բանակն ու Կարմիր Օղային
Տորմիզը Սորհրդային Հայաստանը պիտի պաշտպանեն այնպէս,
ինչպէս պաշտպանեցին Լենինկրատը Ֆին Սպիտակ Բանակայիննե-
րու եւ միջազգային յախջատակիչներու դէմ:

Գաղթաշխարհի հայութիւնը հաւատացած է, որ հեռու չէ այն
օրը, երբ Սորհրդային Հայաստանը, ԱԽՏՏԵԱՅ ԵՐԿԻՐԸ ՄԵՐ, պի-
տի հրաւիրէ իր անդաստական եւ հայրենակարօտ դաւակունքը մաս-
նակից դառնալու Սորհրդային մեծ ընտանիքի յաւերժական խը-
րախճանքին:

Գաղթաշխարհի հայութեան հոգին, մեր ժողովրդի ազգային
վերածննդի պանծալի 20-րդ տարեդարձի այս օրերուն, հրճանքով
թունդ կելլէ, մտածելով, որ Սորհրդային Մեծ Միութեան Արեւել-
եան սահմանը, Սորհրդային Հայաստանի սահմանը, ամուր փա-
կանքի տակ է, եւ թէ պատերազմական վտանգի մը պարագային,
Կարմիր Բանակը ետ չընկրկիր, այլ սրաթուիչ կը դրոճէ դէպի ա-
ռաջ, դէպի յաղթանակի եւ փառքի նորանոր բարձունքներ:



ԱՐԱՐԱՏԸ — ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՆ
ՎԵՀԱՓԱՌ ԽՈՐՀՐԳԱՆԻՇԸ

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻԱ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ


Շատ նաճումներ են կատարւած կենսանորոգ մեր հայրենիքի
մէջ՝ Սորհրդային իշխանութեան քսան տարիներուն:

Այդ նաճումներու առինքնող մէկ համայնապատկերը մեզի կու-
տա մէկը Հայաստանի աշուղ հաւաքական ազարակապաններէն:—

- Անապատները ծաղկեցին բազով ու ծառով,
- Աւերակ երկիրը շինեց սավետի ձեռով:
- Թունել գցեցին, սարեր անդճեցին լեռով ու ժէրով,
- Նոր ֆար ու ֆամբէֆ շինեցին սավետի ձեռով:
- Մարդիկ ուրախ քեֆ են անում սագով ու քառով,
- Աշխատաւորը նոր կեանք տեսաւ սավետի ձեռով:

Յիրաւի Սորհրդային իշխանութեան հաստատման ամեն տա-
րեդարձ մենք դիմաւորեր ենք լիարուսն ուրախութեամբ ի տես
այն մէկը միւսէն դերազանց յաղթանակներուն, զորս տարեր է իր
ոսկեղէն դարապլուին ապրող մեր ժողովուրդը տարէ տարի:

Տանք այդ հրաշափառ յաղթանակներու պանծալի հանրազու-
մարները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Երբեմնի ծայրագուռո, աղքատ, քայքայած դիւղատնտեսութեան երկիր Հայաստանը, այսօր արդէն դարձեր է Արդիւնաբերական-երկրագործական յառաջաւոր երկիր:

«Այն երկիրը, ուր ունելի մը անգամ չէր շիններ», այսօր արդէն զարգացուցեր է համաշխարհային նշանակութիւն ունեցող արդիւնաբերութիւն մը, արհեստական կաուչուկի (սինթետիկ ուղղըրի) արդիւնաբերութիւնը:

Սորհրդային Հայաստանն արդէն իրագործած է տնտեսական զարգացման երկու Հնգամեա Փլաններ, այժմ արդէն տիրտանական ուժերով կիրագործէ Երրորդ Հնգամեա Փլանը:

Առաջին երկու Հնգամեա Փլաններու որպէս արգասիք Հայաստանի մէջ կեանքի են կոչւած արդիւնաբերական 25 խոշոր ձեռնարկութիւններ:

Այդ ձեռնարկութիւններու գլուխը կը կանգնին —

Գավալուի Յեմենտի Գործարանը:

ՔԱՆԱՔՆՈՒ Զրա-Ելեկտրակայանը:

Արալերդիի Պղնձարձասպի Գործարանը:

Լեհինականի Մսի Գործարանախումբը:

Երրորդ Հնգամեակի առաջին տարին, 1939-ին, օգտագործման են յանձնւած —

Արհեստակցական կաուչուկի - «Սովպրենի» խոշորագոյն ձեռնարկութիւնը (1):

Լեհինականի Հիւսածեղէնի Գործարանախումբը (2):

Նոր զարկ է ստացեր պղնձարդիւնաբերութիւնը (3):

(1) «Սովպրեն» կը տարբերի միւս արհեստական կաուչուկներէն: «Սովպրեն»ի համար հումք կը ծառայեն Գավալուի բարձրորակ կրաքարի պաշարները, որոնք անսպառ են: Փորձը ցոյց տւած է, որ 30,000 ֆիւմէթը ցամաք կտրած օքոմոպիլի մը քայրերը լաւ վիճակի մէջ են եղած:

Մինչդեռ իսկական կաուչուկը չի դիմանար նաւթին, «Սովպրեն» կը դիմանա:

(2) Լեհինականը ունէր Հիւսածեղէնի գործարան մը, որ Հայաստանի հորհրդայնացման առաջին տարիներուն կառուցեցաւ: Իսկ Լեհինականի Հիւսածեղէնի Գործարանախումբը նոր ձեռնարկութիւն է: Այս Գործարանախումբի մէջ կը գործէ 116,000 իլիկ եւ 2,272 տազիտահ՝ օրական 50,000 մեթր կտաւ արտադրելու կարողութեամբ:

Շատ իրաւացիօրէն Յարական Ռուսաստանը ընդունւած էր որպէս ժողովուրդներու բանառ:

Յարական Ռուսաստանը, որ արդիւնաբերական ժամանակակից մեքենականութեան տեսակէտէն «Անդլիայէն քառապատիկ վատ, Գերմանիայէն հնգապատիկ վատ եւ Ամերիկայէն տասնապատիկ վատ» էր, ինչպէս Լենինը դիտել կուտա, կը ձգտէր իր արդիւնաբերական ուժերը զարգացնել՝ արդիւնաբերական ձեռնարկութիւնները կեդրոնացնելով Ռուսաստանի խոշոր քաղաքներու մէջ եւ ամեն կերպ աշխատելով, որ ծայրագաւառները դուրս չգան իրենց նահապետական յետամնացութենէն:

Թշուառ եւ յետամնաց Հայաստանը նոյնիսկ չէր կրնար առու մը բանալու համար արտօնութիւն ձեռք բերել Յարական ինքնակալութենէն:

Պէտք էր խորտակէր ժողովուրդներու բանառը — Յարական Ռուսաստանը եւ ստեղծէր լայնածաւալ այդ երկրամասի վրա ժողովուրդներու բարեկամութիւնը, որպէսզի Հայաստանի ժողովուրդը թեւակոխէր իր ստեղծագործական ուժերու առաւելագոյն օգտագործման ուղին, ունեւոր կեանքի ուղին:

Այդպէս ալ եղաւ:

Յարական խորտակած բանտի աւերակներու վրա բարձրացաւ մէկ նոր պետութիւն, որ հիմնւած է ժողովուրդներու բարեկամութեան եւ հաւասարազօրութեան սկզբունքի վրա: Այդ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւնն է:

Հայաստանին վիճակեցաւ այդ Միութեան մէջ ըլլալու բախտաւորութիւնը:

Խորհրդային պետութիւնը, առաջին օրէն օրակարգի վրա դրաւ տնտեսական փաստական անհաւասարութիւնը վերցնելու խնդիրը եւ լուծեց զայն:

Ահա թէ ինչ կըսէ ՍԹԱԼԻՆը այդ մասին. —

«Մեր Ընկերներէն ՈՄԱՆՔ ԿԸ ԿԱՐԾԵՆ, Թէ ԱՌԱՋԻՆ ՓԸ-ԼԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՎ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ԵՒ ԼԵՁԻԻ ՀԱՐՅԸ, ԿԱՐԵԼԻ Է ԿՏՐԵԼ ՀԱՆԳՈՅՅԸ. ՃԻՇՏ ՁԷ, ԴՊՐՈՅՆԵՐՈՎ ՀԵՌՈՒ ՁԵՍ ԵՐ-

(3) Հայաստանի պրիմաի արդիւնաբերութիւնը 1938-ին 2.5 անգամ աւելի պրիմա տւած է, բաղաւորմամբ 1933-ին: Վերջին տարիները, Փիրդուդանի շրջանի մէջ յայտնաբերւած են պրիմաի մեծ պաշարներ: Պարզ է, որ Հայաստանի պրիմաարդիւնաբերութիւնը ոչ թէ վայրէջք կը կատարէ, ինչպէս դաշնակները արտասահմանի մէջ կաղմկեմ իրենց մամուլի էջերէն, այլ թեւակոխած է վերելքի նոր շրջան մը:

ԹԱՐ: ԱՆՈՆՔ, ԱՅԴ ԴՊՐՈՅՆԵՐԸ ԿԸ ՁԱՐԳԱՆԱՆ, ԼԵՁՈՒՆ ՆՈՅՆՊԷՍ ԿԸ ՁԱՐԳԱՆԱ, ԲԱՅՅ ՓԱՍՏԱԿԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ, ԻՍԿ ԱՅԴ ՀԻՄՔՆ Է ԲՈԼՈՐ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՎԷՃԵՐՈՒ:

«ԱՅՍՏԵՂ ԴՊՐՈՅՆԵՐՈՎ ԵՒ ԼԵՁԻՈՎ ՕՁԻԳ ՁԵՍ ԱՁԱՏԵՐ, ԱՅՍՏԵՂ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵՐ ԻՐԱԿԱՆ, ՍԻՍՏԵՄԱԹԻԿ, ԱՆԿԵՂՄ, ԻՍԿԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՒԼՏՈՒՐԱՊԷՍ ԵՒ ՏՆՏԵՍԱՊԷՍ ՅԵՏԱՄՆԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, — ԻՍԿ ԱՆՈՆՔ ԵՏ ԵՆ ՄՆԱՅԵՐ ՈՁ ԹԷ ԻՐԵՆՅ ՄԵՂՔՈՎ, ԱՅԼ ԱՆՈՐ ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՌԱՋ ԱՆՈՆՅ ՎՐԱ ՆԱՅԵՐ ԵՆ ԻԲՐԵԻ ՀՈՒՄ ՆԻԹԻ ԱՂԻԻԻՐՆԵՐ, — ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՁԳՏԻԼ, ՈՐ ԱՅԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՐԴԻՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՕՃԱԽՆԵՐ ԿԱՁՄԱԿԵՐՊԸՒՄՆ»:

Շատ անգամ հարց կը տրւի, թէ ի՞նչ է Լենինեան — Սթալինեան Ազգային քաղաքականութիւնը:

Ահա սա է:

Եւ իրօք, շնորհիւ Լենինեան — Սթալինեան Ազգային Քաղաքականութեան անչեղ գործադրութեան, ի՛նչպիսի տնտեսական վերախարի տեղաշարժեր տեղի ունեցան հրաշալի մեր երկրի մէջ, ինչպիսի անճանաչելիութեամբ փոխւած է Հայաստանի տնտեսական եւ մշակութային քարտէզը:

Հարեւանցի ակնարկ մը նետենք այդ տեղաշարժերու եւ փոփոխութիւններու վրա:

Ցարի օրով

Հայաստանի մէջ եղած են արդիւնաբերական 15 ջնջին միաւորներ, որոնց ընդհանուր արտադրութիւնը, 1913-ին, հասեր է 20,000,000 ռուպլի: Եւ պէտք չէ մոռնալ, որ 1913-ը Հայաստանի մէջ արդիւնաբերութեան ծաղկման շրջանը կը համարուի:

Դաշնակներու օրով

Արդիւնաբերութիւնը քայքայւած է մինչեւ այն աստիճան, որ արտադրանքը իջած է 2,000,000 ռուպլի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Արդիւնաբերութեան ընդհանուր արտադրանքը 1937-ին, հասած է 241,000,000 ռուպլի:

Պարզ է, որ Խորհրդային Հայաստանի արդիւնաբերութիւնը 1913-ի բաղաւորմամբ բաղաւորապէս է աւելի քան 12 ու կէս անգամ, իսկ 1919-ի բաղաւորմամբ աւելի քան 127 անգամ:

Իսկ ի՞նչ է եղեր Հայաստանի մէջ արդիւնաբերութեան եւ գիւ-

դատնտեսութեան դերը խորհրդայնացումէն առաջ եւ խորհրդայնացումէն յետո :

Ցարի օրով

Ամբողջ տնտեսութեան մէջ արդիւնաբերութիւնը կը կազմէր հարիւրին 18, իսկ գիւղատնտեսութիւնը՝ հարիւրին 82 :

Դաշնակներու օրով

Արդիւնաբերութիւնը հարիւրին 7, իսկ գիւղատնտեսութիւնը հարիւրին 93 :

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Արդիւնաբերութիւնը, 1938-ին հարիւրին 72, իսկ գիւղատնտեսութիւնը՝ հարիւրին 28 :

Տարի մը յետո, 1939-ին, արդիւնաբերութիւնը հարիւրին 77.7, իսկ գիւղատնտեսութիւնը՝ հարիւրին 22.3 :

Այս տարի, Հայաստանի խորհրդայնացման 20-րդ տարին, արդիւնաբերութիւնը, նախորդ տարւա հետ բաղդատմամբ, աճած է առ հարիւր 50 :

Զարգացման այսպիսի թափ դուր չէք գտներ դրամատիրական ունէ էրկրի արտադրական ուժերու աճման պատմութեան մէջ :

Տեանենք, թէ խորհրդային Միութեան ուրիշ Հանրապետութիւններու համեմատութեամբ ի՞նչ թափով աճեր է Հայաստանի արդիւնաբերութիւնը :

Խորհրդային Միութեան Երկրորդ Հնդամեա Փլանը կը յառաջադրէր —

«Ազգային Հանրապետութիւններու եւ մարզերու տնտեսական ու կրթական յետամնացութեան վերացումը, արտադրողական ուժերու հաւասարաչափ դասաւորումը եւ արդիւնաբերութեան մօտեցումը հում նիւթի ազբիւրներուն» :

Առաջնորդելով այս ոսկեղէն կանոնով, արդիւնաբերութիւնը աւելի մեծ թափով զարգացած է ոչ թէ Ռուսաստանի մէջ, այլ, օրինակ, Հայաստանի մէջ :

Հետեւեալ աղիւսակը ատոր ամենապերճախօս ապացոյցն է .—

1937-ին խորհրդային Միութեան առանձին Հանրապետութիւններու մէջ 1928-ի բաղդատմամբ արդիւնաբերութիւնը զարգացած է՝

Ռուսիա 5.7 անգամ, Ուքրանիա 5.7 անգամ, Պելո-Ռուսիա 8.5 անգամ, Ադրբեյջան 4.5 անգամ, Վրաստան 12.5 անգամ, Հայաստան 12 անգամ, Թուրքմենիա 6.5 անգամ, Ուզբեկիստան 5.7 անգամ, Տաճիկիստան 26 անգամ, Ղազախստան 12 անգամ, Քիւրդիստան 14 անգամ :

Ցարի օրով

Կառավարութիւնը կը կեղեքէր երկիրը :

Դաշնակներու օրով

«Մասնաբերիւնները օր ցերեկով թալանում եւ սպանում էին քաղաքի եւ գիւղի աշխատաւորներին» :

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Արդիւնաբերութիւնը զարգացնելու համար այս տարի յառկացած է 200,000,000 ռուպլի, իսկ խորհրդային իշխանութեան քսան տարիներուն ոչ նւազ քան 715,000,000 ռուպլի :

Ցարի օրով

Արդիւնաբերական օճախներ չկային Հաստատանի մէջ, բացառելով Երեւանը :

Դաշնակներու օրով

Երեւանի մէջ ինքզինքը զգալի կը դարձնէր միայն մէկ արդիւնաբերութիւն .— «դադաղաշինութիւնը» :

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի քարտէզը ծածկւած է Արդիւնաբերական կեդրոններով — Երեւան, Ղափան, Ալավերդի, Կիրովական (նախկին Ղաբաքիլիսէ), Զորագետ, Փամպակ, Լենինական (նախկին Արեքսանդրապոլ), Քանաքեռ, Արթիկ, Անի, Արարատ (նախկին Դավալու), Սեւան եւ ուրիշներ :

Եւ հիմա, Երեւանի մէջ կը գործեն 246 արդիւնաբերական ձեռնարկութիւններ :

Այն երկիրը, ուր

Դաշնակներու օրով

«ՍՈՎԸ ԵՒ ՀՍՄԱՃԱՐԱԿԸ ԿՈՏՈՐՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ : ԾԱՏ ՏԵՂԵՐՈՒՄ ԿԵՐԱԿՐԻՈՒՄ ԵՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՒ ՄԵՌԱՅ ՄԱՐԴԿԱՆՅ ԴԻԱԿՆԵՐՈՎ : ՀԱԶԱՐԱՒՈՐ ՈՐԲԵՐ ԱՆՏԷՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ ՍՆՒՈՒՄ ԵՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՂԲՈՎ» (1) :

Այդ երկիրը, Հայաստան,

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Դարձեր է

Լիւրիւն սերունդներու հրճալի կեանքի յաւերժական ծաղկոց :

(1) Այս մտայլ տողերն 1919-ին արձանագրւած են դաշնակ պաշտօնական օրգան «Յառաջ»ի մէջ, որ այն ժամանակ կը հրատարակէր Թիֆլիս :



ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՓՈՐ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ ՀԱՅ ԲԱՆԻՈՐ ՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Լենինի լամպուշկան, — էլեկտրական լամբը — այդ արդէն Հայ ժողովրդի ուրախութիւնն է, անոր բերկրալի կեանքի լուսաճանչ սեմպոլը:

Ցարի օրով, դաշնակներու օրով Հայաստանը մութ էր ու խաւար՝ նման Հայ ժողովրդի մռայլ կեանքի:

Սորհուրդներու օրով էլեկտրական բորբ լոյսով սղողեցաւ Հայաստանը եւ դարձաւ կենսախինդ ժողովրդի լուսադարդ ՁԻԱՐԹ-ՆՈՅԸ:

Սորհուրդներու օրով էլեկտրականութեան հրեղէն զօրութիւնը հոսեցաւ արդիւնաբերական մեքենականութեան երակներու մէջ եւ չարժման մէջ դրաւ դանոնք՝ ստեղծելով լիառատ կեանքի պայմաններ:

Հայաստանն հարուստ է «սպիտակ ածուխի» անսպառ պաշարներով:

Սպիտակ ածուխի այդ պաշարները Հայաստանի ջուրերն են, որոնք մեծ անկումայնութեամբ կը նետուին բարձրալանդակներէն վար:

Այդ անկումայնութիւնը ինքնին էլեկտրական էներգիա է, էլեկտրական ուժ է: Կը մնար միայն սանձել բնութեան մինչեւ այդ անզուսպ տարրերը, ժայթքեցնելու համար անկէ ճառագայթարձակ լոյսն ու հրեղէն էներգիան:

Եւ այդ ըրաւ Սորհրդային իշխանութիւնը:

Եւ յիրաւի առասպելական են Հայաստանի էլեկտրական ուժի աղբիւրները: Այդ աղբիւրները լիովին օգտագործել կարենալու պարագային՝ տարեկան կստացւի 2,000,000,000 ձիու ուժ էլեկտրականութիւն:

Այս վիթխարի ուժի ո՞ր մասը կօգտագործւէր ցարի օրով, ցարական մտրակի ժառանգորդ դաշնակներու օրով: Եւ ո՞ր մասը կօգտագործւի այսօր, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ:

Ցարի օրով

Կային 10 մանր էլեկտրակայաններ, որոնք ժամը կարտադրէին 5,100,000 կիլովատ էլեկտրականութիւն:

Գաշնակներու օրով

Կայաններու արտադրական կարողութիւնը իջած էր ժամը 1,700,000 կիլովատի:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Աներեւակայելի չափերու կը հասնի ելեկտրական ուժի արտադրութիւնը: Մինչդեռ 1934-ին ելեկտրակայանները կուտային ժամը 41,000,000 կիլովատ, 1938-ին անոնք արտադրած են ժամը 350,000,000 կիլովատ:

Սորհրդային իշխանութեան 18 տարիներուն, Հայաստանի ելեկտրականացման համար յատկացւած է 209,500,000 ռուպլի:

Սեւան - Զանգու ջրվէժի ելեկտրակայաններէն երեքը արդէն անցեալ տարի կը բանէին, Երեւանի Առաջին Ջրեկտրակայանը, Երեւանի Երկրորդ Ջրեկտրակայանը, Քանաքեռի Ջրեկտրակայանը: Հայաստանի Սորհրդայնացման 20-րդ տարին, 1940-ին, Քանաքեռ Ջրեկտրակայանը արդէն իսկ կը գործէ իր լիակատար կարողութեամբ — 88,000 կիլովատով:

Հայաստանի ելեկտրականութեան զարգացումը խոշոր հեռանկարներ ունի:

Տակաւին անցեալ տարի հիմքը դրեցաւ Սեւան - Զանգու Ջրվէժի երկու ուրիշ ելեկտրակայաններուն: Ատոնցմէ մէկն է Գիւմրի մուշի Ջրեկտրակայանը, իսկ միւսը Լճային Ջրեկտրակայանն է, որ կը կառուցուի գետնի տակ այնտեղ, ուր Զանգու Գետը սկիզբ կառնէ Սեւան Լճէն:

Գիւմուշի եւ Լճային Ջրեկտրակայան կայաններու կառուցումով Սորհրդային Հայաստանը կունենա այն ամբողջ ելեկտրական ուժը, որ անհրաժեշտ է Երրորդ Հնդամեա Փլանով ձեռնարկւած արդիւնաբերութիւններու համար: Ոչ միայն այդ: Այնուհետեւ Հայաստանը կընա աժան ելեկտրական ուժ հայթայթել Անդրկովկասի կարգ մը ուրիշ արդիւնաբերութիւններուն համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ԱՌԱՒԵԼ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՍՍԱՐ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԻ:

Ահա Լենինի կտակը, զոր Սորհրդային պետութիւնը իրագործեց: Եւ Սոցիալիզմն այսօր արդէն յաղթանակած է, որու բարեքները կըմբռնեն 200,000,000 այրեր, կիներ եւ երեխաներ Սորհրդային Մեծ ընտանիքի անդամ 17 Հանրապետութիւններու մէջ:

Տեսնենք ուրեմն, թէ ի՞նչ նշանակութիւն ունեցաւ Սոցիալիզմը Հայաստանի աշխատաւոր մարդոց համար:

ԱՃԵՐ ԵՆ ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ ԹԻԻԸ ԱՆՈՆՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Ամենաարժէքաւոր դրամագլուխը, այդ մարդկային ուժն է:

Ահա թէ ինչ կըսէ ՍԹԱԼԻՆԸ: Իսկ արդիւնաբերութեան զարգացման զուգընթաց, ի՞նչ չափերով կըցած է աճիլ Սորհրդային Հայաստանի այդ ԱՄՆԱՍՐԺԻՔԱՌ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ, — բանւորական ուժը:

Մինչդեռ — Ցարի օրով Ամբողջ Հայաստանի մէջ կային 4,400 բանւորներ:

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ Հայաստանի բանւորներու եւ ծառայողներու թիւը 1935-ին կը հասնէր 101,000-ի, իսկ 1937-ին՝ 111,000-ի:

Ահա այն պատկառելի բանակը, որ անսասան կանգնած է աշխատանքի եւ պաշտպանութեան դիրքերու վրա՝ իր դրաւած դիրքերը ոչ մէկուն չդիջելու, այլ, ընդհակառակը, աւելի առաջաւոր դիրքեր դրաւելու վճռականութեամբ:

Այս փառաւոր յաղթանակի մէջ, ինչ որ ամենէն հիմնականն է, վերջնականապէս ոչնչացւած է աշխատանքի շահագործումը, մարդու շահագործումը մարդու ձեռքով:

Իայց ի՞նչպէս է, որ աշխատանքը մղձաւանջ է ուրիշ երկիրներու մէջ, իսկ այդ պատու գործ է Սորհրդային երկրի մէջ:

Որովհետեւ, մինչդեռ ուրիշ երկիրներու մէջ արդիւնաբերութիւնը միջոց է անհատական հարստութիւն գիգելու, Սորհրդային երկրի մէջ արդիւնաբերութիւնը նպատակ ունի սպասարկելու հասարակութեան, բարձրացնելու ժողովրդի բարեկեցութիւնն ու կըրթական մակարդակը:

Բնական է ուրեմն, որ Սորհրդային Հայաստանի արդիւնաբերական բուն վերելքի զուգընթաց պիտի բարձրանար նաեւ բանւորներու ապրելակերպը:

Տանք փոքրիկ աղիւսակ մը, որ պերճօրէն կը հայելիացնէ մեր ժողովրդի այսօրու ունեւոր կեանքը:

Բանւոր — ծառայողի մը տարեկան միջին աշխատավարձը եղած է —

- 1928-ին՝ 710 ռուպլի: 1934-ին՝ 1797 ռուպլի:

1935-ին՝ 2,500 ուսույլի:

1937-ին՝ 3,400 ուսույլի:

Այդ նոյն տարիներուն Հայաստանի բանւոր - ծառայողներուն վճարւած աշխատավարձի հանրագումարներն են:—

1928-ին՝ 30,100,000 ուսույլի:

1934-ին՝ 205,000,000 ուսույլի:

1935-ին՝ 259,000,000 ուսույլի:

1937-ին՝ 372,703,000 ուսույլի:

Բայց սխալ է ենթադրել, որ աշխատավարձը միայն կը կազմէ Խորհրդային մարդու բարեկեցութեան միակ աղբիւրը:

Խորհրդային մարդու բարեկեցութեան մէջ ոչ նւազ նշանակաւից դեռ կը խաղան:—

Ընկերային Ապահովագրութիւնը.

Առողջապահական Սպասարկութիւնը.

Բնակարանային եւ Հանրային Ծինարարութիւնները:

Տանք նաեւ այդ մարդերու մէջ կատարւած նւաճումներու ակնառու հանրագումարները:

* * *

Ընկերային Ապահովագրութիւնը Խորհրդային Ժողովուրդներու խոշորագոյն նւաճումներէն մէկն է: Ինչ բանի որ տարիներով ձգտեք է Ժողովուրդը ուրիշ երկիրներու մէջ եւ չէ կրցած հասնել, Խորհրդային Ժողովուրդը հասեր է:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընկերային Ապահովագրութիւնը կը կազմէ Խորհրդային կառուցւածքի, Խորհրդային սխառեմի անրաժան մէկ մասը, լայնանիստ սիւներէն մէկը:

Մինչդեռ Ամերիկայի մէջ հաստատւած Ընկերային Ապահովագրութենէն քիչ թւով բանւորներ կրնան օգտուիլ որոշ թւով շարաթներու համար՝

Խորհրդային Միութեան մէջ Ընկերային Ապահովագրութենէն կրնան օգտուիլ բոլոր բանւոր - ծառայողները եւ առանց շարաթներու թւի սահմանափակութեան:

Ցարի օրով

Գոյութիւն չունէր Ընկերային Ապահովագրութիւն:

Դաշնակցութեան օրով

Կեանքի եւ ինչքի ապահովութիւն չկար, ո՞ր մնաց Ընկերային Ապահովագրութիւն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի մէջ Ընկերային Ապահովագրութեան յատկացւած է:—

1929-ին՝ 4,288,000 ուսույլի:

1934-ին՝ 21,000,000 ուսույլի:

Աշխատանքի պաշտպանութիւնը դրւած է բարձր մակարդակի վրա: Այդ ուղղութեամբ հինգ տարւա ընթացքին յատկացւած է աւելի քան 2,400,000 ուսույլի: Շնորհիւ ձեռք առնւած արդելիչ միջոցներու՝ մահառիթ պատահարներու թիւը 1928-ի հազարին մէկ եւ մէկ քառորդէն իջեր է մօտաւորապէս 6,000-էն մէկի: Եւ եթէ 1928-ին արդիւնաբերութեան մէջ դժբախտ պատահարներու հետեւանքով վնասւածներու թիւը կը կազմէր հազարին մօտաւորապէս 3, 1932-ին իջած է մօտաւորապէս 7,000-էն մէկի:

* * *

Ժողովրդի առողջապահական սպասարկութիւնը Խորհրդային պետութեան կարեւորագոյն հաստատութիւններէն մէկն է:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Խորհրդային երկրի առողջապահական հաստատութիւնները պետական ձեռնարկութիւններ են:

Խորհրդային բժիշկը պետական ծառայող մըն է, որ կսպասարկէ Խորհրդային հասարակութեան՝ առողջապահական մարդի մէջ:

Եթէ ամենաարժեքաւոր դրամադրուիւր մարդն է, ապա, ուրեմն, այդ մարդը պէտք է ըլլա առողջ՝ իր լիեռանդ մասնակցութիւնը բերել կարենալու համար հասարակութեան առաջագրութիւններուն:

Այն ազգը, որ դուրի է կենսունակութենէ եւ չի կրնար սուր լիարիւն սերունդներ, դատապարտւած է դանդաղ մահացման, դատապարտւած է պատմութեան թատերաբեմէն անյայտանալու:

Ցարի օրով

Հայաստանի Ժողովրդի առողջապահական սպասարկութիւնը բոլորովին անտեսւած է եղեր:

Ցարի օրով

Ամբողջ Հայաստանի մէջ եղեր է 177 հիւանդանոցային մահահակ:

Դաշնակցութեան օրով

Վարչապետ Սիմոն Վրացեանի ըսելով:—

«Դեղօրայք չկար: Մարդիկ մեռնում էին անմոռնչ, հարիւրներով, հազարներով: Ժողովուրդը սպառնում էր վառող մոմի պէս»:

Դաշնակցութեան օրով

Քաղաքի մը մէջ, որ ունեցեր է 25,000 բնակչութիւն, մէկ տարւա մէջ 1918 Յունիս 18 - 1919, Յունիս 19, ըստ դաշնակ կառավարութեան արձանագրութիւններէն քաղւած տւեալներու, մահացած են 10,571 հոգի:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

Այդպիսի կառավարութեան ակնկալել, որ հողածու վերաբերմունք ցոյց տար դէպի ժողովրդի առողջութիւնը, կազմակերպէր ժողովրդական սպասարկութիւն, յիմարութիւն կըլլար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հիւանդանոցային մահճակալներու թիւը հասած էր արդէն.—

1934-ին՝ 1,788-ի:

1938-ին՝ 7,806-ի:

Հայաստանի մէջ հիւանդանոցներ եւ առողջապահական հիմնարկներ եղեր են.—

1923-ին՝ 44:

1938-ին՝ 320:

Հիւանդանոցներու եւ առողջապահական հիմնարկներու կառուցման համար ծախսած են՝ Հանրապետական եւ տեղական պիւտճէով.—

1937-ին՝ 53,458,300 ուսլի:

1938-ին՝ 56, 580,300 ուսլի:

Շնորհիւ յետամնացութեան եւ չքաւորութեան, նախա-Սորհըրդային շրջանին Հայաստանը դարձեր էր համաճարակային հիւանդութիւններու բոյն, հիւանդութիւններ, որոնք կը քամէին մեր ժողովրդի կենսունակութիւնը՝ անընդունակ դարձնելով զայն ստեղծագործական եռանդազին աշխատանքի:

Այդ համաճարակներու դէմ ուղղած էր առողջապահական ճակատի գլխաւոր կռիւնները:

Ահա, թէ ի՞նչ կըսէ այդ մասին կառավարական զեկոյց մը.—

«Աշխատաւորութեան բարեկեցութեան մակարդակի զգալի բարձրացումը, առողջապահական կանխողական ձեռնարկումների լայն կիրառումը մեծ չափով պակասեցրել է համաճարակային հիւանդութիւնները, որոնք անցեալում շատ էին տարածւած: Լայն չափով կիրառում են կանխարգել պատւաստումները, աւելացել է ախտահանիչ կամերաների թիւը, 1934-ին հիմնել է Պետական Սանիտարական Առողջապահական Տեսչութիւն: Վերջապէս մեծ աջակցութիւն են ցոյց տւել համաճարակային հիւանդութիւնների դէմ պայքարելու գործում նաեւ աշխատաւորներից կազմւած առողջապահական գունդերը»:

Շնորհիւ առողջապահական ճակատի վրա տարւած փայլուն յաղթանակներու, մոմի պէս հալող մեր ժողովուրդը վերածեցաւ աշխատանքի եւ պաշտպանութեան պողպատեա զնդերներով անպարտելի բանակի:

Սորհըրդային բանւորը կը գործէ հինգ օր եւ օրը եօթը ժամ, ամեն վեցերորդ օրը հանգիստ կընէ:

Հիմա միայն, երկրի պաշտպանութիւնը ուժեղացնելու հարկաւորանքի տակ, Սորհըրդային բանւորները, իրենց արհեստակցական միութիւններու նախաձեռնութեամբ, կը գործեն վեց օր, օրը ութը ժամ եւ եօթներորդ օրը հանգիստ կընեն:

Բայց սա արդէն հերոսութիւն է:

Բայց սա արդէն պատու եւ հայրենասիրութեան գործ է:

Աշխատավարձի տարւէ տարի բարձրացման զուգընթաց, կենսամթերքներու եւ սպառման աւարկաներու դնելը կիջեցւին: Ուրեմն, Սորհըրդայի մարդու բարեկեցութեան մէջ դէր կը խաղան՝ մէկ կողմէն աշխատավարձի բարձրացումը, միւս կողմէն ապրանքներու դնելու իջեցումը:

Ուսուլին դրեցաւ ոսկի հիմքի վրա եւ կայունացաւ: Դարձեալ բանւորներու աշխատավարձերը չկրճատեցան, այլ տարւէ տարի աւելցան աներեւակայելի համեմատութիւններով:

Կենսամթերքներ իւրացնելու քարտային սխտեմը 1934-էն ի վեր այլեւս պատմութեան կը պատկանի: Սորհըրդային երկիրներու մէջ բառին բովանդակ առումով, լիառատութիւն կը տիրէ:

Իմփերիալիստական երկրորդ պատերազմի այս օրերուն, երբ Եւրոպայի մէջ նոյնիսկ ոչ պատերազմիկ երկիրները քարտային սխտեմ ստեղծեցին, Սորհըրդային Միութեան մէջ, նոյնիսկ Ֆին-Սորհըրդային պատերազմի օրերուն, կենսամթերքները չնւազեցան եւ դնելը չբարձրացան:

Ընդհակառակը: Երրորդ Հնդամեա Փլանը կը յառաջադրէ, որ Սորհըրդային ՀԱՅԸ այնքան առատ պիտի ըլլա, ինչքան Չուրբանօթի մարդը հացը պիտի ուտէ այնպէս, ինչպէս ծառաւի մարդը կը խմէ Չուրբ:

Սորհըրդային Միութիւնը դարձեր է արդէն հնադարեան ժողովուրդներու երեւակայած առատութեան եղջիւրը:

* * *

Սորհըրդային Հայաստանի, ինչպէս Սորհըրդային Միութեան բոլոր միւս Հանրապետութիւններու մէջ, վիժումը արդիւրւած է:

Այդ ինքնին կը վկայէ մեր ժողովրդի երջանիկ եւ հրճալից կեանքի մասին: Միշտ ալ, սակայն, մայրն ու մանուկը եղած են Սորհըրդային ժողովրդի պետական եւ հասարակական հողածութեան առարկան:

Այդ է պատճառը, որ, ինչպէս Սորհըրդային Հայաստանի Նախագահ Մացակ Պապեանը կըսէ, «Մեր երկրի ուրախ եւ երջանիկ մայրերը երկրին տալիս են առողջ ու կենսուրախ երեխաներ»:

Սորհըրդային բժշկութեան մէջ ուրոյն տեղ կը զբաւեն մայրու-

թեան, մանկութեան եւ դեռահասներու հոգատարութիւնը: Անոնց համար ստեղծած են համապատասխան հիմնարկներ:

Յարի եւ դաշնակցութեան օրով

Այդ կարգի հիմնարկներ գոյութիւն չեն ունեցած եւ չէին ալ կրնար ունենալ: Երկու վարչաձեւերն ալ կը ծառայէին հոգատէրերուն եւ փողատէրերուն, որոնք այդպիսի սպասարկութեան կարիք չունէին: Չկա երկիր մը, ուր հոգատէրերն ու փողատէրերը թոյլ տան իրենց կառավարական գործադիր մարմինն՝ ժողովրդական խաւերու առողջապահութեան, մայր ու մանկան սպասարկութեան հարցերով զբաղելու:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Մայրութեան, մանկութեան եւ դեռահասներու պահպանութեան գործով զբաղող հաստատութիւններու թիւը եղած է՝

1929-ին՝ 14 (7 բժիշկներով):

1934-ին՝ 34 (23 բժիշկներով) եւ 1787 մնայուն մահճակալներով:

Թէ վերջին 6 տարւա ընթացքին ո՛ր չափով աճեր է այդ հաստատութիւններու թիւը, դժբախտաբար արգիական տւեալ չունինք մեր ձեռքի տակ:

Յ. Յարութիւնեանի 1939-ի զեկոյցէն կը տեղեկանանք, որ նոյն տարին Հայաստանի մէջ կառուցւած են 9 ծննդատներ:

Մանկամտուրները ոչ նւազ կարելոր դեր խաղացած են Հայաստանի երեխաներու առողջ մեծնալուն մէջ:

Հայաստանի մէջ մշտական մտուրներ գոյութիւն ունեցած են՝

1936-ին՝ քաղաքի մէջ 58, գիւղի մէջ 12:

1937-ին՝ քաղաքի մէջ 63, գիւղի մէջ 13:

1938-ին՝ քաղաքի մէջ 83, գիւղի մէջ 27:

Բացի այս, ցանքի եւ բերքահաւաքի ժամանակ գիւղերու մէջ կազմակերպւած են ժամանակաւոր մտուրներ, որոնց թիւը այժմ արդէն կը հասնի մի քանի հարիւրի եւ մահճակալներու թիւը աւելի քան երկու տասնեակ հազարի:

Որպէսզի երեխան ոչ մէկ հոգածութենէ չզրկուի աշխատաւորական ընտանիքի մէջ, Սորհրդային Հայաստանի կառավարութիւնը ահազին օժանդակութիւն տւած է բազմազաւակ մայրերուն:

Բազմազաւակ մայրերուն Սորհրդային Հայաստանի կառավարութեան տւած դրամներու հանրագումարը կը հասնի 28,078,000 ռուպլիի:

Նախագահ Մացակ Պապեանի զեկոյցէն կը տեղեկանանք.—

«Բազմաթիւ է 9 - 10 - 11 - 12 եւ աւելի երեխա ունեցող մայրերը բազմաթիւ են, որոնք կստանան խոշոր գումարներ:

«Օրինակ՝ Ամասիայի շրջանի Իլլի գիւղի բնակչուհի Նոյեմ Մովսիսի Յովհաննիսեանը ունի 11 երեխա, 10-րդ երեխայի համար ստացեր է 2,000 ռ., 11-րդ երեխայի համար 1938-ին ստացեր է միանւազ 5,000 ռ., մինչեւ 1940-ին պիտի ստանա տարեկան 3,000 ռ.:

«Սորհրդային Հայաստանի, բնակչութեան կէս միլիոնը՝ Սորհրդային իշխանութեան տարիներու ծնունդն է, ուրախ եւ երջանիկ հայրենիքի զաւակ»:

Մինչեւ 20 տարի առաջ՝ տիրող չքաւորութիւնը քայքայման եղրին էր հասցուցած Հայ ընտանիքը: Սորհրդային իշխանութիւնը ամբացուց ընտանիքի հիմերը եւ զայն դրաւ նոր, մինչեւ հիմա չտեսնւած բարձրութեան վրա՝ ապահովելով մեր ազգի յետագա աներեւակայելի աճումը:

Բազմաշարժար եւ հալածական Հայ ժողովրդի զաւակները դադրեցան մոմի պէս հալելէն, սկսան գեղուղեշ նոճիկներու պէս հասակ նետել եւ իրենց ցնծութեան կենսախնդ երգերով զարթացնել նորափթիթ ծաղկոցը, Սորհրդային Հայաստանը:

* * *

Սորհրդային իրականութեան մէջ խոշոր տեղ կը դրաւն հանրային շինարարութիւնները, որոնք կը վուչին կոմունալ շինարարութիւններ: Ի՞նչ կարգի ձեռնարկ կը հասկնանք հանրային կամ կոմունալ շինարարութիւններ ըսելով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Ջրմուղ, կոյուղի, բաղնիք, հիւանդանոց, հանրակառք, օթոն - փոխադրութիւն, մայթ, սալաշատակում, կանաչադարձում, հրշիջային պաշտպանութիւն, փողոցներու լուսաւորութիւն, տեղական երեկոտրակայաններ, աղբահաւաքում եւ հրկիզում եւ այլն:

Յարի օրով

Գոյութիւն ունեցեր են մէկ չնչին ջրմուղ, 6 փոքր բաղնիք՝ դուրի առողջապահական միջոցառումներէն, հինգ մանր երեկոտրակայան, աղբահաւաքութեան աննշան միջոցներ այն ալ հազիւ թէ մէկ քանի տեղեր, ձիաքարչ հանրակառք մը Երեւանի մէջ:

Դաշնակցութեան օրով

Ոչ մէկ կոմունալ շինարարութիւն: Յարիզմէն ժառանգ մնացած հանրային շէնքերը սկսած են աստիճանաբար քայքայուիլ եւ փակուիլ: Երեւանի ձիաքարչ հանրակառքը քայքայուած է եւ չքացած է ամբողջապէս: Յարիզմէն ժառանգ մնացած 10 մանր երեկոտրակայաններու արտադրական կարողութիւնը իջած է մէկ հինգերորդի: Դաշնակ վարչաձեւը դարձած էր հոմանիչ մը մահառիթ չքաւորութեան եւ կործանիչ քայքայման:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Երեւանը ամբողջապէս պատած է ջրմուղով: Բետոնէ ջրմուղը, որ 40,000 խորանարդ մեթր ջրային տարողութիւն ունի, Ղըրըխ - Բուլաղի ընտիր ջուրը կը բերէ Երեւան: Եւ հիմա մայրաքաղաքի բնակիչները իրենց յարկաբաժիններու մէջ ունին ջրի մէկէ աւելի ծորակներ: Եւ հիմա Երեւանի ջրմուղը իր ցանցը կը տարածէ մինչեւ նոր աւանները, նոր Արաբկիր, նոր Սեբաստիա, նոր Մալաթիա, նոր Քղի, նոր Խարբերդ, նոր Կեսարիա, Սովետաշէն, նոր Կեանք եւ այլն: Հայաստանի վեց քաղաքներու մէջ կառուցուած ջրմուղներու երկարութիւնն է 100 ջրլոմեթր:

Երեւանն արդէն ունի իր արդիական կոյուղին՝ օժտուած գոման եւ հրկիզման վերջնագոյն մեքենականութեամբ:

Երեւանի փողոցներէն այժմ արդէն կը սուրան ելեկտրական հանրակառքեր ամեն ուղղութեամբ: Ետտ չանցած նոր աւանները, էջմիածինը, Քանաքեռը, Ղամարլուն եւ Աշտարակը ելեկտրական գծով կը միանան Երեւանին: Լենինականը կուենա նաեւ իր ելեկտրական հանրակառքերը:

Հիմա Երեւանի մէջ կան արդիական բաղնիքներ:

Հիմա բաղնիքներ կան Հայաստանի բոլոր քաղաքներու, աւաններու եւ գիւղերու մէջ: Բաղնիքներ կան ամեն մէկ գործարանի եւ խոշոր ձեռնարկութեան կից:

Հիմա հրշիջային կայաններ կան ոչ միայն Երեւանի եւ այլ քաղաքներու մէջ, այլ նոյնիսկ բազմաթիւ մեծ գործարաններու եւ գործարանախմբերու կից:

Մեծ եռանդով առաջ կը տարւին քաղաքներու, աւաններու եւ գիւղերու կանաչադարդումը:

Մինչդեռ առաջ Երեւանի 9 եւ կէս հեկտար տարածութիւնը միայն կանաչադարդուած էր, այժմ արդէն կանաչադարդուած տարածութիւնը կը կազմէ 268 հեկտար:

Բոլոր արդիւնաբերական շրջաններու եւ թաղամասերու մէջ լաւապէս կաղմակերպուած է աղբահաւաքումն ու հրկիզումը:

Հիմա ելեկտրականութիւնը կը լուսաւորէ ոչ միայն քաղաքներու փողոցները, այլ եւ Հայաստանի անդնդախոր ձորերու մթութիւնը, Հայաստանի սարայանջերն ի վեր օձապտոյտ մաղցող եւ ձորերն ի վար դահապէժ իջնող ճանապարհներն ու արահետները:

Խորհրդային իշխանութեան տարիներուն բացի Հանրապետական խոշոր ելեկտրակայաններէն, կառուցուած են մօտաւորապէս չորս տասնեակ տեղական ելեկտրակայաններ, որոնց շնորհիւ ձէթի մրոտ ճրագը փոխանակուած է պլաժառ ելեկտրալամբերով: Այդ համեմատաբար մանր ելեկտրակայանները նաեւ դարկ տւած են տե-

ղական արդիւնաբերութիւններու զարգացման եւ երկրագործական շատ մը արտադրութիւններու մեքենայացման:

Հիմա Երեւանը բիւրուար ելեկտրական ջահեր կը վարէ ամեն գիշեր: Կարծես ամեն գիշեր ցայգահանողէս է Երեւանի մէջ:

Տարւէ տարի կը սալայատակին կամ ասֆալտով կը պատւին քաղաքներու եւ աւաններու փողոցներն ու հրապարակները: Երեւանը շրջապատող լեռկ սարերը կը ծառապատւին: Երկիրը կաղատւի փոշիէն ու ցեխէն, դուրս դալով լուսաւոր կեանքի ճանապարհը:

Կոմունալ շինարարութեան մէջ խոշորագոյն նւաճումներ արձանագրած է բնակարանաշինութիւնը:

Մեր երկիր մէջ, նախ քան Խորհրդային իշխանութիւն հաստատուիլը, բնակարաններ համարեա թէ գոյութիւն չեն ունեցեր բառին արդիական ըմբռնումով:

Հայաստանի գիւղացիութիւնը ապրած է տակաւին Քսենոփոնի ժամանակաշրջանէն ժառանգ մնացած դետնափոր հիւղերու եւ ցեխէ շինուած ցած խրճիթներու մէջ, որոնց մէջ օդն ու լոյսը հաղիւ թէ կրնային թափանցել:

Ետտ տեղեր Հայաստանի բնակիչները կապրէին գոմերու մէջ, անասուններէն անջատուած բարձր տախտակամածով մը: Այդ գոմերն այնքան անյարմար էին նոյնիսկ անասուններու առողջութեան տեսակէտէն, որ Խորհրդային հասարակութիւնը բնակարանաշինութեան զուգընթաց ձեռք զարկաւ արդիական գոմաշինութեան: Եւ այժմ, կարելի է ըսել, առանց տարակուսելու, որ Հայաստանի հաւաքական աղբարակները ծածկուած են լուսաւոր, օդատուն եւ արդիական անասնաբուժութեան բոլոր յարմարութիւններով օժտուած գեղեցիկ գոմերով, որոնք կրնան Եւրոպական եւ Ամերիկեան մեծ քաղաքներու սլոմներու մէջ իրենց գոյութիւնը քարշ տուող, հիւժոդ ու մաշող չքաւոր բնակչութեան նախանձը զրգռել:

Համայնապատկերը շատ ալ տարբեր չէր մայրաւան Երեւանի մէջ:

Նախ քան Խորհրդայնացումը, մեր երկիրը ոչ միայն գուրկ էր արդիական բնակարաններէն, այլ հնադարեան դետնափոր հիւղերն ու ցած խրճիթներն ալ քար ու քանդ եղած էին պատերազմի ժամանակ:

Խորհրդային նորաստեղծ կառավարութիւնը կանգնած էր բնակարանային տաղնապի հետ դէմ գիմաց:

Խորհրդային կառավարութիւնը տխտանական ջանքերով երկիրը դուրս բերաւ այդ վիճակէն:

Խորհրդային Հայաստանի մէջ, մինչդեռ առաջ ճարտարապետները մտահոգուած էին արագօրէն կառուցանելու եւ բնակչութեան

ապաստարաններ տալու հարցով, այժմ արդէն մտահոգւած են՝ ՈԶ ՄԻԱՅՆ ՅԱՐՄԱՐ, ԱՅԼ ԳԵՂԵՅԻԿ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ տալու հարցով:

Սորհրդային իշխանութեան օրով բնակարանաշինութեան վրա ծախսւած է ոչ թէ մէկ քանի տասնեակ միլիոն, այլ մինչեւ 1938 ծախսւած է 170,000,000 ռուպլի, իսկ հանրային շինարարութեանց վրա ծախսւած է 91,400,000 ռուպլի:

Շնորհիւ կադմակերպւած եւ փլանաւորւած շինարարութեան, ինչպէս տակաւին երկու տարի առաջ Սորհրդային հրապարակապիւր մը դիտել կուտար՝

«կառուցւել եւ բարձրացել են հոյակապ բանտրական աւաններ ու շէնքեր — Երեւանում, Լենինականում, Կիրովականում, Արթիկում, Ալավերդում եւ այլն»:

Յարի օրով

Հայաստան ունէր երկու քաղաք, Երեւանն ու Ալեքսանդրապոլը (այժմ Լենինական), որոնք աւելի շուտ կը նմանէին հնադարեան յետամնաց աւաներու:

Դաշնակներու օրով

Երեւան մայրաւանն ու Ալեքսանդրապոլ աւանը մտած էին արագորէն քայքայման ընթացքի մէջ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Շնորհիւ երկրի հսկայաթափ արդիւնաբերականացման եւ բնակարանաշինութեան հոյակապ ծրագրերնու կենսագործման, այժմ արդէն Հայաստանն ունի 18 քաղաքներ, ուր կառուցւած են բնակարաններ, 300,000 քառակուսի մեթր տարածութեան վրա:

Հիմա արդէն գորշ խրճիթներէն հազիւ նկատելի մնացուկներ կան Երեւանի մէջ, եւ Հայաստանի այդ նորակերտ պարտէզ — մայրաքաղաքի համայնապատկերի վրա Արթիկի տուֆէ նարակառոյց հոյակապ շէնքերը կը բարձրանան նորափթիթ վարդերու նման:

Նորակառոյց թաղերն ու նորակերտ քաղաքներն ու աւանները, ուր առաջնակարգ եւ երկրորդական բնակարաններ չեն կառուցւիր, ուր բոլոր բնակարանները կը շինւին բոլոր քաղաքացիներու համար, կը վկայեն այն մասին, որ մեր երկրի մէջ ստեղծւած է միասնական ժողովուրդ՝ առանց դասակարգային շերտաւորումներու, տէր՝ իր ճակատագրին եւ հալալ վաստակին:

Հայաստանի շինարարութիւնը պերճախօսօրէն կը վկայէ այն մասին, որ անդասակարգ հայ ժողովուրդը, հանճարեղ եւ ստեղծագործող, կորովի եւ միակամ՝ համընթաց Սորհրդային մեծ Միութեան բոլոր ժողովուրդներուն, մեր երկիրը կը կերտէ կրանիթով, մարմարով, ցիմենտով, տուֆով, երկաթով եւ լոյսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Յարական ինքնակալութիւնը Հայաստանի վրա նայած է որպէս ծայրագաւառ, որպէս տեսակ մը գաղթաւայր:

Յարական ինքնակալութեան օրով Հայաստանը եղեր է յետամնաց գիւղատնտեսական չքաւոր երկիր:

Յարական ինքնակալութիւնը, որ թշնամի էր ամեն տեսակ յաւաքիմութեան, ամենաբիրտ կերպով ճնշեր է այդ յետամնացութենէն եւ չքաւորութենէն դուրս գալու Հայաստանի գիւղացիութեան բոլոր ջանքերը, Յարական ինքնակալութիւնը կալանաւորեր եւ ամուր փականքի տակ էր առեր Հայաստանի ժողովրդի ստեղծագործող ուժերն ու կորովը:

Հայաստանը ջրառատ երկիր է, բայց ցարկան ինքնակալութիւնը չէր ձգեր, որ գիւղացիութիւնը ջրանցքներ կառուցանէր եւ օգուէր կենսատու այդ ջրերէն:

Իայց այդքանով չէր սահմանափակւեր նախա-Սորհրդային շրջանի դաժան իրականութիւնը:

Հայաստանի գիւղացին կը կողոպտէին կալածատէրերը, վաշխառուն, ցարկան ինքնակալութիւնը եւ նորին վեհափառութիւն նիքոյա ցարի ողորմածութեամբ դաշնակ մաուզերիստները:

Նախա — Սորհրդային Հայաստանի սրտակեղծք մէկ պատկերը աւած է ժամանակակից մեծագոյն Հայ բանաստեղծը, Յովհաննէս Թումանեանը. —

«Ձեռս պակաս, ուժս հատած,
Հագար ու մի ցաւի տէր,
Ինձ եմ նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Են օրն Եկան քովջի արին,
Հարկ եմ ուզում տէրութեան,
Ինչ տամ կորին ու բեկեարին,
Վարի, վարի իմ գութան:

Պարտքատէրը գանգատ գնաց,
Քեռիսովէն կը գա կը ծեծի,
Տէրտէրն օրհնեց անվարձ մնաց
Կրականա, կանիծի»:

Հոկտեմբերեան Յեղափոխութեան երկաթէ բռունցքի տակ Յարական ինքնակալութեան փոշիացումէն յետո, դաշնակներու երկիցս

անիծեալ վարչաձեւը չթեթեւացուց, այլ ծանրացուց Հայաստանի ժողովրդի վիճակը:

Դաշնակ վարչաձեւը նոյնպէս չէր մտածեր երկիրը գիւղատընտեսական վիճակէն դուրս բերելու մասին: Դաշնակները ինքզինքնին կը նկատէին Յարական ինքնակալութեան ժամանակաւոր աւանդապահները: Անոնք արդէն Տենիքինի հետ համաձայնած էին, որ Հայաստան վերստին մասը պիտի կազմէր ցարական Ռուսաստանի, եթէ Սպիտակ Բանակայինները յաջողէին տապալել նորաստեղծ Խորհրդային իշխանութիւնը: Իսկ Տենիքինի պարտութեան պարագային, դաշակ վարչաձեւը Հայաստանը կը նկատէր որպէս Անդրլիական դադիւթավայր:

Արշակ Զամալեանը «վարլամենտ»ի բեմէն կը յայտարարէր, որ «քանի հում նիւթի չուկա լինենք եւրոպայի արդիւնաբերական երկիրներէ համար, այնքան մօտ կը լինենք քաղաքակրթութեան, եւ այդ պատիւ է մեզ համար»:

Դաշնակ վարչաձեւը, սակայն, ոչ միայն Հայաստանը արդիւնաբերականացնելու ծրագիրը չունէր, այլ ծրագիրը չունէր նոյն իսկ գիւղատնտեսութիւնը դուրս բերելու իր յետամնացութենէն:

Դաշնակ վարչաձեւը ունէր միայն մէկ ծրագիր: Այդ՝ Հայաստանի գիւղացիութիւնը թալանելու ծրագիրն էր:

Դաշնակ Փարլամենթի դարակներէն հանւած փաստաթուղթ մը վաղափար մը կուտա, թէ ինչպէս թալանելու այդ միակ ծրագիրը չտեսնւած եռանդով առաջ կը տանէին դաշնակ կոմիսարները առանձին շրջաններու եւ գիւղերու մէջ:—

Փարլամենթի նախագահութեան ուղղւած իրենց բողոքի մէջ Սաղմոսավանքի, Պիրազանի, Սամազարի եւ Կարաուսի ժողովուրդները կը յայտնեն, թէ դաշնակ մատուցելու Կոմիսար Շախեանցը հետեւեալ շահատակութիւնները կընէ:—

1.— «14 արբա (կառֆ) ցախ հաւաքեց եւ ուղարկեց Երեւան, Էնուքիւն կատարելուց յետո պարգեց, որ նրանցից չոր արբաւն իրեն տունը դատարկեց պատվաւում (կայարանում) իսկ մնացածը ծախեց:

2.— Ամեն օր գիւղից խոտ հաւաքում մինիստրութեան հրամանով գործի համար, բայց պարգեց, որ 9 ԱՐԱԲԱ ԽՈՏ ԹԱՓԵՑ ՍԻՐԱՆ ԳԵՌԳԻ ՍԿԼԱԴԸ (պահեստ մթերանոց), որը գտնուում է Ղաթարի մօտը: Էս վերջին քալանից վերցրած է մի արբա, որի հետ կար 10 հատ խալիչա, վեց մեշուկ (պարկ) ալիւր, մի ձի եւ 9 կով: Պարգեց որ 4 կովը հինգ խալիչան մի ձին ուղարկած է ԱԻԱԳ ԹԱԼԱՆՁԻ ՈՒՅԵԳՎԻՆԻ ԿՈՄԻՍԱՐ ԱՆԿՈՏՈՎԻՆ, իսկ 2 կովը 2 խալիչան ուղարկուում է ԱԻԱԶԱԿԱՊԵՏ ԱՐՍԷՆ ԱՂԻՆ: Մէկ կովը սատկած էր մորթեցին լաւ քեֆ արեցին, 2 կովն էլ գտնուում է ՇԱԽ-

ԵԱՆՑԻ Մօտ: Ամենամեծ դաւանանութիւնը այն է, որ մօտիկ օրերու մեր գիւղերից խուզարկւած գէնեքից 10 հատ Ռուսական ՄՈՍԻՆ 2 Թուրքական եւ մէկ Բերդանկա իր 3 մտերմիկ արածնիկների, որից եւ մէկը ես եմ, տարանք Չանգիբասար Թուրքերի մէջ եւ Հանի Իրգային ծախեցինք 40 հազար բունի եւ 30 հազար բուն ստացանք եւ 3 արբա սոխ բերեցինք եւ լաւ օգուեցինք:

Այս բոլորից յետո այս քանի օրը յայտնեց բոլոր գիւղացիներին, որ բոլոր ցանած արտերը պատկանում են իրեն (Շախեանցին) եւ դրանով ուզում է մեր մի կտոր հացը խլել մեզանից: Մեզանից մի քանիսն ասին, որ չենք տա եւ կը գնանք մինիստրութեան գանգառ, նա շատ բարկացաւ, մի քանիսն էլ ծեծեց, ասելով, ինչ ուզում էք եւ ուր ուզում էք գնացէք, բոլորին հէրն էլ անիծած լինի:

Այս բոլորից յետո նա աւելացրեց, թէ իմ ձեռքերս են Անդանովը (Ուլեգդինի աւագ քալանչի կոմիսարը), իսկ գլուխս Տրդատեանը, ինչ ուզում էք արէք: Խնդրում եւ աղաչում եմ ազատեցէք մեզ այս գազան մարդուց:

Մենք Բոլորս էլ կստորագրեմք, բայց նկատի ունենալով, որ մեր կառավարութիւնը կարող է ուշ միջոցներ ձեռք առնել եւ այն ժամանակ մեզ բոլորիս էլ նա միանգամայն գնդակահարել կտար»:

Փարլամենտի նախագահը վերոյիշեալ դիմումագիրը կուղարկէ Ներքին Գործոց նախարարութեան:

Իսկ Ներքին Գործոց նախարար Գիւլխանդեանը դիմումագիրը ետ կը վերադարձնէ հետեւեալ մակագրութեամբ:—

«Սոյն գրութիւնը վերադարձնելով, պատիւ ունիմ յայտնելու, որ Ներքին Գործոց Մինիստրութիւնը (նախարարութիւնը) սկզբունքով դէմ է անոնիմ (անստորագիր) նամակներին կամ գանգառներին ընթացք տալու»:

Ներքին Գործոց պարոն նախարարը ընթացք չտաւ երբեք ստորագրւած բողոքագիրներուն եւ դանդառներուն եւս:

Եւ ի՞նչպէս կրնար ընթացք տալ, չէ՞ որ Շախեանցի կատարած թալանը մէկ առանձին երեւոյթ չէր, այդ ընդհանուր սխտեմի մէկ օղակն էր միայն, գլխաւոր թալանձիները նստած էին դաշնակ Դաշլիճի եւ Կեդրոնական Բիւրոյի մէջ:

Հայաստանի ժողովուրդն այդ վիճակէն դուրս բերելու, Հայաստանի ժողովուրդը վարչելի այդ դրութենէն դէպի լուսաւոր կեանքի ճամբան առաջնորդելու առաքելութիւնը վիճակւած էր Խորհրդային իշխանութեան:

Եւ այդպէս ալ եղաւ:

Ամենէն առաջ Խորհրդային իշխանութիւնը հողը տաւ Հայաստանի գիւղացիութեան:

Եւ ապա, Սորհրդային իշխանութիւնը, երկրի արդիւնաբերականացման զուգընթաց բուն թափով առաջ մղեց զիւղատնտեսութիւնը, դուրս բերաւ զիւղատնտեսութիւնը իր դարաւոր յետամնացութենէն, օժտեց զիւղատնտեսութիւնը արդիական մեքենականութեամբ եւ գիտութեան հարուստ փորձով, Հայաստանի զիւղացին իջաւ աւանդական էջէն եւ նստաւ սողապատէ երեւարի, թրաքթորի վրա, զարկ տաւ ուղեման ծրագրին եւ վերակազմեց զիւղատնտեսութիւնը Սորհրդային ազարակներու ու հաւաքական ազարակներու հիմքերու վրա, այն հիմքերու վրա, որոնք միայն կարող էին ապահովել զիւղատնտեսութեան լիարուստ զարգացումը եւ երաշխաւորել մշակութային եւ ունեւոր կեանք մը Հայաստանի զիւղացիութեան համար:

Վաթսուներ հինգ տարեկան հայ զիւղացի մը, Երեմ բիձէն, ընդամենը աշուղական չորս տողի մէջ մեղի կուտա իր նախա-Սորհրդային եւ յետ-Սորհրդային կեանքի սուր հակադրութիւնը:—

Վաթսուներինց տարին ես առել եմ,
Քսան տարին եմ ես ապրում,
Էն քն հարքած քամքի վրէն
Ոտքս քարին էլ չի առնում:

Երեմ բիձէի այս խօսքերն ուղղած են Սթալինին, զոր ան «աշխատողի նոր արեւ» եւ «մեծ բարեկամ» կանւանէ:

Կան հիասքանչ թիւեր, որոնք պերճախօսօրէն կը պատկերացնեն Սորհրդային Հայաստանի նւաճումները զիւղատնտեսութեան մէջ:

Զբաղւինք այդ թիւերով:

ՑԱՐԻ ՕՐՈՎ

Ոռոգելի հողերու ընդհանուր տարածութիւնը եղեր է 97,000 հեկտար:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ոռոգելի հողերու տարածութիւնը իջեր է 60,000 հեկտարի, իսկ հացահատիկ ցանէր է միայն 78,400 հեկտար (մէկ հեկտարը մօտաւորապէս 2.50 արտավար է):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ոռոգելի հողերու տարածութիւնը 1939-ին հասեր է 172,500 հեկտարի, իսկ նոյն տարի ցանւած հացահատիկներու տարածութիւնը միայն կը կազմէ 357, 700 հեկտար:

Այս տարի Հայաստանի հաւաքական ազարակապանները, հոյակապ նախաձեռնութեամբ, ի գլուխ հանեցին Նալբանդի ջրանցքի կառուցումը եւ ձեռնարկեցին Սիսիանի ջրանցքի կառուցման գործին: Ոռոգման այդ երկու մեծ ձեռնարկութիւնները, ինչպէս նաեւ

բազմաթիւ աւելի փոքր ջրանցքներու բացումը, քանի մը տասնեակ հազար հեկտար եւս աւելցուցին Հայաստանի ոռոգելի տարածութիւններու վրա:

Եթէ Հայաստանի տարածութիւնը չափէինք օգտագործւած հողերու ծաւալով, ինչ քան փոքր էր Հայաստանը ցարերու օրով, ինչ քան աւելի փոքրացաւ, սմբեցաւ մասնաշրջաններու օրով, եւ ինչ քան մեծ է ան հիմա Սորհրդային իշխանութեան օրով, ինչքան աւելի մեծ կը լինի վաղը, համընթաց՝ Սորհուրդներու ուժի յարատեւ աճման:

Նւաճել երկրի արդիւնաբերական եւ զիւղատնտեսական ամբողջ կարելիութիւնները եւ ստեղծել նոր, ապշեցուցիչ կարելիութիւններ՝ այդ կրնա կատարել միմիայն Սորհրդային իշխանութիւնը:

* * *

Սորհրդային Հայաստանի զիւղատնտեսութիւնը բուն թափով զարգացած է ամբողջ զիւղատնտեսութիւնը հաւաքական եւ Սորհրդային ազարակներու մէջ կազմակերպելու հիման վրա:

ՀԱԻԱՔԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԳԱՐԱԿՆԵՐԸ

Նախա-Սորհրդային շրջանին Հայաստանի զիւղատնտեսութեան

զարգացման խոչնդոտ էին նախ Յարական ինքնակալութիւնը եւ ապա դաշնակ մասնաշրջանները:

Հայաստանի Սորհրդայինացումով այդ արգելքները յաղթահարւած էին վերջնականապէս եւ անվերականգնելիօրէն:

Բայց կար մէկ ուրիշ արգելք:

Այդ անտեսութեան անհատական ձեւն էր:

Անհատական մանր հողամշակութիւնը կարելիութիւն չէր տար մեքենայացած արդիական զիւղատնտեսութիւն ստեղծելու, հողը գիտականօրէն մշակելու եւ առաւելագոյն բերքն ստանալու անկէ:

Ի՞նչ կը ներկայացնէր Հայաստանի զիւղատնտեսութիւնը մինչեւ 1928 թւականը, Հայաստանի տնտեսական զարգացման Առաջին Հնգամեա Ծրագրի նախօրեակին:—

— Արտադրական հիմնական միջոցները ցրւած էին մանր անհատական տնտեսութիւններու մէջ: Ճիշտ է, որ այդ տնտեսութիւններէն եւ ոչ մէկը արդիական մեքենաներ չունէին: Բայց կար մէկ ուրիշ հանգամանք: Անգամ գիւղատնտեսութեան ամենամալուական գործիքներու հաւաքական օգտագործումը՝ կրնար խոշոր բարիքներ ապահովել Հայաստանի գիւղացիներու համար:

Սորհրդային իշխանութիւնը, իր հաստատման առաջին օրէն, թէեւ ջնջած էր կալւածատէրերու սեփականութեան իրաւունքը հողերու վրա, բայց կուլակային տարրը երկար ժամանակ ունէր զգա-

լիօրէն գերակշռող դերք: Կուլակները կը ներկայացնէին գիւղացիութեան վերնախաւը, հարուստ մասը: Օգտուելով գիւղատնտեսութեան յետամնացութենէն եւ դաշնակներու տիրապետութեան օրով ծայր աստիճանի քայքայածութենէն, մանաւանդ Խորհրդային իշխանութեան սկզբնական տարիներուն երկրի տնտեսութիւնը կազմակերպելու համար առկա հսկայական դժուարութիւններէն, կուլակները, թուով քիչ մարդիկ, կը յափշտակէին գիւղի բարեկեցութեան միջոցները եւ չէին թողուր, որ գիւղատնտեսութիւնը դուրս գա իր աւանդական յետամնացութենէն:

Յաղթահարելով կուլակային տարրերու բուռն եւ յամառ ընդդիմութեան, Խորհրդային կառավարութիւնը ձեռնարկեց գիւղատնտեսութիւնը հաւաքական եւ խորհրդային ազարակներու մէջ կազմակերպելու գործին:

Այնուհետեւ անցեր է 12 տարի:

Եւ 12 տարեա ընթացքին ամբողջապէս փոխւած, անճանաչելի է դարձած Հայաստանի գիւղատնտեսութիւնը:

Նախկին փոշիացած, չքաւոր եւ յետամնաց տնտեսութիւններու տեղ, այժմ առաջ են եկած միլիոնատէր, փարթամ եւ արդիական հաւաքական ազարակներ:

Որո՞նց կը պատկանէր Հայաստանի հողը ցարական ինքնակառութեան եւ դաշնակ վարչաձեւի օրով, եւ որո՞նց կը պատկանի այժմ Խորհրդային իշխանութեան օրով:

ՅԱՐԻ ՕՐՈՎ

Հայաստանի ամբողջ հողերու հարիւրին 70-ը կը պատկանէր վանքերուն, կալածատէրերուն եւ կուլակներուն:

Յարական կառավարութիւնը շատ մը հայաբնակ գիւղեր պարգեւած էր թուրք կալածատէրերուն, իսկ շատ մը թրքաբնակ գիւղեր շնորհ ըրած էր Հայ կալածատէրերուն: Եւ ասոր մէջ մեթոդ կար: Յարական կառավարութիւնը այսպէս ընելով կառաջնորդէր Անդրկովկասի մէջ ցեղային ատելութիւնը վառ պահելու իր քաղաքականութեամբ: Յարիզմի դաշնակ գործակալները, լաւապէս օգտագործելով այդ պարագան, Հայ գիւղացիներու մէջ ատելութիւն կը սերմանէին թուրք գիւղացիութեան դէմ, իսկ Յարիզմի մուսավաթիստ գործակալները թուրք գիւղացիներու մէջ ատելութեան օրոմներ կը ցանէին Հայ ժողովրդի դէմ:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հողի սեփականատէրերը չփոխւեցան:

Այն գիւղերու մէջ, ուր Հայ գիւղացիները գրաւեցին Հայ կամ

թուրք կալածատէրերու հողերը, դաշնակ «կառավարութիւնը» զինեալ ուժեր ուղարկեց, ետ խլեց դրաւած հողերը գիւղացիներէն եւ դանոնք դարձուց իրենց հին տէրերուն. եւ նոյնիսկ տուգանք դանձեց անոնցմէ ուրիշին հողը մշակած ըլլալուն համար:

Դաշնակ մաուզերիստները կը թալանէին թրքական շատ մը գիւղեր, կը քչէին գիւղացիութիւնը գիւղէն եւ իրենք կիւրացնէին անոնց հողերը, բայց սրբութեան պէս կը պաշտպանէին թուրք կալածատէրերու հողային սեփականութեան իրաւունքները:

Հայաստանի մէջ, ուրեմն, սկսած էր երեւան գալ կալածատիւական նոր «աղնախանութիւն» մը՝ բաղկացած դաշնակ ընտրանիէ — խմբապետներէ, նախարարներէ, մտաւորականներէ եւ զինւորականութենէ:

Աւելին:

Ոչնչացման եզրին հասած Հայ գիւղացին իր շերտ մը հողը կը ծախէր կուլակներուն՝ ափ մը ցորենի համար: Հողի կեղքոնացումն, ուրեմն, սակաւաթիւ հողատէրերու ձեռքը, ալ աւելի շեշտւած էր:

ԽՈՐՀՈՒԴԻՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի ամբողջ մշակելի հողերու աւելի քան հարիւրին 96-ը սեփականութիւնն է հաւաքական ազարակներու, որոնց մէջ կազմակերպւած են գիւղացիութեան աւելի քան հարիւրին 90-ը, ըստ 1938 թւականի վերաբերեալ տւեալներուն:

ՅԱՐԻ ՕՐՈՎ

Հայաստանի մէջ հողի մշակութիւնը կը կատարէր արօրով: Այդ ժամանակ նոյն իսկ դուրսնը շատ հազարէպ հրեւոյթ էր:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Գիւղացին սկսած էր սեփականազրկուիլ նոյն իսկ իր ամենանախնական գործիքներէն, արօրէն, իսկ ինչ գործիք որ տակաւին կը մնար գիւղացիի ձեռքը քիչէն շատէն օգտագործելի, այդ ալ մաուզերիստները կը խլէին:

ԽՈՐՀՈՒԴԻՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Սկզբնական շրջանին արօրի գործածութիւնը տակաւին գերակշռող էր: Խորհրդային իշխանութիւնը նախ արօրը փոխանակեց դուրսնով, եւ ապա թրաքթորով: Հրասայլը ինչ դեռ որ կը կատարէ ռազմաճակատի վրա, նոյն դերը կատարեց թրաքթորը Խորհրդային իշխանութեան գիւղատնտեսական յետամնացութեան դէմ մղած պայքարի մէջ:

Թրաքթորները, քոմպայնները, մեքենա - կալիքները եւ գլխավորապես սուլակները, քոմպայնները արդիւնաւոր կերպով օգտագործել կարենալու համար, Սորհըրդային կառավարութիւնը կազմակերպեց մեքենա - թրաքթորային կայաններ:

ՄԵՔԵՆԱ-ԹՐԱՔԹՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

Մեքենա-թրաքթորային կայանը Հայաստանի գլխավորապես սուլակները գլխավորապես:

Մեքենա-թրաքթորային կայաններու թիւը Հայաստանի մէջ 1935-ին կը հաշուէր 15, 1938-ին 24, իսկ այժմ արդէն հասած է 32-ի, որոնք բարձրօրէն գլխավոր են գլխավորապես մեքենաներով:

Տակաւին 1938-ին, Հայաստանի մէջ գործող թրաքթորներու թիւը կը հասնէր 1,111-ի:

Տակաւին 1938-ին, այն ժամանակ գոյութիւն ունեցող 1,071 հաւաքական ագարակներէն 649-ին սպասարկեր են Մեքենա-թրաքթորային կայանները: Բայց, երկու տարի առաջ Մեքենա-թրաքթորային կայաններու թիւը կը հասնէր ընդամենը 24-ի: Այդ կը նշանակէ, որ անցեալ երկու տարու ընթացքին կազմակերպւած են 8 նոր Մեքենա-թրաքթորային կայաններ, որոնք, անկասկած կապասարկեն հարիւրէ աւելի նոր հաւաքական ագարակներու:

* * *

Երեւանի Անասարուժական ու Անասնապահական Հիմնարկութիւնները եւ Երեւանի Գլխավորապես սուլակների Հիմնարկութիւնը Հայաստանի գլխավորապես սուլակների կուսակցական մասնաճիւղերը:

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԿՍՊԱՍԱՐԿԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

Գլխավորապես սուլակների Հիմնարկութեան լապտաթրորներու մէջ կուսակցականներին Հայաստանի բուսականութիւնը, լաւագոյն ընտրութիւնները կատարելու համար մինչեւ հիմա յայտնաբերւած տեսակներու մէջ, որոնք թէ լաւորակ բերք կրնան տալ եւ թէ կրնան գլխավորապես կարգ մը շրջաններու ցուրտ կլիմային:

Հայաստանի մասնագէտները, սակայն, հիմնարկութեան մը չորս պատերու մէջ ուսումնասիրութիւններ ընելով զբաղւած չեն: Անոնք գիտութեան խօսքը կը տանին գլխավորապես սուլակների եւ կաշխատին գլխավորապես սուլակների հետ:

Օրինակ, 1938-ին գլխավորապես սուլակների շրջանները աշխատանքի դադար են 67 գլխավորապես սուլակների, 48 անասնաբոյժ եւ 45 անասնաբուժ, ինչպէս նաեւ 219 տեխնիկական ծառայողներ:

Բացի այդ, շրջաններու մէջ կազմակերպւած են հաւաքական

ագարակներու դպրոցներ, որոնք գլխավորապես սուլակների նախնական կրթութիւն կուտան երիտասարդ հաւաքական ագարակապաններուն: Տակաւին 1938-ին, այդ դպրոցներուն յաճախողներու թիւը կը հասնէր 14,512-ի: Նոյն տարին այդ դպրոցներն աւարտած են 6,581 մարդիկ, որոնցմէ 64-ը քոմպայնավարներ են, 832-ը՝ թրաքթորիստներ, 60-ը՝ օդակավարներ, 1,060-ը՝ կթուորներ - անասնապահներ եւ հորթապահներ եւ 274-ը՝ առողջապահական ծառայողներ:

Կազմակերպւած են նաեւ միջ-շրջանային 5 դպրոցներ, որոնք աւելի բարձր գլխավորապես սուլակների դաստիարակութիւն կուտան եւ որոնց մէջ կը սորվին հաւաքական ագարակներու նախագահները, անասնապահական ձեռնարկութեանց վարիչներն ու խմբավարները: 1938-ին այդ դպրոցներն աւարտեցին 405 հաւաքական ագարակներու նախագահներ, 395 անասնապահական ձեռնարկութեան վարիչներ եւ 559 խմբավարներ:

Հայաստանի գլխավորապես սուլակների, որ ընդհանրապէս եղեր էր անդրադէտ, երբ եւ իցէ չէր կրնար երեւակայել, որ օր մը ոչ միայն լոյրը պիտի գրեն եւ կարգան, բաժանորդ պիտի ըլլան բազմաթիւ թերթերու եւ գիտական ու գրական հանդէսներու, երկիրը ամբողջ պիտի ծածկէր նախակրթարաններով եւ միջնակարգ վարժարաններով, այլ գլխավորապես շրջաններու մէջ պիտի ստեղծւին գիտութեան օճախներ:

Ելեկտրականութիւնը, արդի քաղաքակրթութեան այդ մեծագոյն աղբակը, մուտք է գործած Հայաստանի գլխավորապես սուլակների մէջ:

Բացի Հայաստանի հանրապետական խոշոր ելեկտրակայաններէն, Հայաստանի մէջ կառուցւած են 21 գլխավորապես սուլակների եւ 154 ելեկտրական ենթակայաններ:

Աւելին: Հայաստանի գլխավորապես սուլակների մէջ մուտք են գործած ելեկտրական կալիքներ եւ կթող մեքենաներ:

* * *

Մոսկվայի Համամիութենական Գլխավորապես սուլակների Ցուցահանդէսը, որ երկու տարիէ ի վեր կը շարունակուի, ցայտուն կերպով

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

աւաւ Սորհըրդային Հայաստանի գլխավորապես սուլակների զարգացման համայնապատկերը:

Ցուցահանդէսը անվիճելիօրէն երեւան կը բերէ, որ Հայաստանի գլխավորապես սուլակների մէջ սկսած է հետզհետէ աւելի ու աւելի տեղ գրաւել տեխնիկական բոյսերու մշակութիւնը, թէեւ հացահատիկային մշակոյթը մեծ թափով առաջ է դադար եւ երբեք ետ չէ մնացած:

ԳԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հացահատիկային ցանքի տարածութիւնը կազմեր է ընդամենը 78,400 հեկտար:

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հացահատիկային ցանքի տարածութիւնը հասեր է 357,700 հեկտարի:

Հիմա տեսնենք, թէ տեխնիկական բոյսերու մշակութիւնը ինչ չափերով զարգացած է Հայաստանի մէջ, Խորհրդային էշխանութեան տարիներուն:

ԳԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Այգիներու տարածութիւնը եղած է ընդամենը 5,100 հեկտար:

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Այգիներու տարածութիւնը հասած է 15,600 հեկտարի:

Բաղաւորական այս թւերը ցոյց կուտան միայն տնկած որթատունկերու տարածութեան միջեւ եղած տարբերութիւնները:

Կա նաեւ ուրիշ մէկ տարբերութիւն: Այդ՝ բերքատուութեան տարբերութիւնն է: Հայաստանի խաղողի այգիներու, ինչպէս նաեւ այլ ցանքերու բերքատուութիւնը անհաւատալի չափերով բազմապատկած է՝ շնորհիւ գիտական մեթոդներու կիրառման եւ հողի արդիական պարարտացման:

ՑԱՐԻ ՕՐՈՎ

Հայաստանի պտղատու պարտէզներու ծաւալը կազմեր է ընդամենը 4,400 հեկտար տարածութիւն:

ԳԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Պտղատու պարտէզներու տարածութիւնը իջած է մինչեւ 1,500 հեկտարի:

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Պտղատու պարտէզներու տարածութիւնը բարձրացած է 15,800 հեկտարի:

Շնորհիւ Խորհրդային գիտնական Միչուրինի զարգացուցած նոր տեսակ պտղատու ծառերու, — որոնք կը ծաղկին եւ կը բեղմնաւորին այնպիսի ցուրտ կլիմաներու տակ, ինչպիսին է Հայաստանի լեռնային շրջաններու կլիման, — Արագածի երբեմնի լեռի լանջերու եւ Սեւանա լճի գեղածիծաղ ափերու վրա կը ծաղկին պտղատու ծառերու պարտէզներ՝ զարթոցներով մեր լեռներու առինքնող գեղեցկութիւնը եւ բարիքներով լեցնելով մեր երկրի հաւաքական ագարակներու մասանները:

Ինչպէս լեռներու յաւերթօրէն մերկ կողերը, նոյնպէս երբեմնի անջրդի անապատները այժմ զգեցած են ծաղկող պարտէզներու զարթոցները:

Սարտարապատի ամայի, կիսանապատային հողերու վրա, կը գրէ Մոսկվայի Յուցահանդէսը այցելողներէն մէկը, կը ծաղկին Միկոյեանի անւան Խորհրդային ագարակի այգիները:

Մինչդեռ նախա-Խորհրդային շրջանին Հայաստանի մէջ չէ եղեր սննդի արդիւնաբերութեան ոչ մէկ ձեռնարկութիւն, Խորհրդային իշխանութեան տարիներուն, շնորհիւ զարգացող պտղաբուծութեան եւ բանջարաբուծութեան, ստեղծւած է պահածոներու հսկա արդիւնաբերութիւնը, որու արտադրութիւնները սկսած են ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւել եւ կը մրցին Գալիֆօրնիայի բարձրորակ արտադրութիւններու հետ:

ԽՈՒՀՈՒՐԳՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ստեղծւած է գիւղատնտեսութեան մէկ նոր ճիւղ, ծխախոտագործութիւնը: Ծխախոտի ցանքն հիմա Հայաստանի մէջ կը բռնէ 3,500 հեկտար տարածութիւն: Մինչդեռ 1919-ին ցանւած էր ընդամենը 100 հեկտար ծխախոտ:

Հայաստանի հաւաքական ագարակները այժմ արդէն երկրին կուտան Սամսոն, Տրապիզոն եւ Տիբուլակ տեսակի ծխախոտի բարձր բերք:

Ծխախոտագործութիւնը Հայաստանի մէջ ծնունդ տւած է նոր արդիւնաբերութեան մը, սիկարեթի արդիւնաբերութեան: Երեւանի ծխախոտի գործարանը օժտւած է արդիական մեքենականութեամբ:

Հայաստանի Գիւղատնտեսութեան մէջ խոշոր տեղ կը գրաւէ բամպակի մշակութիւնը:

Մինչդեռ նախա-Խորհրդային շրջանին Հայաստանի գիւղատնտեսութեան մէջ բամպակի մշակութիւնը գրաւած է շատ աննշան տեղ, 1938-ին բամպակի ցանքի տարածութիւնը հասած է մինչեւ 17,000 հեկտարի: Այս տարածութեան 16,500 հեկտարը ցանած են հաւաքական ագարակները, իսկ 500 հեկտարը՝ անհատ գիւղացիները:

Հայաստանի զարգացող բամպակագործութեան հիման վրա կը զարգանա եւ կընդարձակուի Հայաստանի հիւսւածեղէնի արդիւնաբերութիւնը:

Արդէն իսկ կը գործեն Երեւանի եւ Հոկտեմբերեանի բամպակադրիչ գործարանները, Երեւանի ձէթ-օճառի գործարանը, որ մեծ մասամբ կը մշակէ բամպակի սերմը եւ Լենինականի հիւսւածեղէնի գործարանախումբը:

Մէկ ուրիշ նոր ճիւղ Հայաստանի գիւղատնտեսութեան մէջ՝ շաքարի ճահնդեղի մշակումն է:

Մինչդեռ 1938-ին, շաքարի ճահնդեղի տարածութիւնը կը կազմէր 1,000 հեկտար, կը նախատեսէր, որ այս տարի այդ տարածութիւնը պիտի հասցւէր 3,000 հեկտարի:

Շաքարի ճակնդեղի դարգացումը առաջ կը տարւի այն հաշուով, որ այս տարի Հայաստանի մէջ, առաջին անգամ ըլլալով, հիմը պիտի դրւի շաքարի դործարանի:

Հայաստանի դիւղատնտեսութեան մէջ իրենց յատուկ տեղերը կը գրաւեն բժշկական բոյսերու եւ վարդի մշակումը, մեզւարուծութիւնն ու շերամապահութիւնը, ինչպէս նաեւ որսորդութիւնը:

Յուցահանդէսը երեւան բերաւ նաեւ անասնապահութեան աչքաուու նւաճումները, որոնց մասին կը խօսինք այլուր:

Մոսկվայի Գիւղատնտեսական Յուցահանդէսը, սակայն, ոչ միայն երեւան կը բերէ Հայաստանի դիւղատնտեսութեան դարգացման եւ դիւղացիութեան բարօրութեան աճման ընթացքը:

Այնտեղ ցուցադրութեան դրւած են ժողովրդական ստեղծագործութեան նմուշներ, զորդեր, փայտի վրա քանդակուած նկարներ, մարմարէ կաղամարներ, արծաթէ պատրաստուած նուրբ իրեր, սսեղանագործութիւններ, որոնք բարձր գնահատուած են արւեստագէտներու կողմէ: Այլ ամենը ցոյց կուտան, որ ստեղծագործող եւ տաղանդաւոր մեր ժողովուրդը ոչ միայն դիտէ կեանքի բարիքներ արտադրել, այլ դիտէ գեղեցկացնել իր երջանիկ եւ բերկրալի կեանքը:

Ամենէն առաջ Մոսկվայի Գիւղատնտեսական Յուցահանդէսի Հայկական Տաղաւարը, որ դործն է ժամանակակից մեծագոյն Հայ ճարտարապետ Կարո Հայրաբեանի, կը կազմէ 20-ամեա Խորհրդային Հայաստանի փառքի կոթողը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան պանծալի մայրաքաղաքի մէջ:

* * *

Հայաստանի լեռնային եւ կիսալեռնային հիանալի մարդագետինները կը հանդիսանան անասնաբուծութեան հրաշալի միջավայրեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՃԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Անասնապահութեան նւաճումները առանձնապէս ուշադրաւ են, անոր համար, որ նախ Համալիտարհային պատերազմի եւ անոր յաջորդող դաշնակ վարչաձեւի օրով ամենէն աւելի տուժած էր անասնապահութիւնը, համատարած սովի այդ օրերուն, մարդիկ ոչ միայն արջառները կը կոտորէին եւ կողտէին, այլ նաեւ շուններն ու կատուները:

Եթէ կողտէք դաղափար մը կազմել Հայ ժողովրդի այդ ամենասեւ օրերու մասին, կարգացէք հետեւեալ սրտակեղք պատմութիւնը, զոր ակնատես մը ըրած է Հայ գրականութեան վարպետ Աւետիք Իսահակեանին. —

«Ինչե՛ր տեսա՞մք, ինչե՛ր քաշեցինք: Սո՛վ, մերկութի՛ւն, համաճարակ մահեր: Գիւղերում շուն ու կատու չմնաց կե-

բանք: Ագռաւներին կերանք, արածեցինք անասուններու պէս: Շատ տեղեր մարդկային դիակներ խորովում էին ու ուտում: Կնունների մէջ դնում էին եւ ուտում, անելով սա Միւնասի միւսըն է, սա Յարութիւնի միսն է: Երկիրը՝ սրի եւ հրի բերան: Մի բուռ գալու համար մարդ էին մորթում: Բաղերը չէինք կարող գնալ: Ում հետ որ տարիներ ալ ու հաց էինք կերել, հիմա երեսիդ չէին նայում: Զարմանում էիր, թէ ինչպէս մարդ կարող է փոխել. եւ փոխել էինք բոլորս, մէրը մանկան ուրացել էր: Գազաններ էինք դառել, իրար յօշոտող գայլեր: Ու մեռնում էինք, սատկում էինք. նիշտ բառով ասած նգովելով Աստուած, մարդկութիւն եւ ամեն բան:

«Եկան բայլշեվիկները եւ փրկեցինք: Փրկեց ժողովուրդը: Դե՛հ, գիտես ես բայլշեվիկ չեմ, ինձպէսներ շատ կան, բայց բոլորս ալ ամուր բունել ենք բայլշեվիկի փէշից:

«Թող աշխարհն իմանա էս բանը»:

Աշխարհն արդէն գիտէ, թէ ինչ ցաւալի դրութիւն ստեղծած էր դաշնակ վարչաձեւը իր արկածախնդրական քաղաքականութեամբ եւ Հայ ժողովրդի ապատագրական ճիգերը ճնշելու իր դաղանային ընթացքով:

Աշխարհը նաեւ գիտէ, թէ ինչպիսի արագ թափով Խորհրդային իշխանութիւնը դուրս բերաւ երկիրը անօթութեան ճիրաններէն եւ սնված մը եւս մեր երկրի հրաշալի մարդագետինները լեցւեցան անասուններու հօտերով:

Բայց Հայաստանի եւ ժողովրդի թշնամիները չէին դադրած մեր ժողովրդի բախտաւորութեան դէմ դաւաճանել: Անոնք անգամ մը եւս կոտորեցին Հայաստանի անասունները, երբ Խորհրդային կառավարութիւնը ձեռնարկեց հաւաքական ազարակներ կազմակերպելու օրհնաբեր դործին:

Աւելի յետո, Հայաստանի Թրոցքիական - Դաշնակ դաւաճանները, իրենց վնասարարութիւնը գլխաւորաբար կեդրոնացուցած էին անասնապահութեան մէջ: Այդ մարդիկ ամեն տեսակ դաղանութիւններու եւ վարչելի միջոցներու դիմած էին ոչնչացնելու համար Հայաստանի անասունները, նպատակ ունենալով երկիրը մատնել սովի եւ մղել ըմբոստութեան Խորհրդային իշխանութեան դէմ:

Հակառակ այդ իրողութեան, դաւաճաններու մաքրագործումէն յետո, Խորհրդային իշխանութիւնը կրցաւ անասնապահութեան վարգացումը առաջ տանել մեծ թափով:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Խոչոր եղջերաւորներու թիւը Հայաստանի մէջ եղած է 294,275 գլուխ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1938-ին, խոշոր եղջիւրաւորներու թիւը հասած է 711,404-ի: Աճում՝ հարիւրին աւելի քան 241:

ԳԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Մանր եղջիւրաւորներու թիւը Հայաստանի մէջ կը հասնէր 470, 904-ի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1938-ին, մանր եղջիւրաւորներու թիւը հասած էր, 1,197,490-ի: Հայաստանի ձիերը 1919 թւականի բաղաւորմամբ աճած են հարիւրին մօտ 270, իսկ խոզերը՝ հարիւրին 1,466:

1939 թւին եւս Հայաստանի Անասնապահութիւնը կատարած է զգալի նւաճումներ:

Այդ մէկ տարւա ընթացքին հաւաքական ազարակներու մէջ եղած ձիերու թիւը աճած է աւելի քան 33 առ հարիւր, խոշոր եղջիւրաւոր անասուններու թիւը՝ մօտաւորապէս 19 առ հարիւր, մանր եղջիւրաւոր անասուններու թիւը աւելի քան 34 առ հարիւր եւ խոզերու թիւը՝ մօտաւորապէս 6 առ հարիւր:

1940 թւի Յունվար 1-էն յետո Հայաստանի մէջ կազմակերպւած է 560 անասնապահական նոր ձեռնարկութիւններ: Ծնչող մեծամասնութիւն կը կազմեն այն հաւաքական ազարակները, որոնք 2-3 անասնապահական ձեռնարկութիւններ ունին:

Խորհրդային կառավարութիւնը ամենալուրջ ուշադրութիւն դարձուցած է անասուններու ցեղի ազնւացման վրա:

Անասնապահութեան աճման ու զարգացման հիման վրա Հայաստանի մէջ սկսած է զարգանալ կաթնատնտեսութիւնը, կազմակերպւած են բազմաթիւ կաթնատնտեսական եւ յատկապէս պանրագործութեան գործարաններ: Մասնաւորաբար ուշադրաւ է կալինինի անւան կաթնագործութեան մեծ գործարանը, որու մանրատիպը ցուցադրեցաւ Մոսկվայի Գիւղատնտեսական Յուլիանոսի մէջ: Հայաստանը կարտադրէ Զվիցերիական ընտիր պանիր, որ որակով կը գերազանցէ նոյն իսկ Զվիցերիական պանիրը:

Հայաստանի անասնապահութեան օրինակը ցոյց տաւ, որ Թըրոցքիական - Դաշնակ դաւաճանները ժողովրդի անհաշտ եւ ռիսերիմ թշնամիներն են: Առանց այդ թշնամիները անխնա կերպով մաքրելու Հայաստանէն, ոչ կարելի կըլլար անասնապահական մարզի մէջ այս հիանալի յաջողութիւնները ձեռք բերել, ոչ կարելի կըլլար Հայաստանի ընդհանուր վերելքի թափը երաշխաւորել եւ ոչ ալ մեր երկրի սահմաններու պաշտպանութիւնը ապահովել թըրնամի ներխուժումի դէմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՈՒՆԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ

Թէ ինչպիսի բարիքներ է ապահոված Խորհրդային Հայաստանի գիւղատնտեսութեան շտեմնած զարգացումը Հայ շինականի համար, այդ մենք կը տեսնենք աչքի առջեւ ունենալով այն հիասքանչ թիւերը, որոնք հրատարակւած են Խորհրդային իշխանութեան կողմանէ:

ՄԻԼԻՈՆԱՏԷՐ ՀԱԻԱՔԱ-ԿԱՆ ԱԳԱՐԱԿՆԵՐ

Հայաստանի մէջ հիմա կան 1,039 հաւաքական ազարակներ, որոնց 53-ը միլիոնատէրեր են:

- Թւենք անոնցմէ մէկ քանին.—
- ԱՇՏԱՇԱՏ Գիւղի ՍՎԵՐԴԻՈՎԻ անւան հաւաքական ազարակը՝ 2,077,000 ուուլլի:
- ԴԱՐՂԱԼՈՒ Գիւղի ՓԱՐԻՁԻ ԿՈՄՈՒՆԱ հաւաքական ազարակը՝ 2,300,000 ուուլլի:
- ԳԵՈՂԱԿԼՈՒ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,400,000 ուուլլի:
- ՆԵՎՐՈՒՉԼՈՒ Գիւղի հաւաքակ. ազարակը՝ 1,200,000 ուուլլի:
- ՄԽՁԵԱՆ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,200,000 ուուլլի:
- ԱՇՏԱՐԱԿ Գիւղի ՇԱՀՈՒՄԵԱՆԻ անւան հաւաքական ազարակը՝ 1,400,000 ուուլլի:
- ՕՇԱԿԱՆ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,200,000 ուուլլի:
- ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՂԱՆԻ հաւաքական ազարակներէն մին՝ 2,600,000 ուուլլի:
- ԱՂԱՒՆԱՏՈՒՆ Գիւղի «Պայքար» հաւաքական ազարակը՝ միայն այդպէսգործութենէն ու գինեգործութենէն ստացել է՝ աւելի քան 1,000,000 ուուլլի:
- ՓԱՐԱՔԱՐ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,000,000 ուուլլի:
- ՆԵՐՔԻՆ ԽԱԹՈՒՆԱՐԽ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,000,000 ուուլլի:
- ՄԵԾ ՇԱՀՐԻԱՐ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,500,000 ուուլլի:
- ԲԱՄՊԱԿԱՇԱՏԻ հաւաքական ազարակը՝ 1,500,000 ուուլլի:
- ՁԱՆԳԻԲԱՍԱՐԻ հաւաքական ազարակը՝ 1,100,000 ուուլլի:
- ՁԱՀՄԵՆԻ Գիւղի հաւաքական ազարակը՝ միայն բամպակագործութենէն՝ աւելի քան 1,000,000 ուուլլի:
- ԹԱՁԱ Գիւղի հաւաքական ազարակը՝ 1,000,000 ուուլլի:
- ՍՏԵՓԱՆԱՒԱՆԻ ԻՈՂԵՔՔ ՍԹԱԼԻՆԻ անւան հաւաքական ազարակը՝ 1,080,000 ուուլլի:

Միլիոնատէր կամ ունեւոր հաւաքական ազարակներու հարստութիւնը իր ամենացայտուն արտայայտութիւնն է դաւեր հաւաքական ազարակապանուհի կամ ազարակապանի կեանքի մէջ: Այդ մասին կը վկայեն հաւաքական ազարակապաններու անհատական եկամուտներու մասին հրատարակած պաշտօնական տւեալները:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱԳԱՐԱԿԱՊԱՆԻ ԿԵԱՆՔԸ

Մանօթանանք անոնցմէ մէկ քանիներու հետ.—
ԽԱԶՍՏՈՒՐ ԲԱՂՏՈՅԵԱՆԸ, նախկին հողագուրկ մը Ղամարլուի Շրջանէն, ստացած է մէկ տարւա մէջ 19,000 ուսուլի դրամով, առանց հաշուելու իրեն բաժին ինկած մթերքները եւ տնամերձ իր բանջարանոցէն ստացած եկամուտը:

ՄԱՅԻ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ, նախկին չքաւոր մը Եուզա Գիւղէն, ստացած է 14,000 ուսուլի:

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ, նոյն գիւղէն, ստացած է 16,000 ուսուլի:

Հաւաքական ազարակապանի մը եկամուտի քանակը որոշողը անոր համայնական գործին համար արամադրած աշխատանքային օրերն են: Այլ խօսքով, ով աւելի շատ աշխատանք է դրած հաւաքական գործի մէջ, բերքէն ստացած է համապատասխան բաժին:

Մենք ծանօթացանք միլիոնատէր ազարակներու հետ: Տեսնենք, թէ աշխատանքային օրը հիմք բռնելով, անոնք ի՞նչպէս են բաժնած եկամուտը իրենց անդամներու միջեւ:

ՂԱՄԱՐԼՈՒԻ ՇՐՋԱՆԻ «ՓԱՐԻՉԻ ԿՈՄՈՒՆԱ» հաւաքական ազարակը, 1937-ին ունեցած է 1,588,000 ուսուլի եկամուտ: Ինչպէս ընթերցողը գիտէ, 1938-ին, այդ միեւնոյն ազարակը ունեցած է 2,700,000 ուսուլի եկամուտ, համարեա թէ կրկնապատկած է եկամուտը:

Այդ հաւաքական ազարակը 1937-ին, աշխատանքի օրւա դիմաց տւած է.—

- 11 ուսուլի դրամ,
- 3.48 քիլոկրամ խաղող,
- 1.33 լիտր գինի,
- 0.14 լիտր օղի,

Մեծ քանակութեամբ զանազան բանջարեղէններ եւ մթերքներ: Ըստ ինքնեան հասկնալի է, որ եթէ մէկը 1,000 աշխատանքային օր դրած է գործի մէջ, վերոյիշեալ թւերը 1,000 անգամ պիտի բազմապատկուի եւայլն:

Հայաստանի դիւղատնտեսութեան երջանիկ կեանքի մէկ ուրիշ արտայայտութիւնն այն է, որ վերջին երկու տարւա ընթացքին

աւելի քան 28,000 հաւաքական ազարակապաններ քարաչէն տուններ կառուցած են:

Հաւաքական ազարակներու կազմութեամբ իրականացաւ բանաստեղծ ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿՍՅԱՆԻ մեծ երազը.—

Մէկտեղ ցանեմ, մէկտեղ հնձեմ,
 Մէկտեղ քափիմ մեր ֆրոնիմներ,
 Զիւնն քարեաց յերկիմ հանեմ,
 Որ կեանք առնուի հայոց դաշտեր:
 Ընդ աստեղօք ինչ կա սիրուն,
 Քան զանցկալի եղբայր առնուի:

Մկրտիչ Պեշիկօսյանը Հայ Ժողովրդի միութեան իր երազի իրականացումը կակնկալէր նախաձեռնութեամբ Պոլսահայ առեւարականութեան, որ իրապէս, տարւած իր անհատական հարստութիւն գիղղելու հաշիւներով, անընդունակ էր միասնական ազգ մը կերտելու գործին:

Հայ Ժողովրդի միութիւնը դուրս հանելու պանծալի գործը վիճակւած էր Հայաստանի դիտակից աշխատաւոր զանգւածներուն: Ահսոս, շնորհալի մեր բանաստեղծը չտեսաւ, բայց Խորհրդային էշխանութեան գլխաւորութեամբ, Հայաստանի աշխատաւորական դիտակից զանգւածները ի դուրս հանեցին Հայ Ժողովրդի միութիւնը՝ հիմնւած միասնական շահի անաստան ապառաժի վրա:

Եւ այսօր Հայաստանի աշխատաւոր Ժողովուրդը մէկ տեղ կը ցանէ եւ մէկ տեղ կը հնձէ, եւ ահա վեանք են աւեր հայոց դաշտերը՝ արեւաշող մեր երկիրը լեցնելով անսպառ բարիքներով:

Լիառատ հաւաքական կեանք, լիարիւն եւ միասնական Ժողովուրդ:

Ահա այսօրւա մեր լուսաշող իրականութիւնը:



Խորհրդային Հայաստանի առեւտուրի շտեմնած ծաւալումը, իր կարգին կը վկայէ մեր Ժողովրդի բարեկեցութեան բարձրացման անոր ունեւոր եւ մշակութային կեանքի մասին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ

Մինչդեռ 1925-ին կատարւած է 25,765,000 ուսուլի առեւտրական շրջանառութիւն, 1937-ին կատարւած է 753,337,000 ուսուլի շրջանառութիւն:

Ընդամենը երկու տարի յետո, 1939-ին, Հայաստանի առեւտրի շրջանառութիւնը հասած է 973,000,000 ուսուլի: Նոյն տարին առեւտրական ճակատի վրա աշխատած են 4,000 մարդիկ:

1937-ին վաճառւած ապրանքներու մէջ առանձնապէս ուշադրութիւն կը դրուեն հետեւեալները.—

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

Հիւսւածեղէն՝ 142,160,000 ուուպլի:
Շաքար՝ 74,885,000 ուուպլի:
Հացամթերքներ՝ 129,337,000 ուուպլի:
Միս եւ ձկնամթերք՝ 24,508,000 ուուպլի:

Վերջին տարիներուն աճեր է մանաւանդ վաճառքը երկաթէ մահ-
ճակարներու, ֆոնտիրաֆներու, երգապնակներու, ուտիո ընդու-
նարաններու, հեծելանիւներու եւ մշակութային այլ ապրանքնե-
րու, որոնք կը գեղեցկացնեն Հայաստանի բանւորներու, հաւաքա-
կան ազարակապաններու, մտաւորականներու եւ աշխատանքնե-
րու երջանիկ կեանքը եւ արդիական կենցաղավարութեան նոր պատ-
ւանդանի վրա կը բարձրացնեն զանոնք:

* * *

ԱՃԵՏԷՔ ԵՒ
ԲԱԶՄԱՅԱՐՈՒՔ

Խորհրդային իշխանութեան քսան
տարիներուն, լիառատութեան եւ ու-
նեւոր կեանքի հիման վրա, ԱՃԵՐ

եւ ԲԱԶՄԱՅԵՐ է Հայ ժողովուրդը:

ՑԱՐԻ ՕՐՈՎ

Հայաստանի ամբողջ բնակչութիւնը կը հաշւէր 1,200,000
հոգի:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Չնայած այն հանգամանքին, որ պատերազմի հետեւանքով հա-
ւիւր հազարաւոր գաղթականներ անցած էին Թուրքիայէն Հայաս-
տան, բնակչութեան թիւը իջած էր համարեա թէ 700,000-ի:

Այս փոքր բաղդատութիւնը կը վկայէ այն մասին, թէ միջ-ցե-
զային կռիւները, անվերջ ջարդերը, անընդհատելի պատերազմը բո-
լոր ճակատներու վրա՝ երկիրը հասցուցած էին լիակատար բնա-
ջնջման եզրին:

Միայն Խորհրդային իշխանութիւնը կրնար մեր ժողովուրդի մնա-
ցորդը փրկել եւ վերստին ԱՃԵՆՈՒ եւ ԲԱԶՄԱՆԱՆՈՒ կարելիու-
թիւններ ստեղծել:

Այդպէս ալ եղաւ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

1926-ին Հայաստանի բնակչութեան թիւը հասած էր 881,920-ի:
1939-ին Հայաստանի բնակչութիւնն հասած էր արդէն մէկ մի-
լիոն 281,599-ի:

Ընդամենը 12 տարւա մէջ, ուրեմն, մեր ժողովուրդը ԱՃԱԾ եւ
ԲԱԶՄԱՅԱԾ է աւելի քան առ հարիւր 45:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ՈՒՆԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ

Վերջին 12 տարւա ընթացքին Հայաստանի բնակչութեան բաղ-
կացութիւնը սկսած է հիմնական փոփոխութիւն կրել:

Շնորհիւ զարգացող արդիւնաբերութեան, քաղաքներու թիւը,
ինչպէս նաեւ քաղաքներու բնակչութեան թիւը տարւէ տարի կա-
ւելնան:

Մինչդեռ 1926-ին Հայաստանի մէջ կար 7 քաղաք միայն,
1939-ին կար 18 քաղաք:

Մինչդեռ այդ 12 տարւա ընթացքին զիւղական բնակչութիւնը
աճած է առ հարիւր 28 եւ քիչ մը աւելի, քաղաքներու բնակչու-
թիւնը աճած է առ հարիւր 119 եւ աւելի:

Բնակչութեան աճման տեսակէտէն առանձնապէս ուշադրաւ տեղ
կը դրաւ Հայաստանի արդիւնաբերական երկու մեծ քաղաքները,
— Մայրաքաղաք Երեւանը եւ Մայիսեան ապստամբութեան որրան
լենինականը:

1926-1938, տասներկու տարւա մէջ, Երեւանի բնակչութիւնը
64,707-էն բարձրացած է 200,031-ի, իսկ Լենինականի բնակչու-
թիւնը 42,313-էն 67,707-ի:

Հիստորիկ այս թիւերը կը վկայեն մեր ժողովուրդի հրաշալի ա-
պագայի մասին: Քանի Հայաստան Խորհրդային Մեծ Միութեան
անբաժան լծակիցն է՝ Հայ ժողովուրդին սպասող այդ հիանալի ապա-
գայի մասին կարելի չէ տարակուսիլ անգամ:



Հայաստանի Բնակչութեան կէս Միլիոնը Ծնած Են Խորհրդ-
դային Իշխանութեան Օրով — Ահա Կենսաւրախ Այդ
Սերնդի Երկու Լիարիւն Ներկայացուցիչները

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՐ ՈՍԿԵԴԱՐԸ

Արդիւնաբերական եւ գիւղատնտեսական հրաշալի նւաճումներու զուգընթաց, Հայաստան, Սորհրդային իշխանութեան ՔՍԱՆ յաղթական տարիներու ընթացքին, արձանագրած է մշակութային զգուշ խիչ նւաճումներ:

ԿՐԹԱԿԱՆ ՀՐԱՇԱՓԱՌՎԵՐԵԼՔԸ

Հայաստանի Սորհրդային շինարարութեան հոգեթով համայնապատկերի վրա կիշխէ Հայկական Սորհրդային մշակոյթն այնպէս, ինչպէս ալեփառ Մասիսը կիշխէ Արարատեան դաշտի վրա:

Այդպէս ալ պէտք է ըլլար:

«Եկանին մէջ, պրոլետարիատի դիկտատուրայի եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան մէջ սոցիալիզմի շինարարութեան ժամանակաշրջանը, ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ժամանակաշրջան է ազգային մշակոյթներու՝ բովանդակութեամբ սոցիալիստական եւ ձեռով ազգային»:

(ՍԹԱԼԻՆ)

Ճիշտ է, որ Հայ ժողովուրդը եղած է աշխարհի ամենահին մշակութային ժողովուրդներէն մէկը, եղած է Մերձաւոր Արեւելքի մէջ քաղաքակրթութեան կտրիճ եւ աննկուն ջահակիրներէն մէկը, եւ դիտած է, իր պատմութեան նոյնիսկ ամենասեւ օրերուն, վառ պահել մշակութային հնոցներ Հայաստանի մէջ:

Ճիշտ է նաեւ, սակայն, որ տաղանդաւոր Հայ ժողովուրդը զըրկւած էր իր ստեղծած մշակոյթի արգասիքներէն այնպէս, ինչպէս աշխատաւոր զանգւածները զըրկւած են եղեր իրենց ճակտի քրտինքով առաջ բերած կեանքի շատ մը բարիքներէն, առատութիւններէն եւ հարստութիւններէն:

* * *

Սորհրդային իշխանութիւնը, իր գոյութեան կոչւելու առաջին օրէն իսկ կռիւ յայտարարեց մեր ժողովրդի մշակութային յետամնացութեան դէմ: Սորհրդային իշխանութիւնը, առաջին օրէն նախահան կրթութիւնը, յետագային նաեւ թերի-միջնակարգ եւ միջնա

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ

կարգ կրթութիւնը դարձուց պարտաւորիչ բոլոր դպրոցական տարիք ունեցողներու համար:

Ոչ միայն այդ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՐ ՈՍԿԵԴԱՐԸ

Սորհրդային իշխանութիւնը միջոցներ ձեռք առաւ վերացնելու տարիքաւոր մարդոց անդրադիտութիւնը:

Մեր տրամադրութեան տակ կան մեծաքանակ թւեր, որոնք կը վկայեն Սորհրդային իշխանութեան քսան տարիներուն մեր երկրի մէջ ձեռք բերւած կրթական-մշակութային սլանդալի նւաճումներու մասին:

Ծանօթանանք այդ թիւերու հետ:

ՆԱՍՆԱՆՈՐ ՀՐԴՄՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ

Հայաստանի ազգարնակչութեան առ հարիւր 91-ը անգրաւդէտ էր:

ՍՈՐ ՀՐԴՄՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ

Հայաստանը դարձած է համատարած դրադիտութեան երկիր, ամբողջ ազգարնակչութիւնը դարձած է գրաճանաչ:

Միմիայն ազատ երկիրներու մէջ դիրն ու դրականութիւնը, դիտութիւնն ու արեւտը ժողովրդական լայն խաւերու սեփականութիւնը կը դառնան: Որքան ժողովրդի մը կրթական-մշակութային մակարդակը բարձր է՝ այնքան աւելի դործօն եւ՝ ձեռնհաս կերպով այդ ժողովուրդը կրնա իր մասնակցութիւնը բերել երկրի տնտեսական, շինարարական, հասարակական եւ քաղաքական կեանքին:

ԱՆԳՐԱԳԵՏԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵՆԷ ԴՈՒՐՍ Է:

Ահա մէկը Սորհրդային ոսկեղէն կանոններէն:

Որքան մեծ եռանդով տիրող վարչաձեւը կաշխատի վերացնել ժողովրդական զանգւածներու անդրադիտութիւնը, որքան աւելի լայն կարելիութիւններ կստեղծէ ժողովրդական զանգւածներու համար իւրացնելու մշակութային արգասիքները, այդքան այդ վարչաձեւը կամրապնդէ ժողովրդական զանգւածներու ազատութիւնները, այդքան աւելի կարելիութիւններ կստեղծէ երկրի կառավարման դործի մէջ ժողովրդական լայն զանգւածներու ամենագործօն մասնակցութիւնը ապահովելու:

Եւ մենք պատմութենէն գիտենք, որ տիրող վարչաձեւ մը որքան բռնապետական է, այնքան աւելի զլացւած է դաստիարակութիւնն ու մշակոյթը ժողովրդական զանգւածներէն. մշակոյթն ու դաստիարակութիւնը այնքան աւելի նեղ շրջանակի մը առանձնաշնորհումը նկատւած է:

Գաշնակ վարչաձեւը չձեռնարկեց անդրադիտութիւնը վերացնելու դործին, եւ չէր ալ կրնար ձեռնարկել: Որովհետեւ դաշնակ վարչաձեւը աւելի բռնապետական էր եւ արիւնոուշտ, քան մինչեւ այդ Հայաստանի ժողովրդին պարտադրւած ունէ բռնապետութիւն:

Նացի վարչաձեւը Գերմանիայի մէջ սահմանափակեց դաստիարակութիւնը, ոչնչացուց մշակութային լուսավոյն արգասիքները,

կղզիանքի տակ դրաւ մշակոյթը, որովհետեւ Նացիները կուզէին քաղաքակրթութեան անիւր շրջել ետ՝ բարբարոսական դարերը:

Միացեալ Նահանգներու մէջ ալ, մինչդեռ Նիւ Տիլը ամեն կերպով կաշխատէր ընդարձակել կրթական եւ մշակութային դիւրութիւնները, երկրի բնակչութեան եւ հարստութեան միջոցներու վրա իրենց սակաւապետութիւնը հաստատել նկրտող տնտեսական արքայականները, ամեն ճիգ կը թափէին կրճատելու կրթական եւ մշակութային յատկացումները եւ սահմանափակելու դաստիարակութիւնը:

Ասկէ ի՞նչ կը հետեւի:

Ասկէ կը հետեւի, որ մեր ժողովուրդը ԱՉԱՏ է, եւ քանի՛ կը բարձրանա իր դաստիարակութեան մակարդակը, ան այնքան աւելի մեծ մասնակցութիւն կը բերէ մեր երկրի կառավարման դործին:

* * *

Հայ ժողովրդի մշակութային բարձր մակարդակի մասին կը վկայէ թերթերու եւ հանդէսներու լայն տարածականութիւնը Հայաստանի մէջ:

50,000,000 ԲԱԺԱՆՈՐԴ

1868-էն մինչեւ Համաշխարհային Պատերազմը, 45 տարւա ընթացքին, զանազան տարիներուն, Հայաստանի մէջ հրատարակւած են ընդամենը 25 անուն թերթ եւ հանդէս, որոնք, շնորհիւ մեր ժողովրդի անդրադիտութեան եւ չքաւորութեան, թէ՛ շատ կարճատեւ կեանք են ունեցած ընդհանրապէս եւ թէ՛ չափազանց աննշան տարածականութիւն:

Մինչդեռ, Խորհրդային իշխանութեան օրով, մէկ տարւա մէջ, 1936 թւին, հրատարակւած են 36 անուն թերթ եւ 7 հանդէս, որոնց բաժանորդներու թիւը հասած է 32,900,000-ի:

Մինչդեռ, Խորհրդային իշխանութեան օրով տարւէ տարի աճած է թէ՛ հրատարակող թերթերու եւ հանդէսներու թիւը, եւ թէ՛ անոնց տարածականութիւնը, զուգընթաց բնակչութեան մշակութային մակարդակի բարձրացման եւ տնտեսական բարգաւաճութեան աճման: Ընդամենը երկու տարի յետո, 1938-ին, Հայաստանի մէջ լոյս տեսած է 50 անուն թերթ եւ 8 անուն հանդէս, որոնց բաժանորդներու թիւը հասած է տարեկան 50,000,000-ի:

Այս թիւերու մէջ չեն մտնէր գործարաններու, հաւաքական ազարակներու, դպրոցներու հիմնարկներու եւ ակումբներու մէջ լոյս տեսնող բազմաճազար պատի թերթերը, որոնք չափազանց ակնառու դեռ կը կատարեն մեր ժողովրդի առօրեա կեանքի մէջ:

Թերթերու եւ հանդէսներու այսպիսի տարածում մեր ժողովուրդը չէր կրնար երեւակայել ո՛չ նախա-Խորհրդային յետամնաց

68

Հայաստանի եւ ոչ ալ այնպիսի առաջաւոր դադուքներու մէջ, որպիսիքն էին Պոլիսն ու Թիֆլիսը Համաշխարհային պատերազմէն առաջ եւ կը համարւէին Հայկական մշակոյթի երկու գլխաւոր կեդրոնները:

* * *

Մեր ժողովրդի կուլտուրականութեան մասին կը վկայէ նաեւ Հայաստանի մէջ հրատարակող գրքերը, որոնց թիւը ամեն տարի միլիոններու կը հասնին:

37,000,000 ԳԻՐՔ

Անցեալ տարւա առաջին 8 ամսւա ընթացքին Պետական Հրատարակչութիւնը լոյս ընծայած է 200 անուն գեղարւեստական, գիտական, թեքնիքական եւ դպրոցական գրքեր՝ 2,148,000 օրինակ:

Բացի այդ, Լուսաւորութեան ժողովրդական Կոմիտարիատը անցեալ տարւա առաջին 9 ամսւա ընթացքին հրատարակած է 56 անուն դասագիրք՝ 100,000 օրինակ:

Սորհրդային իշխանութեան 19 տարիներուն հրատարակւած է 7,658 անուն եւ 37,300,000 օրինակ գիրք:

Կա, սակայն, մէկ հոյակապ իրողութիւն, որ ցոյց կուտա, թէ մինչեւ ո՛ր աստիճան գրականութեան եւ գեղարւեստի սէրը ընդհանրացած է Հայաստանի ժողովրդի մէջ:

Այս տարի Պետական Հրատարակչութիւնը լոյս ընծայեց Հայ մեծ բանաստեղծ Ա.ԽԵՏԻՔ ԻՍՍՀԱԿԵԱՆԻ ընտիր երկերը երկու առանձին հատորով 10,000-ական օրինակ: Անւանի բանաստեղծի երկը ընդամենը մէկ քանի օրւա մէջ սպառած էր: Այդ այնպիսի զգլխիչ փաստ է, որու նմանը երբեք արձանագրւած չէ եղեր մեր գրականութեան պատմութեան մէջ:

Մեր ժողովրդի մշակութային զարգացման մէջ ոչ նւազ նշանակալից դեր կը կատարեն գրադարանները, ակումբները եւ խրճիթ-ընթերցարանները:

Այսօր Հայաստանի մէջ չկա գործարան մը, խոշոր հաստատութիւն մը, կաղմակերպութիւն մը, արհեստակցական միութիւն մը, որ իրեն ակումբը չունենա: Այդ ակումբները օժտւած են արդիական բոլոր յարմարութիւններով, — գրադարան, սինեմայի եւ թատրոնի սրահ, աւազան, զբօսավայր-սրահներ եւայլն:

Այսօր Հայաստանի մէջ չկա նկատելի գիւղ մը, որ իր խրճիթ ընթերցարանը չունենա:

Երեւանի Պետական Գրադարանը ունի մօտ 1,300,000 գիրք:

Հայաստանի մէջ կը գործեն 177 ակումբներ եւ խրճիթ-ընթերցարաններ հաւաքական ազարակներու շրջաններու մէջ:

Շրջաններու մէջ կը գործեն 468 գրադարաններ, որոնք ունին 62,400 գիրք:

69

Մեր երկիրը, ուր նախա-Պորհրդային շրջանին եկեղեցիի մը չուրին տակ կծկւած ծխական դպրոցն անգամ, որքան ալ խեղճուկ ըլլար ան, կը համարէր յուսադ-

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ՄԻՋ-ՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹԻՒՆ

րիչ երեւոյթ մը ուսումնասիրաւ Հայ ժողովրդի համար, այսօր ծածկւած է նախակրթարաններու, թե-

րի միջնակարգ եւ միջնակարգ դպրոցներու, բարձրագոյն ուսման հիմնարկներու եւ դիտական հաստատութիւններու ցանցով մը:

Ո՛րքան ողորմելի էր մեր երէկը:

Ո՛րքան փառաւոր է մեր այսօրը:

ՅԱՐԻ ՕՐՈՎ

Ամբողջ Հայաստանի մէջ կար.—

465 դպրոց.

1,177 ուսուցիչ,

35,414 աշակերտ:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ամբողջ Հայաստանի մէջ կար.—

154 դպրոց,

մէկ քանի հարիւր ուսուցիչ,

16,033 աշակերտ:

Դաշնակներու մատուցեցած ծառայութեան օրով, ոչ միայն սեւեւ դպրոց չէր աւելցած, այն Յարական դաժան վարչաձեւէն ժառանգ մնացած դպրոցներն ալ կէսէն աւելին փակւած էին, ցարի ժամանակ դպրոց յաճախողներու կէսէն աւելին դպրոցէն զրկւած էին: Եւ տակաւին կարելի է կատարել տարակուսանքով ընդունիլ դաշնակներու ժամանակ արձանագրւած աշակերտներու թիւը: Անոնցմէ շատ շատերը արձանագրւած ըլլալով հանդերձ, չէին կրնար դպրոց յաճախել, որովհետեւ անօթի եւ մերկ էին, իսկ հարիւրաւոր ուրիշները օրէ օր դո՛հ կերթային սովին ու համաճարակին:

Ընթերցողը կրնա երեւակայել, թէ որքան աւելի դաժան էր դաշնակ վարչաձեւը:

Համոզւելու համար, որ այդ երկուս անիծեալ վարչաձեւը անընդունակ էր կրթական դորձ կազմակերպելու Հայաստանի մէջ, կարողացէք էջմիածնի միջնակարգ դպրոցի տնօրէն Վ. Փափագեանի զաւառի դաշնակ Կոմիսարին տւած բողոքագիրը, որ կը կրէ Մարտ 28, 1920 թւականը.—

«էջմիածնի զաւառի պարոն Կոմիսարին.— Ամսի 26-ի երեկոյեան աշակերտական միութեան տօնի երեկոյթին գիմնագիտում գէնքի ուժով Ձեր ներկայութեամբ ներս խուժեցին 4-5 մատուցերիստներ, սկսեցին անկարգութիւններ, իսկ երբ ես եւ դուք ժամի 10-ին

հեռացել էինք դպրոցից, նրանք չնայած միլիցիայետի, միլիցիոներների եւ շատ ուրիշ պաշտօնականների ներկայութեանը, վերսկսել էին իրենց անկարգութիւնները: Յարձակւել են զէնքով եւ պահանջել բուֆետից կոնեակ, տեղացել են լիտի հայհոյանքներ, խանդարել են պարը, սարսափելի խուճապ են դրել աշակերտ-աշակերտուհիներին եւ հանդիսականներին մէջ, եղել են ուշաթափւած կանայք, ատրճանակ են կրակել երեկոյթում: Յետո այդ մատուցերիստներն արհամարհելով իշխանութեան — դրսից դնդակոծել են դպրոցը. այդ հաստատում են վկաները եւ անձամբ միլիցիայետը: Այդ սրիկա մատուցերիստները, որոնցից վախենում են Ձեր բոլոր իշխանութիւնները — թողել եւ անպատիժ հեռացել են: Միւս օրը ես ինքս նրանց տեսա քեֆի, լճի կողին: Չգիտեմ ինչու նման սրիկաները մինչեւ օրս ման են գալիս եւ չեն ձերբակալուում: Խնդրում եմ յայտնէք թէ դուք ինչ միջոցներ էք ձեռք առնում այդպիսի սրիկաների դէմ, կրթական բարձր հիմնարկութեան մէջ իշխանութիւնների ներկայութեամբ նման խայտառակութիւններ կատարողներին նկատմամբ: Այս գրութեան պատճէնը առանձին ղեկումի հետ կուղարկեմ Հանրապետութեան կրթութեան պարոն մինիստրին, որպէսզի գոնէ մայրաքաղաքի իշխանութիւնները մտածեն, ազատ պահելու գիմնագիտան տեղորիստները եւ նման խայտառակ յարձակումները»:

ՓԱՓԱՋԵԱՆ

Ո՛րքան կասկած է դուրս է, որ Հայաստանի մէջ կրթական դորձ կազմակերպելու համար, նախ պէտք էր տապալէր քայքայիչ բռնատիրութիւնը մատուցերիստներու, որոնց կրունկներու տակ ամենաբարդաւաճ դետինն անգամ դատապարտւած էր խոպանացման:

Այդպէս ալ եղաւ:

Եւ այսօր,

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի մէջ կան —

512 տարրական դպրոցներ.

505 թերի-միջնակարգ դպրոցներ.

159 միջնակարգ դպրոցներ.

Ընդամենը 1,176 դպրոց:

40,000 ուսուցիչներ:

302,257 աշակերտ:

Աշակերտներու այս հանրագումարի մէջ չեն մտնել տեխնիկումներու եւ բարձրագոյն ուսման հիմնարկներու ուսանողներու թիւը: Այս հանրագումարի մէջ չեն մտնել նաեւ մանկապարտէզի երեխաներու թիւը:

Այս հիասքանչ թիւերը ցոյց կուտան, որ Հայաստանի ազգա-

բնակչութեան համարեա թէ մէկ-չորրորդը ընդգրկեա՞ծ է նախնա-
կան, թերի-միջնակարգ եւ միջնակարգ դպրոցներու մէջ:

Այդպիսի համեմատութիւն կարելի չէ դնել նոյնիսկ Եւրո-
պայի եւ Ամերիկայի ամենահարուստ եւ ամենազարգացած երկիր-
ներու մէջ:

Հետաքրքրական է նաեւ իմանալ, թէ բաղդատմամբ Խորհրդա-
յին Միութեան ազգային միւս հանրապետութիւններուն, ի՞նչ չա-
փով է աճեր տարրական եւ միջնակարգ դպրոցներու թիւը Հայաս-
տանի մէջ:

Նախա-Խորհրդային շրջանի հետ բաղդատմամբ, նախակրթա-
րաններու եւ միջնակարգ դպրոցներու թիւը աճած է՝ Ուքրաինայի
մէջ երեք անգամ, Պելո-Ռուսիայի եւ Վրաստանի մէջ 30 անգամ,
Հայաստանի մէջ ութն անգամ, Թուրքմենիստանի մէջ 30 անգամ,
Ռուզպէկիստանի մէջ 64 անգամ, Գերգիզիայի մէջ 43 անգամ, Կա-
զախստանի մէջ զրեթէ 11 անգամ, Տաճիկիստանի մէջ 630 անգամ:

Ո՛րքան յետամնաց է եղեր կրթական դործը տրւած Հանրապե-
տութիւններու մէջ, ա՛յնքան աւելի ուժեղ թափով առաջ տարւած
է կրթական դործը, որպէսզի մօտաւոր ապագային կարելի ըլլա
ազգային բոլոր հանրապետութիւնները հասցնել կրթական միւս-
նոյն այն բարձր մակարդակի վրա, որուն հասեր են արդէն շատ մը
հանրապետութիւններ:

ՅԱՐԻ ՕՐՈՎ

Բարձրագոյն դպրոցներ գոյութիւն չունէին Հայաստանի մէջ,
բացի Գէորգեան ձեմարանէն, որ կերպով մը իր գոյութիւնը կը պա-
հէր էջմիածնի սուերի տակ:

Բացի այդ, Մոսկվայի եւ Սենթ Փեթերսպուրկի բարձրագոյն
հիմնարկներու դռները ամուր փակեա՞ծ էին Հայ ուսանողներու
առջեւ: Ուէ՛ք մէկ Հայ ուսանող շատ բախտաւոր պէտք է համարէր
ինքն իրեն, եթէ այդ հաստատութիւններէն մէկն ու մէկի մէջ
ընդունէր:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Ձէր ալ կարելի սպասել, որ թաւան կազմակերպելով եւ միջ-
ցեղային ջարդեր ու պատերազմներ հրահրելով զբաղեա՞ծ մէկ վար-
չաձեւ, բարձրագոյն դպրոց կազմելու մասին մտածեր անգամ:

Կարգ մը մտաւորականներու «համալսարան» կազմակերպելու
ջանքերը, բոլորովին ձախողեցան:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի մէջ կեանքի են կոչւած 8 բարձրագոյն ուսման
հիմնարկներ (ԲՈՒՀ-եր):

- Այդ հիմնարկներ են. —
- ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ:
- ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ:
- ԲԱԶՄԱՐԻԵՍՏԵԱՆ (պոլիտեխնիկական) ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ:
- ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ:
- ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ:
- ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ:
- ՏԵԽՆՈԼՈԳԻԱ:
- ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ-ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ:

Այս վերջին հիմնարկութիւնը Համամիութեան հաստատու-
թիւն է, ուր ուսանելու կուզան Խորհրդային Միութեան զանազան
կողմերէն ուսանողներ: Այս հաստատութիւնը իր գիտական դոր-
ծիքներու սարքաւորումով եւ իր ուսուցչական կազմով աւելի բար-
ձրը կը համարւի, քան Փարիզի Անասնարուծական-Անասնարուժա-
կան հիմնարկութիւնը:

Այս բոլոր հիմնարկութիւններու մէջ ընդգրկեա՞ծ էին 1934-ին
4,041 ուսանող, 1938-ին 5,000, իսկ 1939-ին 5,981:

Հայաստանի Բարձրագոյն Ուսման Հիմնարկները մինչեւ 1934
թւականը տւած են 2,312 երիտասարդ մասնագէտներ:

Այն ինչ, 1938-ին, մէկ տարւած մէջ, Բարձրագոյն Ուսման
Հիմնարկներէ շրջանաւարտ եղած են 778 երիտասարդ մասնագէտ-
ներ, որոնցմէ՝

- 47 բժիշկ.
- 77 գիւղատնտես.
- 132 անասնաբուժ.
- 82 կենդանաբան.
- 97 ինժեներ.
- 443 մանկավարժ, եւ այլն:

Բացի այդ, հաստատուած է ուսուցչանոց, ուր կը պատրաստւին
Բարձրագոյն Ուսման Հիմնարկութիւններու մէջ դասաւանդելու հա-
մար ուսուցիչներ: 1938-ին, լրացուցիչ այդ դասընթացներուն
հետեւած են 124 երիտասարդ մասնագէտներ:

Խորհրդային իշխանութեան օրով կեանքի կոչւած են նաեւ
ԲԱՆՖԱՐԿՆԵՐ, Բանւորներու Բարձրագոյն Ուսուցման Հիմնարկ-
ներ, ուր կը սորվին բանւորները՝ առանց արտադրութենէն կը-
տրուելու:

Հայաստանի մէջ այժմ գոյութիւն ունին 2 ԲԱՆՖԱՐԿՆԵՐ, որոնց
կը յաճախեն հարիւրաւոր բանւորներ:

Հայաստանի մէջ կան նաեւ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐ, որոնք միջնա-
կարգ դպրոցներ են մասնագիտական թեքումով: Տեխնիկումներ
չկային նախա-Խորհրդային շրջանին:

Հայաստանի մէջ 1928-ին կային ընդամենը 12 տեխնիկումներ 1,676 աշակերտով, 1934-ին 43 Տեխնիկումներ 7,165 աշակերտներով, իսկ 1939-ին 61 Տեխնիկումներ 10,473 աշակերտներով:

Կարելի է ըսել, որ այսօր Հայաստանի Տեխնիկումներուն եւ Բարձրագոյն Ուսման Հիմնարկներուն յաճախողներու թիւը կը հասնի աւելի քան 20,000-ի:

Բացի այդ, այսօր Մոսկովայի եւ Լենինկրատի Բարձրագոյն Ուսուցման Հիմնարկներու մէջ կուսանին ՀԱԶԱՐԱԽՈՐ Հայ ուսանողներ, որոնք Խորհրդային Մեծ Միութեան կառավարութեան ամենաջերմ օժանդակութիւնը կը վայելեն՝ զարգացնելու համար իրենց կարողութիւնները:

Մենք կը տեսնենք, որ Խորհրդային Հայաստանի մէջ Տեխնիկումներն ու Բարձրագոյն Ուսման Հիմնարկները բուռն թափով աճած են վերջին տարիները, յատկապէս Թրոցքիական-Դաշնակ վերասարարներու մաքրագործելէն ասդին:

Պէտք է մտնալ, որ Թրոցքիական-Դաշնակ վրասարարները ինչպէս անասնապահութեան, նոյնպէս կրթական բարձրագոյն հաստատութեանց մէջ որջացած էին եւ արդեւ կը հանդիսանային երկուստարդ սերնդի յառաջդիմութեան եւ կրթական դործի ծաւալման:

Ահա, թէ ինչ կըսէ այդ մասին Գ. Յարութիւնեան, Հայաստասարդ սերնդի յառաջդիմութեան եւ կրթական դործի ծաւալման:

«Ինչ քոյրդ գիտէ՞, որ ժողովրդի քշմամիները յատկապէս ձգտում էին ամբանալ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, իրենց քայքայիչ վնասարարական աշխատանքը կատարելու համար:

«Պասաւանդման ասպարիզում նրանք յատկապէս զգալի վնաս հասցրին Պետական Համալսարանում:

«Ստեղծուել էր «փրոֆեսորներ» մի կաստա՝ Ձեզ յայտնի դաշնակ-փաշիստ սպա Աշխարհբեկ Քայանքարի գլխաւորութեամբ, որը հաւաքել էր մի խումբ շովինիստների եւ հակահորհրդային աշխատանք էր կատարում Պետհամալսարանում:

«Մինչեւ վերջին օրերս ժողովրդի քշմամիները գիտական եւ մանկավարժական աշխատանքին մօտիկ չէին քողում մեր երիտասարդ, ընդունակ կադրերին եւ ամեն կերպ խոչնդոտ էին հանդիսանում գիտական աստիճաններ տալուն»:

Գ. Յարութիւնեան մէջ կը բերէ նաեւ Սթալինի բաժակաճառը գիտութեան կենացը, զոր ան արտասանած է Բարձրագոյն Դպրոցներու աշխատողներու հետ ունեցած իր հանդիպումի ատեն.—

«Գիտութեան ծաղկման կենացը, այն գիտութեան, որ իր հին ու աննշցած ղեկավարներուն քոյլ չի տար ինքնագոհ պար-

փակիլ գիտութեան քուրմերու կեդելի մէջ, գիտութիւնը մեկնաշնորհ ընողներու կեդելի մէջ, որ կը հասկնա գիտութեան՝ երիտասարդ աշխատաւորներու հետ գիտութեան հին աշխատողներու դաշինքի իմաստը, նշանակութիւնը, ամենագորութիւնը, որ կամաւորապէս ու համոյժով գիտութեան քոյր դրոները կը բանա մեր երկրի երիտասարդ ուժերու առջեւ եւ հնարաւորութիւն կուտա անոնց նախելու գիտութեան բարձրագոյնները, որ կընդունի, որ սպագան կը պատկանի գիտութեան երիտասարդութեան»:

Եւ որպէսզի գիտութիւնը տարածուի մինչեւ Հայաստանի ամենայնայնայն անկիւնները, ուր կան երիտասարդ ուժեր, որոնք առանց արտադրութենէն խզելու կրնան պատրաստուիլ գիտական աշխատանքի համար, Երեւանի մէջ հաստատուած են 6 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ, որոնք հազարաւոր ուսանողներ ունին եւ ամեն տարի ուսանողները կընդունուին համապատասխան քննութիւն անցնելէ յետո միայն:

Մենք այլեւս կանգ չենք առնել բազմաթիւ այն շրջանային, դործարանային, կուսակցական, արհեստակցական միութեանական դպրոցներու մասին, որոնք ուսումն ու գիտութիւնը կը տարածեն բնակչութեան աւելի ու աւելի լայն խաւերու մէջ՝ բարձրացնելով մեր ժողովրդի կրթական եւ մշակութային ընդհանուր մակարդակը:

Հարելուաւոր ուրիշ Հայ ուսանողներ, Խորհրդային Միութեան ծախքով կուղարկուին արտասահման գիտական հետազոտութիւններ կատարելու կամ լրացուցիչ դասընթացքներ անցնելու համար:

* * *

Խորհրդային երկրի մէջ մարդու դաստիարակութիւնը կսկսի երեխա եղած ատենէն: Երեխան կար ժանանա, ինչպէս իր հօր եւ մօր, նոյնպէս Խորհրդային հասարակութեան ամենասիրագութ ուշադրութեան:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Մարդու դաստիարակութիւնը, կըսէ «Փրավտա»-ն, կը սկսի երեխայի դաստիարակութենէն: Ան կը շարունակուի դեռահասի եւ պատանիի դաստիարակութեամբ: Սոցիալիստական հասարակութեան մէջ չկա եւ չի կրնար ըլլալ այնպիսի մէկ բայէ, երբ անոր անող գաւակը գտնուի առանց մայրական եւ հայրական հսկողութեան, առանց հոգատար փայփայանքի, առանց սիրագուր ուշադրութեան: Եւ եթէ երեխան որբացած է, կարսնցուցած է հայրն ու մայրը, կամ թէ ծնողները կորսնցուցած են

խորհրդային ֆազիայի արժանիքը՝ անխնամ բողոքելով իրենց երեխաները, մեր հասարակութիւնը իր վրա կը վերցնէ զանոնք հայրաբար խնամելու գործը»:

Ի՞նչ քանով է ուշադրութիւն դարձուցած Խորհրդային Հայաստանը իր երեխաներու նախադպրոցական դաստիարակութեան գործին:

Նախադպրոցական դաստիարակութեան մարզի մէջ Խորհրդային Հայաստանի կատարած նաճուճները իրենց ամբողջ ուժգնութեամբ ըմբռնել կարենալու համար, պէտք է տանք նաեւ մէկ ուրիշ հարցում —

— Եղե՞ր է երբ եւ իցէ նախադպրոցական դաստիարակութիւն նախա-Խորհրդային շրջանին:

ՅԱՐԻ ՕՐՈՎ

Բացարձակապէս անտեսած էր երեխաներու դաստիարակութիւնն ու հասարակական հոգածութիւնը:

ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Մահաւան խորշակը ամենէն առաջ զարկաւ մեր ծաղիկ սերունդը, որ տակաւին չբացւած թարամեցաւ:

Հայաստանի մէջ այդ օրերուն դէպի մանուկները հասարակական հոգածութեան նշոյլն անգամ չկար, եթէ չհաշուենք Մերձաւոր Արեւելի Նպաստամատոյցի որբանոցները, որոնք աւա՞ղ, հաղիւթ է կրնային պատսպարել որբացած սերնդի մէկ փոքրիկ մասը:

Հայաստանի տիրող շրջանակը (դաշնակ ընտրանին), շատ կեանք մը կը վարէր եւ կը թողուր, որ մանուկները սնանին «աղբով», ինչպէս Խոտիսեանը կը խոստովանի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայաստանի մէջ կազմակերպեցան ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉՆԵՐ եւ ՄԱՆԿԱ-ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ:

Սկզբնական շրջանին անոնց թիւը շատ քիչ էր: Բայց, մանաւանդ վերջին մէկ քանի տարւա ընթացքին նախադպրոցական կըրթութիւնը Հայաստանի մէջ մեծ թափ ստացաւ: Տեսնենք, թէ տասնամեակի մը ընթացքին ինչպիսի ծաւալով աճած են մանկապարտէզներն ու մանկահարապարակները Խորհրդային Հայաստանի մէջ.

- 1927-ին
- 51 Մանկապարտէզ 2,840 երեխայով:
- 52 Մանկահարապարակ 1,180 երեխայով:
- 1937-ին
- 424 Մանկապարտէզ 19,161 երեխայով:
- 641 Մանկահարապարակ 29,912 երեխայով:

ԻՍԿ Ի՞ՆՉ ՊԱՏԱՀԵՑԱԻ ԱԻՆԼԻ ՔԱՆ 50,000 ՈՐԲԵՐՈՒՆ:

Առաջին անգամ ըլլալով Խորհրդային Հայաստանը հաւաքեց այդ որբերը, ՀԱՅՐԱԲԱՐ ԽՆԱՄԵՅ դանոնք եւ անոնք մոռցան իրենց սրբութիւնը:

Եւ, ահա, 20 տարի առաջ աղբանոցներու մէջ կամ նկուղներու անկիւնը խամբելու դատապարտուածներէն շատ շատերը, կեանքի յատակէն բարձրացան հոշակաւոր մարդոց մակարդակը, նաճեցին ժողովրդական դանդաճներու համարումն ու սէրը եւ լիառատ ու բերկրալի կեանք մը:

Թոյլ տանք, որ Հայաստանի ժողովուրդն ինքը վկայէ այս մասին:

Հայաստանի 150,000 հարւածային բանւորները, հաւաքական աղարակապանները եւ աշխատաւորները, տակաւին Հայաստանի Խորհրդայնացման 15-րդ տարեդարձին, Սթալինին դրած իրենց մըտերմական նամակի մէջ հետեւեալը ըսած էին. —

«Ո՞վ էր երազում, թէ տասնհինգ տարի առաջ մեզ մօտ եղած ոտաբոսիկ որբերը, որոնց թիւը 50,000-ից անցնում էր եւ բաւրակները (երկրագործական ընչազուրկ բանւոր) կը դառնան գիտնականներ, գրողներ, փրոֆեսորներ, ջոկատավարներ ու թրաքթորիստներ: Իսկ այսպիսիները շատ...»

«Ահա նախկին որբ, կօշիկ մաքրող Եղրաս Հասրաթեանը — բընախօսութեան ասպարիզում աշխատող տաղանդաւոր երիտասարդ գիտնական: Երիտասարդ գիտնական՝ ընկեր Լ. Ղազարեանը քիմիայից աչքի ընկնող գիտական աշխատանքներ է տւել: Երեւանի Բժշկական Ինստիտուտի (հիմնարկութեան) գիտական աշխատողներին՝ ընկեր Բ. Ֆանարջեանն արդէն յայտնի է դարձել Ռենտգեն-տոլոգիայի (անձանօթ ճառագայթներու զիտութեան) ասպարիզում կատարած իր գիտական աշխատանքներով:

«Մեր երկիրը Խորհուրդների յաղթանակից յետո տւել է բազմաթիւ այդպիսի նոր գիտնականներ, ինչպէս նաեւ տաղանդաւոր գրողներ, արտիստներ, նկարիչներ եւ արւեստադէտներ:

«Որքա՞ն շատ են աշխատաւոր ժողովրդի ծոցից դուրս եկած անւանի մարդիկ»:

* * *

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան Գիտական Ակադեմիայի Հայկական ծիւղը, կը համարւի Խորհրդային Հայաստանի մտքի կեդրոնը, ինչպէս այդ ճիշտ կերպով կը բնորոշէ Հայ գիտնական Հ. Բագրիկեանը:

ԽՈՐՀ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԻՂԸ

Ակադեմիայի Հայկական ծիւղի հետ կապւած հաստատութիւն-

ներ են Պատմութեան եւ Հնագիտութեան Հիմնարկութիւնը, Քիմիական Հիմնարկութիւնը, Կենսաբանական Հիմնարկութիւնը, Երկրաբանական Հիմնարկութիւնը:

Քսան տարւա ընթացքին Հայաստանի մէջ զգալի կերպով աճեր է գիտական աշխատողներու թիւը:

Մինչդեռ նախա-Սորհրդային շրջանին աշխարհի ամեն մէկ անկիւնը կարելի էր հանդիպիլ Հայ գրողներու, արւեստագէտներու եւ գիտնականներու՝ բացի Հայաստանէն, այժմ արդէն Սորհրդային իշխանութեան 20 տարիներուն, Հայաստանի մէջ գիտական աշխատողներու թիւը կը հասնի 182-ի, իսկ գիտական հիմնարկներու թիւը 40-ի:

Հայաստանը Սորհրդային իշխանութեան օրով միայն դարձաւ Հայկական մշակոյթի դարգացման իրական ուրանն ու հնոցը:

Հայաստանի 182 գիտական աշխատողներու մէջ կան 2 ակադեմական, 16 տոքթոր-փրոֆեսոր, 40 գիտութեան թեկնածու: Մի միայն այս տարւա առաջին վեց ամսուա ընթացքին Գիտութեան Թեկնածուի աստիճան ստանալու համար նիւթեր ներկայացուցած են 11 գիտական աշխատողներ:

Ակադեմիայի Հայկական ծիւղի ուսուցչանոցի մէջ այս տարի պատրաստւած են 25 գիտական դասախօսներ, իսկ Սեպտեմբերին (1940 թ.) ուսուցչանոց ընդունւած 16 մարդիկ:

Ակադեմիայի Հայկական ծիւղը գիտական աշխատողներու եւ ժողովրդական խաւերու համար կազմակերպած է գեկուցումներ: Տրւած են արդէն գեկուցումներ Մեսրոբ Մաշտոցի, Մովսէս Խորենացիի, Հայոց Գրերու Գիւտի, Զէյթունցիներու ապստամբութեան, Իրաֆայէլ Պատկանեանի եւ ուրիշներու մասին:

* * *

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ նպատակ է դրած «լուսարանել եւ մշակել Հայ ժողովրդի դարաւոր եւ հարուստ պատմութիւնը, մասնաւորապէս ուսումնասիրել, վեր հանել օտարերկրեա նւաճողներու դէմ հայ ժողովրդի մղած ազատագրական յամառ պայքարի հերոսական ու փայլուն էջերը:

ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Պատմութեան եւ Հնագիտութեան հիմնարկութիւնն արդէն իսկ աւարտած է Հայ ժողովրդի պատմութեան մէկհատորեակը:

Բացի այդ, Հիմնարկութիւնը անցեալ տարի պատրաստեց եւ հրատարակեց շարք մը արժէքաւոր եւ հետաքրքրական շարադրութիւններ հայ ժողովրդի պատմութեան կապակցութեամբ:

Այս տարի Հիմնարկութիւնը կը ձեռնարկէ Հայ ժողովրդի պատ-

մութեան հինգհատորեակը պատրաստելու գործին եւ հաւանաբար տարին չլիւրջացած կուտա այդ ընդարձակ գործի առաջին հատորը:

Հիմնարկութիւնը շարունակեց Դւինի աւերակներու պեղումները:

Հիմնարկութիւնը պատրաստած է եւ կը հրատարակէ դոյութիւն ունեցող Հայերէն ձեռագրերու ցանկը, ամփոփւած 6 հատորի մէջ: Հրատարակութեան համար կը պատրաստւին գիտահետազոտական շարք մը աշխատութիւններ եւ փաստաթղթերու հաւաքածոներ:

Հիմնարկութիւնն այս տարի հրատարակեց Ակադեմիոս Հ. Մանանդեանի «ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ ԵՒ ՀՈՒՄԸ» մեծարժէք երկասիրութիւնը, Փրոֆեսոր Խ. Սամուէլեանի «Հին Հայ Իրաւունքի Պատմութիւնը», գիտութիւններու թեկնածու Վ. Չայոյեանի «Եզնիկ Կողբացի», «Յարիզմի Գաղութային Քաղաքակառուցութիւնը Հաստատումը», «Նայրանդեանը Քննադատ» եւ այլն:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՍ ՏԱՐԻ զրտուած է մէկ քանի խիստ կարեւոր խնդիրներու լուծումով:

Հիմնարկութիւնը կուսումնասիրէ Մոլիբդենի հանքաքարը, որոշելու համար, թէ ինչ ձեւով կարելի կըլլա այդ հանքաքարէն աւելի յարմար ձեւով մոլիբդեն ստանալ, ինչպէս նաեւ այն հարցը, թէ բացի մոլիբդենէն ուրիշ մետաղներ կա՞ն այդ հանքաքարի մէջ: Մինչեւ հիմա պարզւած է, որ այդ հանքաքարի մէջ կան նաեւ ցալիւի, վանադիլ եւ ցիրկոնիլ կոչող հազարաւոր տարրեր:

Հիմնարկութիւնը զբաղւած է դաճէն, մարած կիրէն եւ շարք մը այլ-թափթփուկներէն արհեստական մետաքսէ թուղթ ստանալու կարելիութիւնը, ինչպէս նաեւ պահանջներու եւ գինիի արդիւնաբերութեանց թափթփուկներն օգտագործելու խնդիրը ուսումնասիրելով:

Հիմնարկութիւնը ուսումնասիրած է շարք մը բոյսեր, որոնց մէջ կը գտնուի Սի վայթեմինը, ինչ որ շատ կարեւոր է սննդամթերքներու պահպանութեան տեսակէտէն:

Հիմնարկութիւնը կաշխատի գտնել նիւթ մը, որով կարելի էլլա փայտէ եւ մետաղէ առարկաները ծածկել եւ փրկել դանոնք փճացումէն:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ կզբաղի գիւղատնտեսութեան բերքատուութեան բարձրացման, Հայաստանի կենդանական աղբիւրներու հաշտուման, կերի աղբիւրներու հարստացման եւ նման կարեւոր խնդիրներով:

Շնորհիւ Հիմնարկութեան կիրարկած ծերատման դիտական մեթոդի, Հայաստանի մէջ բարձրացեր է բամպակի արտադրութիւնը:

Հիմնարկութիւնը Հայաստանի հացահատիկներու որակը բարելաւելու աշխատանք կը կատարէ, կիրարկելով բոյսերու խաչածեւ բեղբնաւորման մեթոդը:

Հիմնարկութիւնը կուսումնասիրէ գետնախնձորի ամառնային ցանքի խնդիրը, յատկապէս այդ ցանքի ժամկէտերու որոշումը Հայաստանի տարբեր պայմաններու մէջ: Հիմնարկութեան նպատակն է 1941-ին զանգառային սերմնափորձման յանձնել գետնախնձորի ու ցորենի մէկ քանի նոր, արժէքաւոր ձեւերը:

Հիմնարկութիւնը կուսումնասիրէ նաեւ այգեգործութիւնն ու պտղաբուծութիւնը, ինչպէս նաեւ դիւղատնտեսութեան զանազան վնասատուները: Կուսումնասիրելի նաեւ Հայաստանի որսորդական կարելիութիւնները, նպատակ ունենալով մեր երկրի կենդանական աշխարհը հարստացնել բազմաթիւ կենդանիներով:

Հիմնարկութիւնը խոշոր աշխատանք կը ծաւալէ մանրէաբանութեան ասպարէզի մէջ, նպատակ ունենալով հողի եւ բոյսերու մէջ գտնուող օդատակար մանրէները օդտագործել՝ բարձրացնելու համար դիւղատնտեսութեան բերքատուութիւնը, ինչպէս նաեւ օդտագործելի դարձնել այժմ արդէն խոպան մնացած հսկայական տարածութիւնները:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ կուսումնասիրէ Հայաստանի ջրային հարստութիւնները ելեկտրականութեան, ոռոգման եւ ջրամատակարարութեան համար միաժամանակ օգտագործելու բարդ խնդիրը:

Հիմնարկութիւնը կը պատրաստէ Սեւան-Չանգու ջրվէժի ելեկտրակայաններու ուժի բաշխման ծրագիրը, կը նշէ ոռոգման նոր սխտեմներու ցանցը, կը մշակէ դիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան յետագա զարգացման փլանը:

Հայաստանի ժողովրդական տնտեսութեան մէջ մեծ նշանակութիւն ունի Սեւան Լիճը: Այդ պատճառով ալ, Երկրաբանական Հիմնարկութեան խնդիրն է Սեւանի արժէքաւոր ջրերը խիստ խնայողաբար գործածել, աշխատելով Հայաստանի մնացած ջուրերը առաւելագոյն չափով օգտագործել:

Մեկնելով այս տեսակէտէն, Հիմնարկութիւնը կուսումնասիրէ Արարատեան Հովտի ստորերկրեա ջուրերը օգտագործելու կարելիութիւնը:

Իր գոյութեան հինգ տարիներու ընթացքին Երեւանի աստղադիտարանը ոչ միայն խոշոր դիտական աշխատանք է կատարեր, այլ եւ աճեցուցած է բազմաթիւ երիտասարդ շնորհալի աստղաբաշխներ: Անոնցմէ մէկ քանին իրենց դիտումներու հիման վերաներկայիս կը գրեն դիտական ուսումնասիրութիւն: Պարթեւ Գէորգեանը այս տարւա համար սպազբութեան կը պատրաստէ «Մետեորներ» աշխատութիւնը: Այժմ աստղադիտարանի խումբ մը գլխավոր աշխատողները կը գրեն օրացոյցի պատմութիւնը, ժողովրդական պրոչիւր մը: Գլխավոր աշխատող Յովհաննէս Յակոբեանը կաշխատի «Արեւի Բիծերը եւ Սպեկտրները» նիւթի վրա: Բացի այս բոլորէն, 1940 թւի ընթացքին աստղադիտարանի աշխատողները պիտի զբաղին «Մշուշային Սպեկտրներ», «Արեւային Ուժը Սորհրդային Հայաստանում», «Անդրաշխարհային Ճառագայթներ», «Արեւային Գործունէութիւնը» եւ շարք մը այլ նիւթերու մշակութեամբ:

* * *

Սորհրդային պատանիներու եւ երիտասարդութեան դաստիարակութեան մէջ մեծ տեղ կը զբաւէ մարմնամարզութիւնն ու ըսփորթը:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ Որպէսզի կառավարութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձնէ այս դործին, ժողովրդական Կոմիսարներու Սորհրդի կից կազմած է Մարմնամարզութեան եւ Սփորթի Գործերու Կոմիտէ:

Ըստ այդ Կոմիտէի տեւալներուն, այսօր Հայաստանի քաղաքներու եւ գիւղերու մէջ կան 735 մարզական-սփորթային կազմակերպութիւններ, որոնց անդամներու թիւը կը հասնի 31,000-ի:

Սոչոր են Հայաստանի մարզիկներու եւ սփորթամեններու կատարած նւաճումները Սորհրդային իշխանութեան քսան տարիներուն:

Հայաստանի մարզիկներուն կը պատկանի Համաշխարհային 2 մրցանիչ, Համամիութենական 6 մրցանիչ եւ Հանրապետական 235 մրցանիչ:

Տարւէ տարի ոչ միայն աճած են մարմնամարզական կազմակերպութիւնները, այլ նաեւ աճած է սփորթի վարպետներու թիւը:

Համաշխարհային ախոյեաններ են Ս. Համբարձումեան եւ Ռ. Մանուկեան:

Այս տարի Սորհրդային Միութեան ախոյեաններ հռչակած են Ըմբշամարտի վարպետ Ս. Վարդանեանը, ծանրութիւն վերցնելու վարպետներ Աղգարովը, Սունդեկարեանը, Ֆեոֆանովը, Պլեստուլ-

ները, որ կային աղջիկների ձեռքերին: Դրանց փոխարինում են մարտական հրացանները:

«Սկսում է ահեղ ուղիղախաղը: Սկզբում լուր տղաներն են այնտեղ: Երիտասարդ հայրենասերները մեծ հմտություն են ցուցաբերում յատկապես այս տեսարանում: Հանդէս է դալիս նրանց զարմանալի ճարտիկությունը, գրոհող թշնամուն գնդակով եւ սելնով հարածելու հնարամտությունը, վիթխարի ուժն ու հզորությունը:

«Զգում ես, որ նրանցից իւրաքանչիւրի կրծքի տակ բարախում է անմահ մի սիրտ, լցած հայրենասիրութեան անջինջ կրակով, կարիւրութեան, հաւատի եւ յաղթանակի Սթալինեան ուղին, անխորտակելի կամքը:

«... Ռազմախաղը գնալով տաքանում է: Քաջարի մարտիկները կուռում են խիզախութեամբ: Եւ նրանք հաւատարիմ ու անվախ օգնականներ ունեն իրենց թիկունքում»:

Մոսկվայի չքահանգէսին մասնակցողներէն մէկը, խօսելով Հայ մարզիկներու ցուցադրած ՌԱԶՄԱՍՍԱՆԻ մասին, կը գրէ —

«Ռազմախաղը կը սկսին տղաները, անոնք փարպիկութեամբ կը սիւնահարեն քշնամին: Այնուհետեւ անոնց կը միանան աղջիկները: Անոնք՝ երկրի հրաշալի դուստրերը, գիտեն կուրի իրենց եղբայրներու պէս — անոնց պէս ժիր, յամառ, համարձակ»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԱԶՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ — Խիզախ Բազմեր, Որոնք Իրենց Եղբայրներու Պէս Արի՝ Պատրաստ են Պաշտպանելու ՀԱՅՐԵՆԻՔԸ

ԴՍԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայ կինը, դարերով ստրուկ եւ ձայնագուրկ, ազատագրուեցաւ մի՛այն Հայաստանի Խորհրդայնացումով, եւ դարձաւ այր մարդու հաւասարազօր ըծակիցը, դարձաւ իրական եւ հրաշալի դործօն մը Հայ ժողովրդի պանծալի ազգային վերածնունդը կերտելու հերոսական գործի մէջ:

Հայաստանի օղաջու կիներու մէջ յայտնի է Ռ. Սարգսեանը:

Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Միութեան Փարլամենտի անդամ են նաեւ Հայաստանի կանայք: Ուսուցչուհի Ա. Խաչիկեանը անդամ է Խորհրդային Միութեան Փարլամենտին, իսկ ծրարախոտի գործարանի բանուորուհի Յ. Աւետիսեանը՝ Հայաստանի Փարլամենտին:

Տեսնենք, թէ ի՛նչ նկատելի մասնակցութիւն բերած է Հայ կինը Հայաստանի շինարարութեան մէջ:

* * *

Հայաստանի արդիւնաբերութեան մէջ ակնառու դեր կը խաղան Հայաստանի հիւսնալի դուստրերը:

ԿԱՆԱՅՔ ԱՐԴԻԻՆԱ-ԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ոչ մէկ մարզի մէջ Հայաստանի կտրիճ աղջիկները չեն ուզեր ետ մընալ իրենց եղբայրներէն: Մանաւանդ, այս օրերուն, Հայ կանայք կը պատրաստուին նոյնիսկ ծանր արդիւնաբերութեան եւ հանքարդիւնաբերութեան մէջ գրաւել այր մարդոց տեղը, եթէ հայրենիքը պէտք ունենա անոնց ծառայութեան, պաշտպանութեան ճակատի վրա:

Լենինականի հիւսնաբերութեան գործարանախմբի, Երեւանի պահածոյի, Կարի, Ծխախոտի գործարաններու մէջ աշխատողները դերակցեցապէս կանայք են:

Հայաստանի աշխատուոր այդ դուստրերը ակնառու նւաճումներ են արձանագրած իրենց աշխատանքի ընթացքին:

Լենինականի մանւածքային գործարանը, ուր աշխատողները համարեա թէ կանայք են, անցեալ տարի Փետրվար 1-16 արտադրած է 109,044 ըլլովրամ մանւածք՝ փլանով նախատեսւած 101,024 ըլլովրամի փոխարէն:

Երեւանի փայտամշակման գործարանի մէջ քիչ չէ թիւը այն կանանց, որոնք իրենց համար նշանակւած արտադրական չափաիւրէն մէկ ու կէս կամ երկու անգամ աւելի կարտադրեն:

Երեւանի կաշեգործարանի նախապատրաստական բաժանմունքը, ուր բոլոր գործողները կանայք են, գործարանի բոլոր բաժանմունքը

ներէն ամենէն յաջողն է: Այս բաժանմունքը ամբողջ տարի պահած է գործարանի փոխանցիկ դրօշը:

Պօսելով արդիւնաբերութեան մէջ գործող կանանց մասին, «Սորհրդային Հայաստան» կը գրէ:—

«Քիչ չեն այնպիսի կանայք, որոնք դրակել են հրամանատարական դիրքեր եւ մեծ շնորհքով կը կատարեն գործարանի դիրեկտորի, գործարանային բաժանմունքի մը վարիչի ու վարպետի պատասխանատու դերը:

«Միայն սոցիալիստական կարգերու տակ աշխատաւոր կինը կրնա ունենալ աշխատանքի այդպիսի իրաւունք, աշխատանք, որ դարձեր է փառքի ու պատւի գործ Սորհրդային իւրաքանչիւր քաղաքացիի համար»:

Գիւղատնտեսութեան մէջ եւս խիստ կարեւոր դեր է կատարած Հայ կինը:

«Հաւաքական հողամշակութեան շարժումը առաջ քաշեց դեկավար պաշտօններու համար շատ մը երեւելի եւ ընդունակ կանայք...: Կիները շատոնց յետամնաց վիճակէն անցեր են առաջաւորներու շարքերը:

ՎԱՆԱՅՔ ԳԻՏՈՒԹԵԱՆՍԵՆՍԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Միայն հաւաքատնտեսական կեանքը կրցաւ իսկական հերոսուհի կանայք ծնել դիւղի մէջ: Միայն հաւաքատնտեսական կեանքը կրցաւ ոչնչացնել անհատատնտեսութիւնը եւ կինը ոտքի կանգնեցնել»:

«Միայն հաւաքատնտեսական կեանքը կրցաւ իսկական հերոսուհի կանայք ծնել դիւղի մէջ: Միայն հաւաքատնտեսական կեանքը կրցաւ ոչնչացնել անհատատնտեսութիւնը եւ կինը ոտքի կանգնեցնել»:

Սթալինի այս խօսքերը աւելի քան պերճախօս կերպով կը բնորոշեն կնոջ դիրքը այսօրու Հայաստանի մէջ:

Եւ իրօք ինչպէս Սորհրդային բոլոր հանրապետութիւններու, նոյնպէս Հայաստանի մէջ հերոսուհի կանայք այրերու հաւասար աշխատանք են կատարած տնտեսութեան բոլոր ճիւղերու մէջ: Այսօրու դեղձկուհի կը տիրապետէ գիւղատնտեսական արդիական մեքենականութեան, կը վարէ թրաքթոր եւ քոմպայն:

Օղակալարուհի Վառլինկա Փանոսեանի խումբը 1938-ին հեկտարէն ստացած է 53 ցենտներ 15 քիլոկրամ բամպակ (մէկ ցենտները հարիւր քիլոկրամ է), որ ամենաբարձր բերքն է Հայաստանի մէջ: Այս օղակը չորս տարի շարունակ մրցանիչ կոտրած է բամպակի բերքատուութեան մէջ:

Փաթմա Կաֆարովանի օղակը նոյն տարի տւած է հեկտարէն 49 ցենտներ բամպակ: Նախկին անգրագէտ Քրտուհի գրել կարգալ է սովորած եւ հիմա անդամ է Հայաստանի Փարլամենտին (Գերագոյն Սորհրդին):

Ամբողջ Հայաստանի մէջ համբաւ է վաստկած օղակալարուհի Վարդուհի Շահինեան:

Սորհրդային Հայաստանի մէջ համբաւ է վաստկած օղակալարուհի Վարդուհի Շահինեան:

Երիտասարդ Հրանուշ Պաղտասարեանը հաւաքած է 11,000 քիլոկրամ բամպակ, առաջնութիւնը շահելով ամբողջ Հայաստանի մէջ:

Վարդանուշ Բաղալեանի օղակը հեկտարէն ստացած է 25 ցենտներ ծխախոտ: Բաղալեանը անդամ է Հայաստանի Փարլամենտին: Ստախանովեան ծխախոտագործուհի Անաստասիա Թադեւոսեանը Կոտայքի շրջանային կառավարութեան Նախագահի Տեղակալն է:

Աստղիկ Դոխոյեանի օղակը հեկտարէն ստացած է 248 ցենտներ դեմնախնձոր, իսկ Դինա Լեոնովանցի օղակը 268 ցենտներ:

Հարիւրաւոր կանայք այսօր յաջողակ էս կը վարեն օղակներ, ջոկատներ, անասնապահական ագարակներ, հաւաքական ագարակներ եւ կը գլխաւորեն գիւղական խորհուրդներ:

Հազարաւոր կանայք այսօր, արեւային Հայաստանի մէջ, կը պայքարին երկրին տալու համար լիառատ եւ բարձրորակ բերք:

* * *

Հայաստանի տաղանդաւոր դուստրերը ոչ նւազ ընդունակութիւն ցոյց կուտան գիտութեան մարզի մէջ: Այսօր արդէն գիտական աշխատանքներու մէջ իրենց պատւաւոր տեղը կը զբաւեն բազմաթիւ հայ կանայք:

ՎԱՆԱՅՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ ՄԷՋ

Անոնցմէ մէկն է ԱՐՄԻԿ ԲԱԲԱՅԵԱՆԸ, որ 1929-ին աւարտած է Հայաստանի Համալսարանը: Ան աշխատած է Համալսարանի օրգանական քիմիայի բաժանմունքի մէջ որպէս օգնական: 1934-ին սկսած է հրաշալի կերպով աւանդել օրգանական քիմիայի առարկան: Գրած է հինգ արժէքաւոր գիտական աշխատանքներ: 1937-ին, ան Լենինկրատի Քիմիական Տեխնոլոգիային առջեւ պաշտպանած է գիտութիւններու թեկնածուի իր թեզը:

Ան ամենագործօն մասնակցութիւն կը բերէ Պաշլը-Ալլաքիմի (Օդային եւ Քիմիական Պաշտպանութեան) հասարակական աշխատանքին:

ԹԱՄԱՐԱՍ ԿՈՆԱՏԵԱՆԸ Սորհրդային Միութեան Գիտութիւններու Ակադեմիայի Հայկական ճիւղի հեղինակաւոր գիտական աշխատողներէն է: Ան աւարտած է Երեւանի Գիւղատնտեսական Հիմնարկութեան Հողա-քիմիական բաժանմունքը: 1935-էն ի վեր ստացել է կրտսեր գիտական աշխատողի կոչում:

Տպագրւած են գիտական հարցերու վերաբերեալ իր մէկ քանի երկասիրութիւնները:

ԷԼԻԶԱ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ շրջանաւարտ է Երեւանի Պետական Համալսարանէն եւ այդ մեծ հաստատութեան մէջ ընդհանուր գրական

նութեան դասախօս է: Ան դիտութիւններու թեկնածու է եւ դո-
ցենտ:

Գիտական բեղմնաւոր աշխատանքներ կատարեր են նաեւ Անաս-
նաբուծական Հիմնարկութեան անորգանական եւ անալիտիկ քիմի-
այի դասախօսուհի Ա. Յարութիւնեանը, որ դրեր է գիտական Յ
դրքեր. Գիւղատնտեսական Հիմնարկութեան ուսուցչուհի Ամալիա
Խաչատրեանը. Պետական Համալսարանի Ծննդական Բաժանմունքի
դոցենտ Երմինէ Պողոսեանը. Գիտական մէկ ուրիշ ակնառու ծառա-
յող է Ս. Թառաեանը, որ քիմիական դիտութիւններու թեկնածու է:

Մեր մատնանշած անունները միայն մէկ քանի ակնառու ներ-
կայացուցիչներն են գիտութեան ճակատի վրա աշխատող կանանց
պանծալի բանակին: «Անոնց բանակը, կըսէ «Խորհրդային Հայաս-
տան», մեծ է ու անյաղթահարելի»:

* * *

Հայաստանի աշխատաւոր դուստրերը ոչ միայն ընդունակ են
հերոսական աշխատանքի, այլ նաեւ կը պատրաստուին հերոսաբար

**ԿԱՆԱՅՔ ՊԱՇՏՊԱՆՈՒ-
ԹԵԱՆ ԴԻՐՔԵՐՈՒ ՎՐԱ**

պաշտպանելու Հայրենիքը, եթէ
հարկը պահանջ գէնքով եւ ռազ-
մական արդիական բոլոր միջոց-
ներով:

«Խորհրդային Հայաստան» մեծ օրաթերթի մէջ կը կարդանք,
որ Ղամբարուի մէջ պաշտպանութեան կին դերադանցիկները շրջա-
նային հաւաք ունեցած են, որուն մասնակցած են մարտական 200
կոլխոզի աղջիկներ:

Կոլխոզնիկուհի մը (հաւաքական աւարակի անդամ) Սրբուհի
Առաքելեան, պատմած է, որ Դալար գիւղի մէջ կանայք աշխուժօրէն
կը սովորին ռազմական գործը: Դալար գիւղի պաշտպանութեան
խմբակի մէջ ընդգրկուած 50 արիանուշները պատրաստուած են յանձ-
նելու Վորոշիլովեան Հրաձիգի եւ Հայրենիքի Օդային եւ Քիմիական
Պաշտպանութեան քննութիւնները:

Ուրիշ Կոլխոզնիկուհի մը, Գեղեցիկ Համբարձումեան, յայտ-
նած է, որ Ղամբարուի շրջանի մէջ կան 125 Վորոշիլովեան Հրաձիգ-
ներ եւ 300 մարտական կանանց կրճ.քերը կը դարդարէ Հայրենիքի
Օդային եւ Քիմիական Պաշտպանութեան կրճ.քանները, իսկ հա-
ջիւր ուրիշ կանայք կը սորվին ռազմական գործը:

Աւելի քան 500 կանայք պատասխանատու գործերու վրա կաշ-
խատին Հայաստանի երկաթուղային ցանցի մէջ:

Մեծ գովեստով կը խօսուի շոգեքարշի մեքենավարի օգնական-
ներ Վարդանուշ Զոհրապեանի, Մունիա Աբուլովանի եւ Նկատերիա
Կարաչուբովանի, Լենինականի վակոնային տեփոյի ուժեր պատրաս-
տող բաժանմունքի պետ Շուշիկ Ասատյեանի, Հիւանդանոցի բժշկու-

հի Արաքսի Երազեանի, չնորհալի պրոպագանդիստ Արուս Դանիէլ-
եանի մասին:

Խօսելով այդ կանանց մասին, «Խորհրդային Հայաստան»ի
թղթակիցը կըսէ, թէ «անոնք պատուով կը կատարեն Խորհրդային
Միութեան կառավարութեան ղեկավար Մոլոթովի կոչը՝ ազնւօրէն
աշխատել եւ այդպիսով աւելի ամրացնել մեր հերոսական Կարմիր
Բանակի հզօրութիւնը»:

Անցեալ տարի առողջապահական պաշտպանութեան հետ կապ-
ւած 37 մարտական կանայք հետիոտն արչաւ մը կազմակերպեցին
Լենինականէն Երեւան: Այդ արչաւը ցայտուն կերպով երեւան բե-
րաւ Հայաստանի արիասիրտ դուստրերու տոկոսնութիւնը:


Տակաւին քանի մը ամիս առաջ, Խորհրդային Միութեան կա-
ռավարութիւնը Վորոշիլովեան Հրացանաձգութեան առաջին եւ երկ-
րորդ շքանշաններով պարգևատրեց՝ պաշտպանութեան ասպարէզի
մէջ փայլուն նաճումներ կատարած երիտասարդ քաղաքացիները:

Վարձատրուածներու մէջ են Հայաստանի երկու կտրիճ դուստ-
րերը, կոլխոզնիկուհիներ Ամալիա Աւետիսեանը եւ Ռոզ Բաղդա-
սարեանը:

«Փրօվտա»ն հրատարակեց առիւծասիրտ Ամալիայի եւ Ռոզի
նկարները: Անոնցմէ մէկը իր հրացանով Վորոշիլովեան նշան կառ-
նէ. միւսը, ձեռքերը դրած հրացանի փողին, վստահութեամբ եւ
արիութեամբ կը դիտէ մեր երկրի սահմանները, որոնք երկաթէ եւ
սիմենթէ ամրութիւններու եւ մեքենայացած Կարմիր Բանակի ան-
խորտակելի փականքի տակ են:

Այսպէս են 20-րդ դարու Հայաստանի դստերը, իր պանծալի
աղգային վերածննդի 20-րդ տարին բոլորած տաղանդաւոր եւ կրտ-
րիճ Հայ Ժողովրդի աղջիկները:

Անոնք մեր մայր Ծովինարի եւ արքայամայր Փարանձեմի պէս
հայրենասէր են եւ Խանդութ Խաթունի պէս մարտական:



ւատին ու գրականութեան սկսան ծանօթանալ աշխարհի շատ մը ժողովուրդները եւ սկսան սիրել զանոնք:

«Սասունցի Դաւիթ» հիանալի ղիւցազնավէպի հազարամեակը եւ Հայկական Արեւստի Տասնօրեակը Մոսկւայի մէջ, այդ տեսակէտէն առնւած խոշոր քայլեր էին:

Աշխարհի խոշորագոյն թերթերէն մէկը, Խորհրդային Միութեան պաշտօնաթերթ «Իզվեսթիա»ն, ահա թէ ինչպէս վը զնահատէր Հայկական Արեւստի Տասնօրեակը:—

«Գեղարեւստական հնագոյն մշակոյթի ժողովուրդը, յեղափոխական բարձր մշակոյթի ժողովուրդը, որ տւած է Մտեփան Շահումեանի, Սուրէն Սպենդարեանի եւ Անաստաս Միկոյեանի պէս էրեւելի գործիչներ, ժողովուրդն այդ արեւաշատ Հայաստանի՝ Հուրը քող բերէ Հիւսիսի Մոսկւային, քող նոյնացնէ Խորհրդային մշակոյթը իր հիւքեղ, լուսաւոր գոյներով, իր հնչեղ երաժշտութեամբ, իր նոր, երջանիկ եւ կենսաւրախ երիտասարդութեամբ»:

Նացիներու դործակալ Հայ ժողովրդի թշնամիներն ու դաւաճանները գրականութեան եւ արեւստի ասպարէզներու մէջ եւս քիչ աւերներ չգործեցին:

ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄ

Անոնք սխտեմատիկ կերպով սպառնալից կը ընէին ձեռով ազգային եւ բովանդակութեամբ Խորհրդային մեր գրականութեան զարգացումը: Անոնք մեր դարաւոր մշակոյթի իրական տիրանները կը ներկայացնէին որպէս յետադիմականներ, երբեմն նոյնիսկ Ֆաշիզմի եւ Նացիզմի նախակարապետներ, որպէսզի աճող սերունդը նախապաշարէին եւ հետու պահէին զանոնք ազգասիրութեան, հայրենասիրութեան եւ ժողովրդասիրութեան ներշնչման ակունքներէն: Անոնք, ընդհակառակը, առաջ կը քաշէին կեղծ դասական գրողները եւ այն ամեն ինչ, որ անցեալին եղեր է յետադիմական եւ անընդունելի Հայ ժողովրդի համար:

Անոնք ոչ միայն արդեւք կը հանդիսանային առաջ եկող թարմ ուժերու բարձրացման, այլ սպառնալից կը ընէին գրականութեան եւ արեւստի այնպիսի հին վարպետներու գործերը, ինչպիսիք են Արազին, Դերենիկ Դեմիրճեանը, Ստեփան Զօրեանը, Ռոմանոս Մելիքեանը, Մանուէլեանը եւ ուրիշներ:

Ձեռով ազգային Խորհրդային մեր գրականութիւնը իր զարգացման բնական ուղին մտաւ միայն այն ժամանակ, երբ ճանապարհէն մաքրեցան այս խոչնդոտները:

Եւ ահա, դաշնակիներն ու յետադիմութեան բոլոր ներկայացուցիչները սկսան հրապարակը ազմկել, թէ Խորհրդային կառավար-

րութիւնը կը հալածէ Հայկական գրականութիւնն ու արեւստը, Հայ գրողներն ու արեւստագէտները:

Միակ ճշմարտութիւնն այն էր, որ Խորհրդային կառավարութիւնը մաքրեց երկիրը Հայկական Գրականութեան ու Արեւստին վնասողներէն, Հայ գրողներն ու արեւստագէտները հալածանքի ենթարկողներէն:

Ո՛չ տեղ եւ ոչ ալ վարելիութիւն կա մի առ մի թւելու Հայաստանի գրողներու եւ արեւստագէտներու անունները եւ անդրադառնալու անոնց մեծարժէք ստեղծագործութիւններու գեղարեւստական եւ հասարակական բովանդակութեան շուրջ: Այդ մենք կը թողունք մէկ ուրիշ առիթի:

Բայց, 20-րդ տարեդարձի առիթով, մեր պարտքը կը համարենք դոնէ յիշատակել անունները այն ականաւոր մարդոց, որոնք մեր գրականութեան եւ արեւստի ՆՈՐ ՈՍԿԵԴԱՐԸ կը կերտեն:

* * *

Հայաստանի գրողները կը զլխաւորէ Հայկական Գրականութեան վարպետ Աւետիք Իսահակեանը, զոր Խորհրդային Հայաստանի ամբողջ ժողովուրդը կը սիրէ այնպէս, ինչպէս Խորհրդային Միութեան ժողովուրդը կը սիրէր Մաքսիմ Գորկին:

ԳՐՈՂՆԵՐ

Այնուհետեւ, գրական հին սերունդի ամենակարեւոր ներկայացուցիչները, Արազին, Դերենիկ Դեմիրճեանը, Ստեփան Զօրեանը, Միքայէլ Մանուէլեանը, եւ ուրիշներ, — տակաւին կանգնած են գրական ճակատի պատնէշներու վրա: Զանոնք յիշուի կարելի է կոչել Խորհրդային գրողներ, որոնք իրենց գրականութեան հարուստ փորձը օգտագործեցին լիարժէք գործեր տալու Խորհրդային գրականութեան: Անոնցմէ ոմանք Խորհրդային շրջանին շատ աւելի գործեր արտադրած են, քան անկէ առաջ, իրենց կեանքի ամբողջ տեւողութեան: Անոնք տակաւին կը պահեն իրենց ստեղծագործական թափը: Դերենիկ Դեմիրճեանը, օրինակ, այս տարի տւած մէկ մեծ թատերական գործ, «Հայրենի Երկիր», որ հանդիսատեսը կը համակէ օտար ներխուժողներու դէմ հայրենիքը պաշտպանելու բարձր հայրենասիրութեամբ:

Եւ ապա մենք կարող ենք թւել շարք մը նոր գրողներ, որոնք արդէն գրաւած են իրենց արժանաւոր տեղը մեր գրականութեան մէջ, ինչպէս օրինակ Սիրասը («Զգրւած Օրէնք») մեծ վէպի հեղինակը), Նաիրի Զարեանը, Գեղամ Սարեանը, Մարմենը, Տարոնցին, Հովհաննէս Պողոսեանը, Արաքսը, Աղաւնին, Մարտ Մարգարեանը, Յովհաննէս Շիրազը, Գուրգէն Բորեանը, Արամունին, Ստաֆին, Գարեգին Բեւը, Արտ. Շահբազը, Կուսմունին եւ ուրիշներ:

Մինչդեռ նախա-Խորհրդային շրջանին կը կարծէր, որ Զիվանին վերջին ներկայացուցիչն է աշուղական գրականութեան, Խորհրդային իշխանութեան 20 տարիներուն բազմաթիւ տաղանդաւոր աշուղներ երեւան եկան հաւաքական ազարակներու մէջ, որոնք Խորհրդային դարաշրջանի դիւցազնավէպը հիւսեցին:

Բազմաթիւ տաղանդաւոր աշուղներէն մէկն է, օրինակ, աշուղ Գրիգորը, որ անդամ է Հայաստանի Փարլամենտի, եւ որ, հակառակ կոյր ըլլալուն, կը պատկերացնէ Խորհրդային յաղթական վերելքը իր երգերու մէջ:

Հայաստանի արեւստաղէտներու նահապետը կը հանդիսանա փանոս Թերլեմեզեանը, որ Ամերիկայէն դնաց Հայաստան՝ Հայ Ժողովրդի պանծալի ազգային վերածնունդին իր մասնակցութիւնը բերելու վճռականութեամբ: Եւ բերաւ ալ: Թերլեմեզեանը առաջինն

ՆԿԱՐԻՉՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՆԵՐ

էր Խորհրդային նկարիչներու մէջ, որ նկարեց Հայաստանի բանուորները, առաջինը, որ նկարեց Սթալինինը - փարաշութիստներու վայրէջքը դիտած ատեն:

Հայաստանի մէջ իր ստեղծագործական լայն աշխատանքներով աչքի կը զարնէ Մարտիրոս Սարեանը, Համաշխարհային նկարիչ մը բառին բովանդակ իմաստով, փնտուած արեւստաղէտ մը ամբողջ Խորհրդային Միութեան մէջ:

Հին սերնդի ոչ նազ աչքի ընկնող ներկայացուցիչներն են Վ. Գայֆեջեան, Ս. Առաքելեան, Վրթանես Ախիկեան, Ստ. Աղաջանեան, Գ. Գիւրճեան, Յակոբ Կոչոյեան:

Հին վարպետներու կողքին հանդէս կուգան նոր նկարիչներ եւ արձանագործներ, զորս կը գլխաւորէ Արա Սարգիսեանը, երկասարդ արձանագործ մը, որու յուշարձաններն ու կիսանդրիները կը զարգարեն բազմաթիւ հրատարակներ եւ հասարակական սրահներ: Նորերու մէջ աչքի կը զարնեն նաեւ Միքայէլ եւ Սերգեյ Արուստեանները (յատկապէս թատերական նկարչութեան մէջ), Ստ. Թարեանը, Ուրարտուն, Ստեփանեանը (արձանագործներ), Տ. Խանչ վանքեանը, Արարատ Ղարիպեանը, Գոհար Ֆերմանեանը (նկարիչներ):

Հայ Ժողովուրդը միշտ ալ սիրած է երգը եւ բանաստեղծութիւնը, եղեր է երգի եւ բանաստեղծութեան լաւագոյն հաւաքական ստեղծիչը, տւած է յայտնի բանաստեղծներ, երգիչներ, երաժշտա-

ԵՐԱԺՇՏԱԳԷՏՆԵՐՆ ՈՒ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ

կերաժշտանոց եւ ոչ ալ օփերա:

Հայաստանի Երաժշտանոցը մեծ խնամքով կը հաւաքէ դարաւոր մեր երաժշտութեան թանկարժէք բեկորները, ինչպէս նաեւ ժամանակակից հայ երաժշտաղէտներ Կարա Մուրզայի, Չուհաճեանի, Կոմիտասի, Սպենդիարեանի, Սպիրիտոն Մելիքեանի, Ռոմանոս Մելիքեանի եւ ուրիշներու երաժշտական հարուստ ժառանգութիւնը՝ Հայկական երաժշտութեան եւ երգի հետագա զարգացման որպէս լաւագոյն գրաւական:

Հայաստանի Խորհրդայնացումէն քսան տարի յետո, այսօր արդէն Երեւանն ունի իր հանրապետական երաժշտանոցը, իսկ Լեւոնականն ու Կիրովականը (1) նոյնպէս ունին երաժշտական դըպրոցներ:

Հայաստանի Խորհրդայնացումէն քսան տարի յետո այսօր, Հայաստանն ունի իր Օփերայի եւ Պարերգի թատրոնը, որ աշխարհի հազարթիւ հաստատութիւններէն մէկն է իր ճարտարապետութեամբ, շքեղութեամբ եւ արդիականութեամբ, եւ կը կրէ Հայկական երաժշտութեան դասական վարպետ Ա. Ա. Սպենդիարեանի անունը:

Այսօր Հայաստանի կոմպոզիտորներու (երգահաններու) միութիւնը ունի 40 անդամ, իսկ արթիստներու միութիւնը 400 անդամ:

Այս 40 եւ 400 թիւերը, 440 ծանր հրետանիներու պէս կոչնչացնէ Հայ Ժողովրդի թշնամիներու այն վատանուն սուտը, թէ Հայաստանի մէջ մտաւորականութիւն չէ մնացած:

Կոմպոզիտորներու հին սերնդի ուրիշ յայտնի ներկայացուցիչներն են Նիկողայոս Տիգրանեանն ու Արմէն Տիգրանեանը:

Հայաստանի Օփերայի եւ Պարերգի թատրոնը, բացի օտար մեծ վարպետներու գործերէն, բեմադրած է Ալեքսանդր Ա. Սպենդիարեանի «Ալմաստ»ը, Արմէն Տիգրանեանի «Անուշ»ը, Հարո Ստեփանեանի «Քաջ Նազար»ը, «Մասունցի Դաւիթ»ը եւ «Լուսաբացին»ը, վերջինի նիւթը առնւած է Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) աշխատաւորութեան դաշնակ վարչաձեւի դէմ 1920 Մայիսին կազմակերպած ապստամբութենէն:

Քսան տարւա մէջ այսքան մեծ թւով ինքնուրոյն օփերաներ ստեղծել, այդ բացառիկ երեւոյթ է, որ յատուկ է միայն Խորհրդային Ժողովուրդներուն:

Օփերայի եւ Պարերգի թատրոնը ունի 120 հոգինոց երգչախումբ, 100 հոգինոց նազախումբ եւ բազմանդամ պարախումբ, որոնք անթերիօրէն կը կատարեն ամենազօւարին երոյթներ:

Հայաստանի երաժշտաղէտներու մէջ հին սերնդի ներկայացուցիչներէն աչքի կը զարնէ Անուշաւան Տէր Դեոնդեանը, իսկ նոր

(1) Կիրովականը 18,000 բնակչութիւն ունեցող փոքր քաղաք է, բայց երաժշտական դպրոցը ունի 250 աշակերտ:

սերնդի ամենալայտնի ներկայացուցիչն է Արամ Սաչատրեանը, որու հիասքանչ մէկ ստեղծագործութիւնն է «Քերթւած Սթալինի» մասին երաժշտութիւնը: Անոր գործն է նաեւ առաջին Հայկական պարերգը, «Նըջանկութիւն», որ ամբողջ Սորհրդային Միութեան մէջ ընդունւած գործ է: Սաչատրեանի շատ մը գործերը ոչ միայն Սորհրդային Միութեան, այլ նաեւ արտասահմանեան շատ մը համերգներու յայտագրերու մէջ կը մտնեն:

Հայաստանի յայտնի նոր կոմպոզիտորներէն են Կ. Յարութիւնեանն ու Ա. Դալուխանեանը:

Հայաստանի յայտնի երաժշտական խմբավարներէն է Մելիքբաշաեանը, որ կը վարէ նաեւ Մոսկվայի Մեծ Օփերայի աշխարհահռչակ երաժշտախումբը:

Հայաստանի երաժշտական խմբավարներու մէջ ուշագրաւ տեղ կը զբաւեն Արամ Տէր Յովհաննէսեանը, Ազատ Մանուկեանը, Թ. Ալթունեանը: Ժողովրդական պարերու խմբավար է՝ Է. Մանուկեան:

Օփերայի յայտնի բեմադրողներ են Ա. Բուրջալեանը, Միքայէլ Թաւրիզեանը: Օփերայի դիրեկտորներ են Գէորգ Բուրազեանը, Կիմիկ Յովհաննէսեանը:

Հայաստանի Օփերայի նշանաւոր երգիչներն են Լեւոն Լիսիցկին (Յովհաննէսեան), Հայկանուշ Դանիէլեանը, Շարա Տալեանը, Տաթևիկ Սաղանտարեանը (Ալմաստի յայտնի դերակատարը), Պապել Լիսիցեանը (Իշխան Թադուլի դերակատարը Ալմաստ Օփերայի մէջ), Արաքսի Անանեանը, Վ. Գիճսէլնիկովը, Գ. Գաբրիէլեանը (Աշուղի դերակատար Ալմաստ Օփերայի մէջ), Թամարա Շահինեանը, Մարիանէ Տալեանը, Արսէն Աւագեանը, Թամարա Բեչանեանը, Էլենա Ֆանարջեանը եւ բազմաթիւ ուրիշներ:

Ոչ-օփերայիկ երգչուհիներու մէջ աչքի կը զարնէ Շողիկը, որ կը համարուի Հայ Ժողովրդական երգերու վարպետ, հակառակ իր շատ երիտասարդ ըլլալուն:

Հայաստանի երաժշտական արւեստի մէջ նշանաւոր դեր կը կատարէ Հայկական Ժողովրդական Նրգի եւ Պարի Սումբը, որ կը բաղկանա 65 հոգիէ եւ պարզեւատրւած է Սորհրդային Միութեան Աշխատանքային Կարմիր շքանշանով: Այդ խումբը երոյթներ կուրենա արւեստի այնպիսի յայտնի կեդրոններու մէջ, որպիսիքն են Մոսկվան, Լենինկրատը, Օտեսան, Պապուս, Թիֆլիսը:

Իր գեղարւեստական գործունէութեամբ յայտնի է նաեւ Ֆիլհարմոնիան:

Սորհրդային Միութեան երկու առաջնակարգ քառեակներէն մէկն է Կոմիտասի անուան Հայկական Քառեակը, որու անդամներն

են. — Ա. Գաբրիէլեանը, Ն. Պալապանեանը, Մ. Տէրեանը եւ Ս. Ասլամազեանը:

Հայաստանի երաժշտագէտներու մէջ առաջնակարգ տեղ կը զբաւեն Արւեստի Վաստակաւոր Գործիչ Փրոֆեսոր Կուչմարով, որ Լենինկրատի երաժշտանոցի Փրոֆեսոր է:

Սօսելով անցեալ տարի Մոսկվայի մէջ կազմակերպւած Հայկական Արւեստի Տասնօրեակի մասին, Անուշաւան Տէր Աւետիսեանը կը գրէ. —

«Հայկական Արւեստի Տասնօրեակը կարեւոր դէպք մը եղաւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան երաժշտական կեանքի մէջ: Այդ ցայց տուաւ մայրաքաղաքի ժողովրդին մեծ ու նոր արւեստը, որ կառուցւած է Հայ ժողովրդի հին մշակոյթի հիմքերու վրա»:

Քսան տարի առաջ Հայ Ժողովուրդը չէր կրնար երեւակայել անգամ շարժանկարային արւեստ ստեղծելու մասին: Ամբողջ երկրի մէջ չկար շարժանկարային մէկ հասիկ թատրոն: Այսօր, սակայն, Սորհրդային Իշխանութեան 20-րդ տարին, մենք հպարտութեամբ կրնանք ներկայացնել Հայաստանի շարժանկարային արւեստը աշխարհի բոլոր ժողովուրդներուն:

ՍԻՆԵՄԱՆ

Սորհրդային Հայաստանի շարժանկարային արւեստը կը զլիսուորէ Ա. Բեկնազարեանը, տաղանդաւոր բեմադրող մը համաշխարհային չափանիշով: Բեկնազարեանի ղեկավարութեամբ նկարւած են շարք մը յայտնի Ֆիլմեր «Նամուս» «Պեպո», «Չանդեղուր»: Այդ երեք Ֆիլմերը կը ներկայացնեն Հայաստանի ժողովրդի ապրած երեք տարբեր շրջանները: Վերջին Ֆիլմը կը ներկայացնէ քաղաքացիական կռիւները Չանդեղուրի մէջ, այն կռիւները, որոնք վերջացան դաշնակներու վերջնական պարտութեամբ եւ անոնց արտասահման փախուստով:

Հայաստանի շարժանկարային ուսուցիչներն են՝ Ն. Դուկորը «Սեւանի Չկնորներ» Ֆիլմը կազմակերպողը. Ս. Գէորգեանը, «Լեւոնային Արշաւ» Ֆիլմը կազմակերպողը. Մ. Պալապատը, «Քարտէզի Վրա Չկա» սրամիտ Ֆիլմը կազմակերպողը. Պ. Բարխուդարեանը, որ Ս. Գէորգեանի հետ կազմակերպած է «Լեւոնային Հեղեղ» Ֆիլմը. Լ. Արտաշանեանը, կենդանացած ծաղրանկար Ֆիլմերը բեմադրողը (անոր մէկ գործն է ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ մանկական Ֆիլմը):

«Այս տարի արդէն կը վերջանա Հայ Ժողովրդի այնքան սիրելի «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹԻ», հազարամեա դիւցազներգութեան այդ հերոսի փառայեղ մէկ Ֆիլմը», ինչպէս մեզի կը հաւաստիացնէ «Մոսկվա Նիւզ»ի աշխատակից Միլլերը:

Հայաստանի մէջ շարժանկարի աչքի դարձող դերասան եւ դերասանուհիները համարեա թէ թատրոնի արւեստագէտներն են:

Պետական թատրոնի արւեստագէտներէն Հրաչեա Ներսիսեանը, Աւետ Աւետիսեանը, Վ. Վաղարշեանը, Յասմիկը եւ ուրիշներ մեծ յաջողութիւններ ձեռք բերած են Հայաստանի շարժանկարային արւեստի ասպարէզի մէջ՝ բնաւ չխղւելով թատերական բեմէն:

Այս տարին չվերջացած, Երեւանի Շարժանկարային Սթուտիոն պիտի արտադրէ 25 նոր Ֆիլմ՝ ժամանակակից նիւթերու շուրջ: Այդ Ֆիլմերը պիտի պատկերացնեն Հայաստանի նոր կեանքը, նոր մարդիկը:

Սթուտիոն ձեռնարկած է պատրաստելու Հայ մեծ յեղափոխական դործիչներ Ստեփան Շահումեանի եւ Սուրէն Սպենդեկեանի, Հայ ժողովրդի մեծ լուսաւորիչ եւ աշխարհաբար գրականութեան հիմնադիր Խաչատուր Աբովեանի եւ Հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասի կեանքերը պատկերացնող հիանալի Ֆիլմերու պատրաստութեան:

Ծրագրի յաջորդական Ֆիլմերն են.— Դաւիթ Բեկ, Քաջ Նազար, Պաշտպանութեան Ամբուլիւն, Խորհրդային Միութեան Հերոսները, Կառավարութեան անդամ, Մեծ Քաղաքացին, Տէրտէրն ու Այծը (գունաւոր Ֆիլմ), Կախարդական Գորտը (ժողովրդական հեքեաթ):

Ի վերջո, կը պատրաստուի «Բերկրանքի Երկիրը» Ֆիլմը, որ նւերւած է Հայաստանի Խորհրդայնացման 20-րդ տարեդարձին եւ որ պիտի պատկերացնէ Խորհրդային շինարարութիւնն ու մեր ժողովրդի բերկրալի կեանքը:

Շարժանկարային Սթուտիոյի վարիչն է Գ. Յովհաննիսեանը:

* * *

Հայաստանի ժողովրդի մշակութային դարգացման մէջ ահագին դեռ են խաղացած թատրոնը եւ շարժանկարային թատրոնը:

ԹԱՏՐՈՆԸ

Այդ տեսակէտէն ապշեցուցիչ յաջողութիւններ են ձեռք բերած:

Հայաստան, ուր նախա-Խորհրդային շրջանին մէկ հատիկ մնայուն թատրոն չկար, այսօր կարելի է ըսել, պատւած է թատրոններու եւ շարժանկարային թատրոններու կողմ ցանցով մը:

Միայն Երեւանի մէջ կան 6 խոշոր թատրոններ, — Սունդուկեանի անւան Պետական Առաջին թատրոնը, Սպենդիարեանի անւան Օփերայի եւ Պարերդի թատրոնը, Ռուսական, Ադրբեջանական, Տիկնիկային եւ Պատանի Հանդիսատեսի թատրոնները: Երեւանն ունի իր կրկէսը, ուր աչրոպատիկ ներկայացումներ կը տրւին: Լենին-

նականի մէջ հաստատուած է Պետական Երկրորդ թատրոնը: Կա Ամո Խարդեանի անւան մէկ շրջիկ թատրոն: Այս բոլորէն զատ կազմակերպւած են 15 շրջանային մնայուն թատրոններ:

Հայաստանի շարժանկարային թատրոններու թիւը կը հասնի 239-ի:

Թէ Հայաստանի թատրոններն ու շարժանկարային թատրոնները ինչպէս լայնածաւալ գործունէութիւն ունին, այդ մասին կը վկայեն հետեւեալ տւեալները.—

Այս տարի, միայն Երեւանի Պետական թատրոնը տւաւ 209 ներկայացում եւ զգալիօրէն ընդարձակեց իր խաղացանկը:

Անցեալ տարւա առաջին վեցամսեակին Երեւանի թատրոնները տւած են 710 ներկայացում, որոնց ներկա եղած են 268,000 մարդիկ:

Երեւանի թատրոնները ամեն օր կապասարկեն ոչ նւազ քան 3 հազար հանդիսատեսներու:

Տարւա մը ընթացքին Երեւանի շարժանկարային թատրոնները յաճախողներու թիւը կը հասնի միլիոններու:

Հայաստանի կառավարութիւնը նախանցեալ տարի Երեւանի թատրոններուն յատկացուցած էր 6,000,000 ռուպլի պիւտձէ, իսկ անցեալ տարի՝ 6,580,000 ռուպլի:


Հայաստանի թատերական արւեստի մէջ աչքառու տեղ կը գրուէ համաշխարհային դերասան Վահրամ Փափաղեանը, Շեքսպիրեան խաղերու, յատկապէս Օթելլոյի այդ աշխարհահռչակ կատարողը:

Խորհրդային յայտնի բեմադրող Ռ. Սիմոնովը, որ ունի իրեն յատուկ թատերական դպրոցը Մոսկվայի մէջ, կը կրէ Ռուսաստանի Խորհրդային Ֆետերատիվ Սոցիալիստական Հանրապետութեան վաստակաւոր արթիստի տիտղոսը եւ Հայկական Արւեստի Տասնօրեակի կազակցութեամբ պարգեւատրւեցաւ Լենինի շքանշանով:

Հայաստանի վաստակաւոր բեմադրողներն են Գուլլակեանը, Վ. Աճեմեանը եւ ուրիշներ:

Հայաստանի դերասաններու ամենայայտնի ներկայացուցիչներն են դերասանուհի Յասմիկը, Գրիգոր Աւետիսեանը, որոնց բեմական գործունէութեան 50-րդ տարեդարձը տօնւեցաւ, դերասան Վ. Վաղարշեանը, Աննիկ Մկրտիչեանը, Արուս Ոսկանեանը, Հրաչեա Ներսիսեանը, Աւետ Աւետիսեանը, Օրի Բունեաթեանը, դերասանուհի Ռ. Վարդանեանը, Օլիա Գիւլպեանը, Միքայէլ Մանուէրեանը եւ բազմաթիւ ուրիշներ, որոնց նոյնիսկ անունները թւելու հնարաւորութիւն չկա:

Խորհրդային Հայաստանի թատրոնները մեծ յաջողութեամբ բեմադրած են Հայ եւ օտար դասական գրողներու յայտնի գործերը եւ օգնած են Խորհրդային գրողներուն տալու թատերական արժէքաւոր նոր գործեր:



ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆ

Հայ ժողովրդի Մեծագոյն Զաւակը, որ Խորհրդային Միութեան Փոխ-Վարչապետն ու Արտաքին Առեւտրի ժողովրդական Կոմիսարն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԻԱՃՈՒՄՆԵՐԸ

Մինչեւ 1936 թւականը, Խորհրդային Հայաստանը Խորհրդային Միութեան մէջ կը մտնէր Անդրկովկասեան Ֆեոտերացիայի միջոցով: Ինչո՞ւ կազմւեցաւ եւ ինչու լուծւեցաւ Անդրկովկասեան Ֆեոտերացիան: Այդ հարցի յտակ պատասխանը ստանալու համար, պէտք է գոնէ շատ հարեւանցի ակնարկ մը նետել Անդրկովկասի անցեալի վրա:

Տակաւին 1905-ին, Անդրկովկասի Ադրբեջան, Վրացի եւ Հայ զիւղացիութիւնն ու բանւորները արձագանգ տւին Ռուսաստանի մէջ բռնկած յեղափոխական շարժումներուն:

Անդրկովկասեան ժողովուրդներու յեղափոխական այդ տրամադրութիւնները իրենց ամենամարտական արտայայտութիւնը գրասած են բանաստեղծ Յակոբ Յակոբեանի հետեւեալ տողերու մէջ.—

Հե՛յ, ձեզ մատաղ բանւոր տղերք
Մէկ էլ, մէ՛կ էլ մի գարկ տւէք,
Մի գարկ տւէք Յարի գահին,
Որ խորտակի նա հիմնովին:

Այդ ժամանակ ցարական բռնակալութիւնը Անդրկովկասի մէջ յեղափոխութեան ուժը ջլատելու միակ կերպը կը գտնէր միջցեղային հակամարտութիւններ եւ ջարդեր ստեղծելու մէջ: Դաշնակցական կուսակցութիւնը փոխանակ մերկացնելու ցարիզմի այդ դաւերը, ինչպէս այդ կրնէին Շահումեանը եւ ընկերները, ա՛լ աւելի կը բորբոքէր ցեղային ատելութիւնն ու ջարդերը Անդրկովկասի մէջ, բնաւ ետ չմնալով Ադրբեջանի եւ Վրաստանի ազգայնամոլներէն:

Հոկտեմբերեան արեւածագը, սակայն, բորբոքեց ազգային եւ ընկերային ազատագրութեան հուրը Անդրկովկասեան ճնշած ազգութիւններու մէջ, որոնք պահ մը մոռցած մօտիկ անցեալի ատելութիւնները, սկսան առանձին շրջաններու մէջ քով քովի գալ եւ անմիջապէս ձեռնարկել տրւած շրջանը, զիւղը կամ աւանը ցարական բռնակալութեան կառավարական օրգաններէն մաքրելու եւ հողը բնակչութեան մէջ բաժնելու գործին՝ առանց ազգային խտրակալութեան:

Բայց Հայաստանի դաշնակները, Ադրբեջանի Մուսավաթիստները եւ Վրաստանի Մենշեվիկները խաբեցին Անդրկովկասեան ժողովուրդները: Օրինակելով ցարիզմի մեթոդները, անոնք յաջողե-

յան վերստին հրահրել ցեղային ատելութիւնները: Օգտագործելով Անդրկովկասեան ժողովուրդներու ազգային ազատագրութեան բուռն եւ անդուստ տենչը, անոնք յաջողեցան այդ ժողովուրդները հեռու պահել Խորհրդային Ռուսաստանէն եւ զանոնք իրարու դէմ հանել: Անդլիական նւաճողները իրենց կարգին, ամեն կերպով կը խորացնէին փոխադարձ ատելութիւնները եւ ազգամիջեան վէճերը Անդրկովկասի մէջ:

Շնորհիւ այդ իրողութեան, Անդրկովկասը վերածուած էր միջ-ցեղային ջարդերու եւ պատերազմներու արիւնոտ, ահազդեցիկ թատերաբեմի մը:

Ահա այդ պայմաններու տակ Ադրբեջանը Խորհրդայնացու 1920 թւականի Ապրիլին, Հայաստանը՝ նոյն տարւա նոյեմբերին, իսկ Վրաստանը՝ 1921 թւականի Մայիսին:

Անդրկովկասեան երկիրներու Խորհրդայնացումը ինքնին պատմական խոշոր իրողութիւն էր, որ ոչ միայն իր խոր անդրադարձումը պիտի ունենար Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի ապագայի վրա, այլ եւ համաշխարհային յետագա անցքերու վրա:

Այդ երկիրներու Խորհրդայնացումով ահարկու հարւած ստացաւ աշխարհին տիրապետելու Անդլիական կայսրութեան ծրագիրը: Անդլիան այդ կերպով իր վերջին ոտքի տեղը կորսնցուց Անդրկովկասէն, զոր կը համարէր Մերձաւոր Արեւելքի յետագա նւաճման մեկնակէտը եւ Կեդրոնական Ասիայի իր գաղթային կայսրութեան ռազմազիտական մէկ դուռը:

Անդրկովկասեան երկիրներու Խորհրդայնացումով, Անդլիան վերջնականապէս պարտուեցաւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան դէմ իր կազմակերպած միջազգային զինեալ միջամտութեան մէջ, թէեւ մինչեւ այսօր ալ չէ դադրած պատերազմական դաւեր լարելէ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան դէմ: Անգլո-Ֆրանս-Թուրք զինակցութեան պատերազմական դաւերը Խորհրդային Անդրկովկասի դէմ, դաշնակ պարագլուխներու եւ դադութեան յետադիմութեան այլ խաւերու ներկայացուցիչներու բացայայտ ջանքերը սպասարկելու այդ դաւադրութիւններուն, այժմ արդէն բոլորին յայտնի իրողութիւններ են, որոնք բացատրութեան չեն կարօտին:

Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի Խորհրդայնացումով վերանորոգուեցաւ Անդրկովկասեան ժողովուրդներու հին, աւանդական անդիր դաշինքը, զոր այնքան անդթօրէն բզկտած էին դաշնակները, մենչեվիկները եւ մուսավաթիստները՝ անսալով՝ ցարին, նւաճողական Անդլիային եւ հայրենական իրենց ընչաքաղց հողատէրերուն եւ փողատէրերուն:

Օրակարգի վրա դրւած էր Անդրկովկասեան ժողովուրդներու

վերանորոգուած այդ դաշինքը ամրապնդելու, այդ ժողովուրդներու համերաշխ դորձակցութիւնը ապահովելու հարցը: Անդրկովկասեան հանրապետութիւններու հետագա սրաթուիչ վերելքը եւ արտաքին յարձակման դէմ պաշտպանութիւնը գերադանցապէս կախուած էին անոնց եղբայրական անվերապահ համագործակցութենէն:

Եւ ահա կեանքի կոչուեցաւ Անդրկովկասեան Ֆետերացիան, որու մէջ կը մտնէին Հայաստան, Ադրբեջան եւ Վրաստան հաւասար իրաւունքներով: Շատ շանցած Անդրկովկասեան Ֆետերացիան դարձաւ Խորհրդային Միութեան 7 հանրապետութիւններէն մէկը, հանգամանք մը, որ ա՛լ աւելի հաստատուն հիմքերու վրա կը դնէր Անդրկովկասեան երկիրներու տնտեսական եւ մշակութային զարգացումը եւ անոնց պաշտպանութիւնը:

Անդրկովկասեան Ֆետերացիայի կազմութեան մէջ ղեկավար դեր կատարեցին Լենինն ու Սթալինը, աջակցութեամբ Կիրովի, Օրջոնիկիձէի, Միսանիկեանի, Միկոյեանի եւ Բերիայի:

Եւ Անդրկովկասեան Ֆետերացիան, յատկապէս Լավրենտի Բերիայի առաջնորդութեամբ հսկայական դեր կատարեց Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի կեանքի մէջ: Եւ այդ տեղի ունեցաւ հակառակ երեք հանրապետութիւններու պետական եւ կուսակցական օրդաններու մէջ որջացած դաւաճաններու ժողովուրդներու համերաշխութիւնն ու շինարարական վերելքը սապոթած ընելու անվերջ դաւադրութիւններուն, որոնք վերջ ի վերջո մերկացեցան Անաստաս Միկոյեանի եւ Լավրենտի Բերիայի գլխաւորութեամբ:

«Անդրկովկասեան Ֆետերացիան, ինչպէս «Քրական Թերթ»ը կըսէ, ա՛լ աւելի ամրացուց Անդրկովկասի ժողովուրդներու եղբայրութիւնը, ապահովեց խոշորագոյն տնտեսական եւ մշակութային նւաճումներ, առաջ քաշեց եւ դաստիարակեց ազգային ուժեր (կադրեր) աշխատանքի եւ սոցիալիստական շինարարութեան բոլոր սպարեզներու մէջ:

«Անդրկովկասեան Ֆետերացիայի այդ յաղթանակներու հիման վրա հնարաւոր կը դառնան Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հանրապետութիւններու անմիջական մուտքը Խորհրդային Միութեան մէջ»:

Անդրկովկասեան Ֆետերացիան փառաւոր կերպով կատարած իր պատմական առաքելութիւնը՝ քաջուցաւ թատերաբեմէն:

Այժմ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը Խորհրդային Մեծ Միութեան 16 իրաւահաւասար հանրապետութիւններէն մէկն է:

Եւ այդ, իր գոյութեան պանծալի քսան տարիներուն, Խորհրդային Հայաստանի կատարած քաղաքական խոշորագոյն նւաճումներէն մէկն է:

Սորհրդային Նոր Սահմանադրութիւնը, այդ Սորհրդային Միութեան բոլոր նաճումներու հանրադրումարն է: Սահմանադրութեան մէջ տրւած իրաւունքները ոչ թէ թղթի վրա խոստումներ են, այլ երաշխաւորւած են Սորհրդային Միութեան ստեղծած նիւթական բարիքներով եւ քաղաքական ու ընկերային հիասքանչ նաճումներով:

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԹԻՒՆԸ

Սորհրդային Նոր Սահմանադրութիւնը ընտրական ձեւակառուութիւնները ու կառավարական մարմիններու իրաւասութեան սահմանները ճշտող սոսկական օրինադրք մը է, ինչպիսին իր ատենին Հեմիլթընը կառաջարկէր Միացեալ Նահանգներուն:

Սորհրդային Նոր Սահմանադրութիւնը՝ քաղաքական, ընկերային, մշակութային եւ անտեսական իրաւունքներու օրինադրքն է, որպիսին գուցէ պիտի առաջարկէր 20-րդ դարուն, Թամա Ճեֆըրսընը, զարգացնելով Ամերիկեան Սահմանադրութեան վրա աւելցուցած իր պանծալի Իրաւանց Օրինադրքը:

Սորհրդային Նոր Սահմանադրութիւնը, որպէս այդպիսին կը հանդիսանա ղեմօկրատի եւ ազգերու իրաւահաւասարութեան մեծասքանչ կոթողը:

* * *

Տեսնենք, թէ Սորհրդային Նոր Սահմանադրութիւնը ինչպիսի իրաւունքներ կերաշխաւորէ անխրտիր ամեն մէկ քաղաքացիի համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՒՈՒՆՔ.— Ժողովուրդներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, պետութեան մը մէջ, որպիսին է Սորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւնը (ԽՍՀՄ), մարդու աշխատելու իրաւունքը կը դառնա օրէնք:

ՅՕԴԻԱԾ 118.— ԽՍՀՄ-ի քաղաքացիները ունին աշխատանքի իրաւունք — երաշխաւորւած աշխատանք ստանալու իրաւունք եւ վարձատրութիւն իրենց աշխատանքի համար՝ համաձայն անոր քանակի եւ որակի:

Աշխատանքի իրաւունքը կապահովի ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական կազմակերպութեամբ, ինքնաշարժային հասարակութեան արտադրական ուժերու անշեղ անումով, տնտեսական նպաստներու բացակայութեամբ եւ գործազրկութեան վերացմամբ:

ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

ՅՕԴԻԱԾ 119.— ԽՍՀՄ-ի քաղաքացիները ունին հանգիստի իրաւունք:

Հանգիստի իրաւունքը կապահովի աշխատանքի օրը բանւորներու նկատմամբ մեծամասնութեան համար եօթը ժամի կրճատելով, բանւորներու եւ ծառայողներու համար տարեկան արձակուրդներ սահմանելով, աշխատավարձը պահպանելով հանդերձ, աշխատաւորներուն սպասարկելու համար՝ անոնց տրամադրելով բուժարաններու, հանգստեան տուններու, ակումբներու լայն ցանց:

ՆԻՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

ԾԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՅՕԴԻԱԾ 120.— ԽՍՀՄ-ի քաղաքացիները նիւթական ապահովութեան իրաւունք ունին ծերութեան ժամանակ, ինչպէս նաեւ հիւանդութեան եւ աշխատունակութիւնը կորսնցնելու պարագային:

Այդ իրաւունքը կապահովի պետութեան հաշույն բանւորներու եւ ծառայողներու ընկերային ապահովութեան լայն գարգացմամբ, բժշկական ճիշտ օգնութեամբ, աշխատաւորներու օգտագործման համար տրամադրելով հանգստեան տուններու լայն ցանցը:

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ - ՆԵՐԱՌԵԱԼ

ԲԱՐՁՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՅՕԴԻԱԾ 121.— ԽՍՀՄ-ի քաղաքացիները կրթութեան իրաւունք ունին:

Այդ իրաւունքը կապահովի ընդհանուր, պարտադիր, տարրական կրթութեամբ, ճիշտ կրթութեամբ, ներառեալ բարձրագոյն կրթութիւնը, բարձրագոյն դպրոցներու մէջ սովորողներու նկատմամբ մասնութեան պետական բողոքներու յատկացման սխտեմով, դրպրոցներու մէջ մայրենի լեզուով սովորեցնելով. գործարաններու, սովորողներու, մեքենաբարձրային կայաններու եւ հաւաքտնտեսութիւններու մէջ աշխատողներու արտադրական, բեքնիքական եւ երկրագործական բեքնիքական (ագրոտեխնիկական) ճիշտ ուսուցման կազմակերպմամբ:

ԿԱՆԱՅՔ ՀԱՒԱՍՏՈՒՆ ԵՆ ԱՅՐԵՐՈՒ

ԲՈՂՈՐ ԱՍՊԱՐԷԶՆԵՐՈՒ ՄԷՉ

ՅՕԴԻԱԾ 122.— ԽՍՀՄ-ի մէջ կիներուն վերապահած է տղամարդու հետ հաւասար իրաւունքներ տնտեսական, պետական, մշակութային եւ հասարակական-քաղաքական կեանքի բոլոր ասպարէզներու մէջ:

Կանանց այդ իրաւունքներու իրագործման հնարաւորութիւնը կապահովի անով՝ որ, տղամարդու հետ համահաւասար, կնոջ վերապահած է աշխատանքի, աշխատավարձի, հանգստի, ընկերային ապահովագրութեան եւ կրթութեան իրաւունք, կապահովի մօր եւ մանկան շահերը պետական պաշտպանութեամբ, յղութեան ժամանակ կնոջ արձակուրդ վերապահելով, աշխատավարձը պահպանելով:

ներով հանդերձ, մայրանոցներու, մանկամարներու եւ մանկապարտէզներու լայն ցանցով:

ՅԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԸ ՊԱՏԺԻՒ ՕՐԷՆՔՈՎ

ՅՕԴԻԱԾ 123.— ԽՍՀՄ-ի ֆազաւացիներու իրաւահաւասարութիւնը, անկախ անոնց ազգութենէն եւ ցեղէն, տնտեսական, պետական, մշակութային եւ հասարակական-ֆազաւական կեանքի բոլոր ասպարէզներու մէջ կը հանդիսանա անխախտ օրէնք:

Քաղաքացիներու իրաւունքներու մեկ ուղղակի կամ կողմնակի սահմանափակում, կամ ընդհակառակը, ֆազաւացիներու ցեղային կամ ազգային պատկանելութենէն կախում ունեցող ուղղակի կամ կողմնակի առաւելութիւններ սահմանելը, ինչպէս եւ ցեղային կամ ազգային բացառիկութեան, կամ ատելութեան ու արհամարհանքի մասին եղած ամեն մէկ ֆարձը կը պատժուի օրէնքով:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱԶՍՈՒԹԻՒՆ

ՅՕԴԻԱԾ 124.— Նպատակ ունենալով ապահովել ֆազաւացիներու խղիւղ ազատութիւնը, ԽՍՀՄ-ի մէջ եկեղեցին բաժնուած է պետութենէն եւ դպրոցը եկեղեցիէն: Կրօնական պաշտամունքներու կատարման ազատութիւնը եւ հակակրօնական պրօպագանդի ազատութիւնը կը նանչցուի բոլոր ֆազաւացիներու վերաբերմամբ:

ԽՕՍՔԻ, ՄԱՄՈՒԼԻ, ԺՈՂՈՎԻ, ԾՔԵՐԹԻ ԵՒ ՅՈՅՅԻ ԱԶՍՈՒԹԻՒՆ

ՅՕԴԻԱԾ 125.— Համաձայն աշխատանքներու շահերու եւ սոցիալիստական իրաւակարգի ամրացման նպատակով ԽՍՀՄ-ի ֆազաւացիներու համար կերաշխատուի.—

- ա) Խօսքի ազատութիւն,
- բ) Մամուլի ազատութիւն,
- գ) Ժողովներու եւ միջիններու ազատութիւն,
- դ) Փողոցային շէքերներու եւ ցոյցերու ազատութիւն:

Քաղաքացիներու այդ իրաւունքները կապահովին աշխատանքներուն եւ անոնց կազմակերպութիւններուն տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շէնքեր, փողոցներ, փոսք-հեռագրական միջոցներ եւ նիւթական այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են անոնց իրագործման համար:

ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆԻ ՄԻՆԵՐՈՒԹԻՒՆ

ՅՕԴԻԱԾ 127.— ԽՍՀՄ-ի ֆազաւացիներու համար ապահովւած է անձի անձեռնմխելիութիւնը: Ոչ ոք կրնա ձերբակալել ուրիշ կերպ, բացի դատարանի որոշումով կամ դատախազի հաստատումով:

ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՒՈՒՆՔ

ՅՕԴԻԱԾ 129.— ԽՍՀՄ-ը ապաստանի իրաւունք վերապահած է արտասահմանեան ֆազաւացիներու համար, որոնք կը հալածուին աշխատանքներու շահերու պաշտպանութեան համար կամ գիտական գործունէութեան կամ թէ ազգային ազատագրական պայքարի համար:

Ահա այն բոլորը, որոնք ձգտել են բոլոր ժողովուրդները բոլոր երկրամասերու վրա:

Ահա Պորճրդային Հիմնական Օրէնքը, որ դաւիթ երջանիկ կեանքի մը աւետիսի պէս կը հնչէ աշխարհի հինգ ցամաքամասերու վրա, եւ պատերազմի ու բռնութեան սարսափն, ապրող մարդկութիւնը կը զօտեպնդէ վաղա երջանիկ կեանքի մը հեռանկարով:

Պորճրդային Նոր Մասմանագրութիւնը հայելին է աշխարհի մէջ վեցերորդ մասի վրա ապրող 200,000,000 մարդոց այսօրու ազատ, կենտրոնաւ եւ խաղաղ կեանքին, եւ միաժամանակ դաւիթ երջանիկ կեանքի խոստումն է աշխարհի հինգ վեցերորդ մասի վրա ապրող 1,800,000,000 մարդոց համար:

* * *

Պորճրդային Միութիւնը հիմնուած է ազգերու իրաւահաւասարութեան սկզբունքի վրա: Որքան ալ մեծ կամ փոքր ըլլան միացող պետութիւնները, անոնք Պորճրդային Միութեան մէջ կը մտնեն հասար իրաւունքներով եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն Միութեան կառավարութեան մէջ:

ԱԶԳԵՐՈՒ ԻՐԱԽԱՀԱ-ԻԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Մասմանագրութեան շարք մը յօդածները կերաշխատուին իւրաքանչիւր միութեան հանրապետութեան ղերիշխանութիւնն ու իրաւահաւասարութիւնը:

Ահա այդ յօդածները.—

ՅՕԴԻԱԾ 13.— Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւնը ֆեդերատիվ պետութիւն է՝ կազմուած... իրաւահաւասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու կամար միաւորումով»:

ՅՕԴԻԱԾ 15.— Միութեան կան Հանրապետութիւններու գերիշխանութիւնը սահմանափակուած է միայն ԽՍՀՄ-ի Սահմանադրութեան 14-րդ Յօդածի տեւելներով: Այս սահմաններէն դուրս, Միութեան կան ամեն մէկ հանրապետութիւն անկախօրէն կը գործադրէ իր Պետական իշխանութիւնը: ԽՍՀՄ-ը կը պաշտպանէ Միութեան կան հանրապետութիւններու գերիշխանական իրաւունքները:

ՅՕԴԻԱԾ 16.— Ամեն մէկ Միութեան կան Հանրապետութիւն ունի իր սեփական սահմանադրութիւնը, որը հաշի կառուէ Հանրա-

պետութեան իւրայատուկ պայմանները եւ ձեւաւորած է ԽՍՀՄ-ի Սահմանադրութեան լիովին համապատասխան:

ՅՕԳԻԱԾ 17.— Ամեն մէկ դաշնակից հանրապետութեան վերապահուած է ԽՍՀՄ-էն ազատօրէն դուրս գալու իրաւունքը:

ՅՕԳԻԱԾ 18.— Միութեանական Հանրապետութիւններու երկրամասը չի կրնար փոփոխութեան ենթարկուիլ առանց անոնց հաւանութեան:

Բայց այդ չէ բոլորը:

Պորճրդային Միութեան մէջ ազդուութիւններու իրաւահասարակութիւնը որոշողը ոչ միայն իւրաքանչիւր միութեանական Հանրապետութեան իր ներքին գործերը վարելու լիակատար անկախութիւնն է, ոչ միայն անոնցմէ ամեն մէկու առանձին սահմանադրութիւն ունենալն է, ոչ միայն անոնցմէ ամեն մէկու Պորճրդային Միութեանն ազատօրէն դուրս գալու իրաւունքն է, այլ Պորճրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան (ԽՍՀՄ) պետական իշխանութեան բարձրագոյն մէկ մարմնի մէջ անոնց հասարակ թւով ներկայացած ըլլալն է:

Մինչդեռ Պորճրդային Միութեան Գերագոյն Պորճրդի (Պորճրդային Փարլամենտի) առաջին տունը (Միութեան Պորճուրդը) կը բաղկանա իւրաքանչիւր 300,000 բնակչութեան մէջ մէկ ներկայացուցիչներէն, երկրորդ տունը (Ազդուութիւններու Պորճուրդը) կը բաղկանա միութեանական իւրաքանչիւր հանրապետութեան 10-ական ներկայացուցիչներէն: Եւ առանց Գերագոյն խորճրդի երկու տուներու հաւանութեան, չի կրնար որեւէ օրէնք անցնել Պորճրդային Միութեան մէջ եւ կամ ուրիշ քաղաքականութիւն գործադրել:

Աշխարհի ժողովուրդները միակ փրկութիւնը կը գտնեն ազդեբուն միութեան մէջ: Ո՛չ կայսերական Անգլիան կամ Նացի Գերմանիան կրնան միացնել Եւրոպան, ո՛չ ռազմամու ճափոնը կրնա միացնել Ասիան եւ ոչ ալ տոլարապետական Միացեալ Նահանգները կրնա միացնել Արեւմտեան Կիսագունդը, քանի որ անոնցմէ ամեն մէկը կուզէ իր գերիշխանութիւնը հաստատել այդ երկրամասերու մնացած ժողովուրդներու վրա... եւ ոչ թէ սպահովել այդ երկիրներու ազգային վերածնունդն ու իրաւահասարակութիւնը:

Բայց, ազգերու միութեան ձգտող Եւրոպայի, Ասիայի, Ափրիկէի եւ Արեւմտեան Կիսագունդի ժողովուրդներու համար կրնա առաջնորդ հանդիսանալ Պորճրդային Միութեան ազգային իրաւահասարակութիւնը, ինչպէս 150 տարի առաջ Ամերիկայի Անկախութեան Հռչակումն ու Իրաւանց Օրինագիծը եւ Ֆրանսական Յեղափոխութեան սկզբունքները դարձան դեմոկրատական շարժումներու ներշնչողը բոլոր երկիրներու մէջ:

Հայ ժողովուրդը իր այս անդուգական իրաւահասարակութեան կուզէին զրկել, Նացի գործակալ աջ-թրոցքիական-դաշնակ դաւաճանները, որոնք ՍանՖեանի գըլ-խաւորութեամբ, կը հետապնդէին

ՄԵՐ ՀՐԵՂԷՆ ԹՈՉՈՒՆԸ

Հայաստանի անջատումը Պորճրդային Միութեանն եւ անոր նացիացումը, որ համազօր էր Հայ ժողովրդի լիակատար իրաւազրկման եւ կործանման:

Հայ ժողովուրդը իր այս անդուգական իրաւահասարակութեան կուզէին զրկել դաշնակ պարագլուխները, դադութահայ յետադիմական ուժերու Հայկական Եռանկիւնը (Չոպանեան-Պատիսեան-Բաշալեան Առանցքը), որոնք մէկ կողմէն Ֆրանսայի Հինգերորդ Չօրասիւնայիններու հետ կը դաւադրէին Ֆրանսական Երրորդ Հանրապետութեան դէմ, միւս կողմէն Անգլո-Ֆրանս-Թուրք զինակցութեան կապասարկէին՝ Անգլիկոփկասի դէմ անոր ծրագրած պատերազմական դաւադրութիւններու մէջ:

Ո՛չ առաջինը յաջողեցաւ, ոչ ալ՝ վերջինը:

Պատմութեան մէջ, Հայ ժողովրդի ծոցի մէջ միշտ ալ գտնւեր են իժի ծնունդ դաւաճաններ, որոնք միացած նենդ թշնամիի հետ, ահուկի աղէտներ են պատճառած մեր հայրենիքին: Բնաւ զարմանալի չէ, որ Հայ ժողովրդի պանծալի ազգային վերածննդի եւ ազգային մշակոյթի նոր ոսկեղարու մէջ գտնւէին դաւաճաններ, որոնք իրենց յօժարակամ եւ նւաստ սպասարկութիւնը առաջարկէին նոյն իսկ իրենց թերթերու սիւնակներէն՝ մեր հայրենիքի արիւնուշտ թշնամիներուն:

Միակ տարբերութիւնը մեր անցեալի եւ այսօրու միջեւ կը կայանա այն իրողութեան մէջ, որ որքան ալ սեւահոգի ըլլան Հայ դաւաճանները, ինչպիսի ստոր գործերու ալ ընդունակ ըլլան Պատիսեան-Չոպանեան-Բաշալեան Առանցքը եւ դաշնակ պարագլուխները՝ անոնք ՉԵՆ ԿՐՆԱՐ ՎՆԱՍԵԼ այլ եւս Հայ ժողովրդին:

Ըստ հեքեաքի, հալածական երիտասարդ իշխան մը մի անգամ մտաւ կախարդական պարտէզը, ուր կը գտնւէր Հրեղէն Թռչունը:

Իշխանը յաջողեցաւ բռնել Հրեղէն Թռչունը, որ ուժն ունէր գիւմ պաշտպանելու աղիտներու դէմ:

Հրեղէն Թռչունը խնդրեց իշխանէն գիւմ թողուլ ազատ, չգրկել գիւմ կապոյտ երկնքի հեռուները ցախրելու իր ազատութիւնը: Ատոր փոխարէն Հրեղէն Թռչունը յանձն առաւ իշխանին տալ մէկն իր ոսկեփետուրներէն՝ պաշտպանելու համար գիւմ ճախարդութիւններու դէմ:

Իշխանը համաձայնեցաւ:

Եւ որքան ատեն որ Հրեղէն Թռչունի այդ ոսկեփետուրը հետն էր՝ իշխանի կեանքը անվտանգելի էր:

Հայ ժողովուրդը կը ձգտէր անվտանգութեան: Հայ ժողովուրդը կուզէր ձեռք բերել Հրեղէն Թոշունի թէկուզ մէկ ոսկեփետուրը:

Հրեղէն Թոշունի իր որոնումներուն մէջ, սակայն, Հայ ժողովուրդն ունեցաւ այնպիսի ապիկար, ծածկամիտ կամ դաւաճան աւազներդներ, որոնք զինքը կառաջնորդէին ո՛չ թէ դէպի Հրեղէն Թոշունը, այլ դէպի գահավեժ, դէպի տարտարոս, դէպի ազգային բնաջնջում եւ ինքնասպանութիւն:

Օրին մէկը, սակայն, յանկարծ, Հայ ժողովուրդը բոցավառեցաւ հրմուլի գոգացումով մը: Ան, յանկարծ, անհաւատալի տեսիլքի մը պէս Հրեղէն Թոշունը տեսաւ իրեն այնքան մօտ:

Փորձեց բռնել Հրեղէն Թոշունը: Բայց մաուզերը խփեց իր թեւին: Հայ ժողովուրդի մէջ որպէս փրկիչներ ծպտած չարքերը կաշկանդեցին անոր թեւը եւ նստան անոր կրծքի վրա, որպէսզի չթոյլատրեն անոր՝ հասնիլ Հրեղէն Թոշունին:

Հայ ժողովուրդը նայեցաւ Արարատին, իր տոկունութեան այդ վեհափառ խորհրդանիշին, եւ գօտեպնդւեցաւ: Հայ ժողովուրդը նայեցաւ Արարատին այնքան մօտ քախքալ Հրեղէն Թոշունին, եւ յուսադրեցաւ, հաւաքեց իր ուժերը եւ զգետնեց զինքն զգետնող իժերը եւ բռնեց Հրեղէն Թոշունը:

Փրկւեցաւ Հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը տիրացած էր իր անվտանգութեան:

Այնուհետեւ ան վիզ պիտի չծռէր ցարին եւ սուլքանին, հողատէրին եւ փողատէրին, Անգլիական սպային եւ դաշնակ մաուզերիստին: Այնուհետեւ պիտի շինէր, եւ իր շինածը ոչ ոք պիտի կրնար քանդել: Այնուհետեւ պիտի ստեղծէր բարգաւաճութիւն եւ ոչ ոք պիտի կրնար յափշտակել, թալանել, խժրել իր ստեղծած բարիքները: Այնուհետեւ Հրեղէն Թոշունի ոսկեփետուրով մատեաններ պիտի գրէր եւ ոչ ոք պիտի կրնար հրկիզել գանձնի: Այնուհետեւ պիտի չնահանջէր երկրէն վտարած դաւաճաններու եւ անարգ թշնամիի յարձակումներու առջեւ, այլ պիտի գրոհէր առաջ, դէպի նորանոր դիրքեր, ուր իր եղբայրները կսպասեն Հրեղէն Թոշունի գալստեան:

Այդ Հրեղէն Թոշունը Խորհրդային Իշխանութիւնն է, որ քսան տարի առաջ հաստատուեցաւ մեր երկրի մէջ: Եւ այսօր Հայ ժողովուրդը, բնաշխարհի թէ՛ դազթաշխարհի մէջ, բերկրալի անգուսպ հրճւանքով կը դիմաւորէ Խորհրդային Իշխանութեան 20-րդ պանծալի տարին, ՀՐԵՂԷՆ ԹՈՇՈՒՆԸ, Հայ ժողովուրդի այդ բախտաւորութիւնն ու անվտանգութիւնը ձեռքէ բաց չթողնելու վճռակալ նութեամբ:



1/3

15222



Գ Ի Ն 25 Ս Ե Ն Թ

